

ԼԻՊԱՐԻՏ ՍԱԴՈՅԱՆ

# ՄԵՍՐՈՂԱՍԵՂԾ ՀԼՅՈՐԾ ԳՐԱԴԱՏԿԵՐՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՈՅԸ ՍԿՉՐՈՒՆՔՆԵՐԸ



---

ՄԵՐՈՂԱՏԵՆՆԻ ՀԼՅՈՑ  
ԻՆՊՐԻՆՏԻ ԿԼՈՒԹՅԱՆ  
ՄԿՐՈՒՆԷՆԵՐԸ





ՀՐԱՄԱՆԱԻ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

S. S. ԳԱՐԵԳՆԻ Բ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՅԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Կ(47.925)  
21-12  
հշ

ԼԻՊԱՐԻՏ ՍԱԴՈՅԱՆ

ՄԵՍՐՈՊԱՍՏԵՂԵ ՀԱՅՈՑ

ԳՐԱԴԱՏԿԵՐՆԵՐԻ

ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ



5985

Հրատարակության պատրաստեցին՝  
S. Արարատ քին. Պողոսյան, Հայկ Սաղոյան



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին  
2018

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.23  
Ս 123

*Տպագրվում է երաշխավորությամբ  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
Հրատարակչական խորհրդի*

*Հրատարակության պատրաստեցին՝  
Ս. Արարատ քին, Պողոսյան, Հայկ Սաղոյան  
Խմբագիր՝ Արշակ Մաղոյան*

**ՍԱԴՌՅԱԼ ԼԻՊԱՐԻՏ**

Ս 123 Մեսրոպաստեղծ հայոց գրապատկերների կազմության սկզբունքները / Լիպարիտ Սաղոյան; Հրատ. պատր. Արարատ քին, Պողոսյան, Հայկ Սաղոյան; Խմբ.՝ Արշակ Մաղոյան. – Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2018.– 124 էջ:

Գրքում փորձ է արվում ներկայացնելու Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց ազգային գրերի տառապատկերների կազմությունը, տառանշանները կազմելու, հնչյունները պատկերավորելու սկզբունքները: Այդ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող խնդիրը լուծելու միակ ճանապարհը V-VII դարերում փորագրված վիմագիր արձանագրությունների տառերի պատկերների ուսումնասիրությունն է:

Նախատեսված է մասնագետների և ընթերցողների լայն շրջանի համար:

ՀՏԴ 811.19  
ԳՄԴ 81.23

*Տպագրվում է մեկենասությամբ  
«ՍԱՐԳԻՍ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ*

ISBN 978-9939-59-218-3

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2018

**ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**

Դ. - Ե. դարերը շրջադարձային և պատմական նշանակություն ունեցան հայ ժողովրդի կյանքում. Դ. դարասկիզբը նշանավորվեց քրիստոնեության պետական կրոն հռչակմամբ, իսկ Ե. դարը՝ աստվածապարզ Գրերի գյուտով. երկու իրողությունների հիմքում էլ Հայոց Եկեղեցին ու հայ եկեղեցականներն էին:

Դարերի ընթացքում պատմական նշալ իրադարձությունները հայի ինքնության և ազգային արժեհամակարգի միաձուլյլ անկյունաքարը դարձան, որի վրա հյուսվեց այսօրվա հայի յուրատիպ և ուրույն ինքնությունը:

Երկու իրողությունների վերաբերյալ էլ հայ պատմագրության էջերում առկա են հարուստ և բազմազան տեղեկություններ, իսկ հայ և օտար պատմագիտությունն ամ այսօր շարունակում է հրատարակել արժեքավոր ուսումնասիրություններ, հատկապես՝ Հայոց մեսրոպաստեղծ այբուբենի վերաբերյալ: Այս նյութի շուրջ ուսումնասիրությունները այնքան բազմազան են, որ հայագիտության մեջ ամառացել է նոր ճյուղ՝ մեսրոպագիտություն<sup>1</sup>:

Ահա և մեսրոպագիտության շրջանակներում հանրության ուշադրությանն ենք հանձնում հերթական նոր (իրականում՝ անտիպ) աշխատանքը: Սույն հրատարակության հեղինակն է հայտնի ճարտարապետ, շինարարական արվեստի հմուտ մասնագետ, հայերեն տառատեսակների ստեղծող Լիպարիտ Սաղոյանը (1917-1992 թթ.): Հեղինակը կյանքի վերջին տարիներին առանձնահատուկ ուշադրության ամարկա է դարձրել Հայոց այբուբենը, արժևորել է Ս. Մեսրոպ Մաշտոցի անգնահատելի դերակատարումը: Սակայն, ի տարբերություն պատմաբանների ու բանասերների՝ հեղինակը հայոց գրերի արարման պատմությունը և նրա ստեղծողի կյանքն ու գործունեությունը բնության է առել ճարտարապետին հատուկ լույսի ներքո: Նշենք, որ Լ. Սաղոյանը ծրագրել էր աշխատանքը գրել երեք մասով, ցավոք, հասցրել է գրել միայն առաջին մասը ամբողջապես, իսկ երկրորդը՝ մասամբ: Աշխատանքն ամ այսօր անտիպ էր<sup>2</sup>:

Բնականաբար, լինելով քաջածանոթ հայ ճարտարապետության պատմությանը՝ հեղինակը չէր կարող անդրադառնալ Ս. Մեսրոպ Մաշտոցի կյան-

<sup>1</sup> Գիտություն Մեսրոպ Մաշտոցի, նրա կյանքի և գործունեության, հայ գրերի ստեղծման ու հարակից հարցերի վերաբերյալ տես **Դավիթ Գյուլքինյան**, Մեսրոպ Մաշտոց անվան քաղաղորդիչներով կազմված բառերի ստեղծման ժամանակը և հեղինակները, «Էջմիածին», 2014, Բ, էջ 89:

<sup>2</sup> Միայն Ա և Բ մասերի տարբեր զլուխներից՝ Պ. Մուրադյանի խմբագրմամբ, խիստ կրճատումներով, հոդվածի տեսքով լույս է տեսել «Պատմաբանասիրական հանդեսում», տես Լ. Սաղոյան, Հայոց մեսրոպաստեղծ այբուբենը, Հայոց գրերի գյուտը, 2005, թիվ 2, էջ 58-86:

քին և գրերի ստեղծման պատմությանն այն խորությամբ, որով առաջնորդվել են հայ բանասիրությունն ու պատմագիտությունը. այս առումով նրա աշխատության առաջին մասը, որ բացառապես վերաբերում է Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքին և գործունեությանը, գրերի ստեղծման պատմությանը, նվազ կարևորություն ունի: Հեղինակը, օգտագործելով վերոնշյալ խնդրի շուրջ կատարված որոշ ուսումնասիրություններ, իր ոճին հատուկ կերպով շարադրում է այն, ինչն արդեն հայտնի է հայագիտությանը: Սակայն այս նույն շարադրանքում առկա են հետաքրքիր մոտեցումներ, վերլուծություններ, որոնք հատուկ են միայն այս հեղինակին:

Այլ է պատկերը երկրորդ մասի առնչությամբ. այն յուրօրինակ և նոր մոտեցում է, որը վերաբերում է բացառապես Հայոց այբուբենին: Աշխատության այս հատվածում հեղինակը մասնագիտական ուսումնասիրությունների, վերլուծությունների և եզրահանգումների միջոցով բնութայն է առնում տառերի գծապատկերները, քարի փորագրության առանձնահատկությունները, փորագրության ոճերը, գրամիջյան տարածությունները, ուղղանկյուն փորագրությունները, վիմագիր արձանագրությունների տեղադրությունները, միատող, առանձին, ակնառու և խառը տեղադրված արձանագրությունները: Աշխատանքի երկրորդ մասը, փաստորեն, նոր մոտեցում է խնդրո առարկա նյութին:

Աշխատությունը հրատարակության պատրաստելիս կատարվել են լեզվաոճական և սրբագրական որոշ աշխատանքներ, որոնք, սակայն, չեն հակասել բնագրին հարազատ մնալու մեր սկզբունքին: Գրքում տեղ են գտել նաև որոշ անճշտություններ, օրինակ՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան և մահվան թվականները և այլն: Այդ անճշտությունները, բնականաբար, չեն կարող ստվերել այս արժեքավոր աշխատությունը, որը, վստահաբար, ընդունելություն է գտնելու մասնագետների կողմից և իր արժանի տեղն է զբաղեցնելու հայոց գրերին ու նրա ստեղծող Ս. Մեսրոպ Մաշտոցին նվիրված ուսումնասիրությունների շարքում:

Պատեհ առիթից օգտվելով՝ մեր շնորհակալությունն ենք հայտնում Սադոյան ընտանիքին, որը սիրով Մայր Աթոռին տրամադրեց այս անտիպ աշխատությունը: Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև բոլոր նրանց, որոնց ջանքերի և օգտաշատ խորհուրդների շնորհիվ հնարավոր եղավ սույն գրքույկի հրատարակումը:

**Տ. Արարատ քին. Պողոսյան**  
Ս. Էջմիածնի Մատենադարանի և  
Հրատարակչական բաժնի տնօրեն

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Հրատարակության առիթով* ..... 5  
Մեսրոպաստեղծ հայոց գրապատկերների կազմության սկզբունքները .. 9

**ՄԱՍ ԱՌԱՋԻՆ**

Ակնարկ հայոց ազգային գրի ստեղծման պատմության ..... 17

**Գլուխ Ա.**

Երկու խոսք ..... 17  
*Հայաստանում գրերի գյուտը նախորդող շրջանի ազգային-կրոնական և պետական-քաղաքական փոխհարաբերությունների մասին*..... 17  
*Ժամանակագրական տախտակ Մեսրոպ Մաշտոցի կյանքի բոլոր դեպքերի՝ ծնունդից մինչև մահ 364-439 թթ.* ..... 24

**Գլուխ Բ.**

Մեսրոպ Մաշտոցի աշխարհական կյանքի պատմությունից ..... 26

**Գլուխ Գ.**

Մեսրոպ Մաշտոցի կրոնական կյանքի պատմությունից ..... 33  
*1. Աշակերտների ուսուցում-վարժեցում* ..... 36  
*2. Գողթան զավառում աշակերտ-օգնականներով քարույշությունը*..... 42  
*3. Ազգային գրի մտքի ծագում և այդ խնդրով Գողթնում և Վաղարշապատում միաժամանակ պարսպում*..... 47

**Գլուխ Դ.**

Մտորումներ..... 50  
*Հայոց ազգային գրի խնդրով հրավիրված կրոնական համագումար ժողովի մասին* ..... 50

**Գլուխ Ե.**

Դանիելյան նշանագրերի առեղծվածը ..... 59

Գլուխ 2.

Մտորումներ ..... 70

Մեսրոպ Մաշտոցի Միջագետք կատարած ուղևորության  
և հայոց ազգային գրերի արարման մասին..... 70

Հայոց գրերի գյուտը ..... 78

Հայոց գրերի գեղագրումը..... 87

Ամփոփում առաջին մասի..... 96

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Մեսրոպյան սկզբնաստեղծ գծապատկերների վերականգնում ..... 105

Գլուխ Ա.

Զարի փորագրության առանձնահատկությունները և գրերի  
փորագրության ոճերը ..... 107

Փորագրության ոճերը ..... 108

Գրամիջյան տարածությունների փորագրություն ..... 109

Գրերի ուղղանկյուն փորագրություն ..... 111

Գլուխ Բ.

Վիմագիր արձանագրությունների տեղադրության  
առանձնահատկությունները ..... 115

Միատող արձանագրություններ..... 116

Առանձին տեղադրված արձանագրություններ ..... 117

Շիկության ակնառու մասերում տեղադրված  
արձանագրություններ..... 118

Խտուղ տեղադրված արձանագրություններ ..... 119

[ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ]..... 123



ՄԵՍՐՈՊԱՍԵՂԵ ՅԱՅՈՅ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԲՈՒՆԵՆԵՐԸ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այս քաղաքի կառուցման համար հայ, վրաց և աղվան քրիստոնյա ժողովուրդների ազգային ինքնուրույն գրերի ստեղծողի՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, որն ինքնին մի պայծառ իրողություն է, (մշակութային հեղաշրջման ճանապարհով միավորել հայ ժողովրդին և պահպանել ազգային ինքնուրույնությունը), այն աստիճան է առաջ տալիս հայագիտությունը, որ ուսումնասիրությունների մի առանձին, նշանավոր ճյուղ է կազմում, և իրավամբ «Մեսրոպագիտություն» է կոչվում:

Այնպիսի քան մեկ հարյուրամյակ մեսրոպագետ հետազոտողների աշխատություններում ակնառու և ոչ սակավ գիտական ձեռքբերումներ են արձանագրվել՝ Մեսրոպ Մաշտոցի գործունեության ժամանակաշրջանում հայերի, պարսիկների, հույների և ասորիների միջև եղած ազգային-կրոնական, պետական-քաղաքական փոխհարաբերություններում ծանրացած խրթին հարցերի վերծանումներում: Կատարվածն ակնհայտ է և ուսանելի:

Սակայն պակաս կարևոր չեն դեռևս չլուծված այն հարցերը, որոնք վերաբերում են հատկապես հայոց գրերի պատկերների, տառանշանների կազմության մեսրոպյան սկզբունքներին: Պարզված չեն առհասարակ գրերի գյուտին նախորդող շատ հարցեր, որոնց պարզաբանումներն անհրաժեշտ են հանճարեղ գրաստեղծի գիտաստեղծագործական ուրույն հորինումները ճանաչելու և կատարվածն անսխալ գնահատելու համար: Մեսրոպաստեղծ հայ գրերի պատկերների և՛ կազմությունը, և՛ ընդհանրությունը քննող առանձին աշխատանք առ այսօր դեռևս կատարված չէ: Բնավ ուսումնասիրված չէ, թե գրաստեղծն ի՞նչ հիմունքներով է պատկերավորել հայոց բանավոր լեզվի հնչյունները: Կա՞ն արդյոք նախապես մտածված համապատասխանեցումներ՝ հնչյունների և նրանց

տրված պատկերների միջև: Եթե գրերի ստեղծման երկու առանցքային հարցերից առաջինը՝ բանավոր լեզվի հնչյունական համակարգի ամբողջական բացահայտումն է, նրա «ձայների» լիակատար հայտնաբերումը, ապա երկրորդը՝ հայտնաբերված հնչյունների պատկերավորումն է և տառանշանների կազմելը: Առաջինն ապահովում է բանավոր լեզվի գրավոր արտահայտությունը, իսկ երկրորդը՝ գրերի գյուրընթեռնելիությունը: Հետևապես, տառանշանների պարզ ու դյուրին, տպավորիչ ու գեղանկար գծագրությունից զատ կարևոր գործնական նշանակություն ունի հնչյուն-տառանշան կամ ձայն-պատկեր կապակցությունը, նրանց այնպիսի փոխհամապատասխանեցումը, որն ապահովի ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԸՆԴՅԱՆՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՌԱՆՇԱՆԻ ՅԱԿԱՍԱՐԱՍՏԻՃԱՆ ԸՆԹԵՌՆԱՄԱՆ ՅԼԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՆԿԱՍՆ ԵՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՅԱՃԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Հակառակ պարագայում գրերը կատարյալ լինել չեն կարող: Ահա այս գործնական նշանակության հարցի պարզաբանումն է, որ վրիպել է մեսրոպյան հայ գրերի պատկերների կազմությունն ուսումնասիրողների ուշագրությունից և երբեք հատուկ քննություն չի առնվել, իսկ եթե ուսումնասիրողներն, այնուամենայնիվ, անդրադարձել են մեսրոպյան գրերի ձևերին, այս կամ այն տառանշանի սոսկ գծանկարին և ոչ ընդհանուր պատկերակազմության սկզբունքներին, ապա նրանց քննությունները տարվել են մեծավասամբ համեմատությունների ճանապարհով նմանություններ տեսնելու և պատահական նմանությունների միջոցով (երբեմն և անհարկի ձևափոխումներով նմանեցնելով) գյուտը գնահատելու սխալ ուղղությամբ: Ուսումնասիրման այդ եղանակը ոչ միայն ի գորու էլ կատարվածը ճանաչելու, այլև ընդհանրապես մերժում է հորինում-ստեղծում կամ արարում ասվածը: Մեսրոպաստեղծ գրերի ծագումը քննողներն այն աստիճան հակասական և իրարամերձ կարծիքներ են հայտնել, այնքան միմյանցից տարբեր ու հեռավոր «սկզբնաղբյուրներ» են առաջարկել, որ խնդիրը պարզվելու փոխարեն խճճվել և գրեթե անլուծելի է դարձել, իսկ գյուտը վերագրելով սոսկ հավաքական, ընդօրինակման գործի՝ դրանով իսկ շնորհագրվել են հանճարեղ գրաստեղծին:

Ակադ. Հր. Աճառյանն իր «Հայոց գրերը» հանրագիտարանային ծավալուն աշխատության մեջ ժամանակագրական կարգով քննության է առել մեսրոպյան գրերի ծագման խնդրին անդրադարձած գրեթե բոլոր, թվով 38, իր իսկ խոսքով «նոր քննիչների» կարծիքները և ներկայացրել է նրանց առաջարկած «այբուբենների հիշյալ ճոխ շարքը», որոնցից օգտվել է Մեսրոպ Մաշտոցը՝ գրերի նշանները կազմելու համար:

«Ահա սրանք են նոր քննիչների կարծիքները, որոնք էթն միասին ամփոփենք, կատանանք, որ հայ գրերի ծագումը՝ ամբողջապես կամ մասամբ՝ դրվում է անկախ կամ հին հնայական նշաններից և կամ հին պարսիկ քետազրերից, հին (բաղդակյան), կամ նոր (ասասնյան) պահլավերենից, վանդերենից, նոր

պարսկերենից, փյունիկերենից, պալմիրականից, արամերենից, Էսթրանգելա գրից, ասորերենից, դպտիերենից, եթովպերենից, կամ հունարենից»<sup>1</sup>:

Արդյո՞ք գրաստեղծը կարիք ուներ և կամ ստիպված էր Միջագետքում և այլուր երկար շրջագայություններ կատարել, դարեր առաջ գործածությունից դուրս ընկած գրեր որոնել, հնագրություն ժողովել (նույնիսկ իրենից հետո առաջացած գրերից օգտվել), որպեսզի իր տառերի նշաններն ընտրեր: Երբ, եթե կամենանք, կարող ենք այդ նույն նշանները, այն էլ ոչ քիչ թվով և տարբեր նկարվածքներով, հանել Մաշտոցից հաղարամյակներ առաջ փորագրված Արագածի, Գեղամա և Սյունիքի լեռների ժայռապատկերներից: Այդպիսի մոտեցումը նշանակում է ամենեկին հաշվի չառնել գրերի ստեղծման հիմնական և համահավաք պահանջները, միմյանց փոխկապակցված գործնական նշանակության խնդիրները, ինչպես նաև գրաստեղծի հնարավորությունները, առկա միջոցները և, հատկապես, ժամանակի թե՛ ազգային, թե՛ քաղաքական պահանջները, այլ՝ ելնել միայն նշանների սոսկ նմանության, երբեմն և բռնի անհիմն հարցադրումից: Այդ եղանակին ապավինած ուսումնասիրողների ոչ ճիշտ եզրահանգումների և հատկապես նրանց կողմից մեսրոպյան տառապատկերների հիմքը պարզելու միտումով կատարած կամայական ձևափոխումների առթիվ է ակադ. Լ. Խաչիկյանը ոչ անվրդով գրում. «Եղել են ու այժմ էլ կան գիտնականներ, որոնք ճգնել ու ճգնում են աշխարհում գոյություն ունեցած բոլոր այբուբենների տատանների մեջ (հաճախ դրանք վերից վար կամ աջից ձախ ու ձախից աջ շրջելով ու վանապան ձևափոխումներ կատարելով) գտնել հայերենի այս կամ այն տառը հիշեցնող մի նշան և, պատահական նմանությունների հիման վրա, որոշել մեր այբուբենի կամ նրա տառերի մի մասի «սկզբնաղբյուրը»»<sup>2</sup>:

Գիտնականի հանդիմանական երանգ ունեցող խոսքը կատարվածի ընդհանրացնող բնութագիրն է: Որպեսզի պատկերացնենք, թե ինչպիսի նշանակություն է տրվել, ավելի ճիշտ, որքա՞ն անկարևոր է համարվել տառաձևերն ուսումնասիրողների կողմից հնչյունների պատկերավորումը, տառանշաններ կազմելու յուրահատուկ խնդիրը, բերենք ակադ. Գ. Սևակի հայտնած կարծիքն այդ մասին. «Լեզվի հնչյունական համակարգը ճիշտ որոշելը գործի նախնական և վճռական մասն է. դրանից հետո կարելի է արդեն սահմանված հնչյունները նշանակել ամեն տեսակի պայմանական նշաններով, ասենք՝ թվանշաններով, կետ ու գծով և այլն: Կարելի է օգտագործել որևէ լեզվի այբուբեն և ավելացնել լրացուցիչ տառերի համար պատահական նշաններ, կարելի է լրացուցիչ նշաններ վերցնել ուրիշ լեզուների այբուբեններից»:

<sup>1</sup> Հր. Աճառյան, Հայոց գրերը, խմբ. Էդ. Աղայանի. Պետական համալսարանի հրատարակչություն (ԵՊՀ), Երևան, 1984, էջ 508: Առանձին կներկայացնենք հիշված յուրաքանչյուր «սկզբնաղբյուր», գրի մասին գիտնականի հայտնած կարծիքը:

<sup>2</sup> Լ. Խաչիկյան, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, - «Բանբեր Մատենադարանի», N 7, Երևան, 1964, էջ 16:

րից և կամ հորինել նոր՝ ինքնուրույն նշաններ, այս էլ կարող է արվել օտար այբուբենների օգտագործմամբ կամ ինքնահնար նշաններով»<sup>1</sup>:

Անշուշտ, հնչյունների պատկերավորման այդօրինակ իմաստավորումը միանգամայն անկարևոր համարելով, անտեսվում է տառանշանների խիստ անհավասար կիրառվելու հանգամանքը, որը և գրերի դյուրընթեքացանությունը գլխավոր խոչընդոտն է: Դժվար է, եթե ոչ անհնարին, բացահայտել և ըմբռնել մեսրոպյան պատկերագոյացումների իմաստը, հնչյունների արտահայտման նրա ուրույն հիմքները: Ավելին, հնչյուն-պատկեր կապակցության մեջ տեսնել լեզվում հնչյունի, իսկ գրության մեջ՝ տառանշանի կիրառության աստիճանով պայմանավորվող պատկերավորումները: Այլ խոսքով՝ գրերի դյուրընթեքացանության գործում անտեսվում է հիմնականը՝ պատկերների ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԲԱԶՄԱԼԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՆԿԱՐՎԱԾՔՆԵՐԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ընդունված հնարամիտ միջոցների իմաստն ու կարևորությունը: Պետք է ընդունել նաև, որ գրանշանների միասնական համաչափված և ոչ պատահական կազմությունը է միայն պայմանավորվում գրերի ինքնուրույնությունը: Մեսրոպաստեղծ Հայ գրերը կատարյալ են թե՛ հնչյունների, և թե՛ նրանց տրված պատկերների առումով. դա նշանակում է, որ գրաստեղծը լիակատար կերպով է սահմանել Հայոց զարգացած բանավոր լեզվի բարդ հնչյունների համակարգը և նույնքան կատարյալ պատկերավորել նաև նրա հնչյունները, ՆԿԱՏԻ Է ԱՌԵԼ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀՆՉՅՈՒՆԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎՈՒՄ ԵՒ ՆՐԱ ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆԸ ԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐԻ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՎՈՐԵԼ Է ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ:

Իրավացի են այն բոլոր ուսումնասիրողները, երբ մերժում են մեսրոպյան գրապատկերների ծագումը համեմատությունների միջոցով վերլուծելու եղանակը: Այդ մասին կարևոր հիշեցում է անում ակադ. էդ. Աղայանը.

«Մեր աշխատանքը գիտնականի վերլուծական-համեմատական աշխատանք է նմանություններ և ընդհանրություններ գտնելու նպատակով, մինչդեռ Մեսրոպի գործը ստեղծագործական աշխատանք էր՝ նորը, տարբերը, ինքնուրույնը ստեղծելու նպատակով»<sup>2</sup>:

Մեսրոպաստեղծ գրերի պատկերների կազմության ամեն մի ուսումնասիրող պարտավոր է, և դա է անսխալ ճանապարհն իր քննությունների համար, երկետ ընդունել միայն ու միայն Մեսրոպ Մաշտոցի Վարքագրի, նրա աշակերտի ու գործակցի, վավերական պատմիչ Կորյուն վարդապետի վկայությունները, իսկ Վարքագիրը հիշատակում է.

<sup>1</sup> Գուրգեն Սևակ, Մեսրոպ Մաշտոց, հայկական գրերի ու մատենագրության սգրնավորումը, Հայպետհրատ, Երևան, 1962, էջ 30:

<sup>2</sup> Էդ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրերի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, խմբագրությամբ Էմ. Պիվազյանի, ԵՊՀ, Երևան, 1977, էջ 255-256:

«Եւ այնպէս բալում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ապահն բաւրեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգելէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիք կապօք»:

«Եւ այսպէս նա շատ նեղություններ բաշեց իր ապահն մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստուծոց իսկապէս պարգևեց նրան [այդ] բախտը: Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ հայերէն լեզվի նշանագրեր: Եւ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, - հորինեց սիղոբաներով-կապերով»<sup>1</sup>:

Վարքագիրն աներկբա հավաստում է այն իրողությունը, որ Մեսրոպ Մաշտոցն իր հայերեն գրերը ստեղծել է նոր ի նորո, որ գրերի ձևերը նմանեցված կամ փոխառնված չեն գոյություն ունեցող որևէ լեզվի այբուբենից:

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկն ավելի քան մեկ դար զբաղեցրել է հայագետների լարված ուշադրությունը, կատարվել են մի շարք բարձրարժեք հետազոտություններ, որոնցում պարզվել են պատմական այդ բարդ ժամանակների ազգային-կրոնական հակասություններով ծանրացած հանգուցային հարցերում Կորյունի անխոս, երբեմն և մթին անցումների պատճառները, վերհանվել է այն խիստ լարված իրավիճակը, որում Կորյունը «երանելի» այրի «աստուածային» գործի ու բազմապատիկ արդարացված կյանքի պատմությունն էր գրում: Կյանք, որն անմնացորդ նվիրում եղավ ոչ միայն իր ազգին, նրա գոյատևմանը սպառնացող ամենավտանգավոր պահին: Մի պատմություն, որ երախտապարտ աշակերտի «ծաղկեցնող» խոսք լինելուց զատ, համազգային ներշնչանք առաջացնող, հայրենասիրությունը խնկարկող և ժողովուրդների համակեցությունը գովերգող երկ է, հայատառ առաջին գրական հուշարձանը՝ նվիրված Հայոց, վրաց և աղվանաց գրերի արարողին՝ հանճարեղ Մեսրոպ Մաշտոցին:

«Կորյունը ամենահավատարիմ պատմիչն է, ստույգ է ամեն տեղեկություն, որ նա տալիս է, և ուրիշ պատմիչների ամեն մի տեղեկություն, որ հակասում է նրան՝ սուտ է»<sup>2</sup>:

Միանգամայն կարուկ և վերջնականապես համոզված հայտնում է մեծանուն հայագետ Հր. Աճառյանը: Այդ է գիտնականի (և ոչ միայն նրա) երկարամյա ուսումնասիրություններից բխող հաստատուն գնահատականը Մեսրոպ Մաշտոցի կենսագրի՝ Կորյուն վարդապետի գործի: Ուրեմն այս սկզբնաղբյուրից պետք է քաղենք գրերի գյուտին վերաբե-

<sup>1</sup> «Պատմություն վարուց եւ մահուան ան երանելոյ սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորին վարդապետ յաշակերտ նորին». Կորյուն, Վարք Մաշտոցի, ԵՊՀ, 1989, էջ 96-97:

<sup>2</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 34:



րող ամեն մի տեղեկություն, միաժամանակ հիշելով, որ Կորյունը գրերի արարման առանձին պատմություն չի գրել:

Բավարարվենք նրա հաղորդած տեղեկություններով և աշխատենք կատարվածը սլարզել նաև մեսրոպաստեղծ գրերի պատկերների կազմությունը քննելու ճանապարհով: Իսկ դա հնարավոր է անել միայն, երբ հավաստի կերպով կազմված կլինեն հայոց այբուբենի բոլոր տառանշանների, եթե ոչ Մեսրոպի, ապա հնարավորինս նրա ստեղծման ժամանակին մոտ շրջանում կիրառված գրերի սկզբնականներն իրենց համաչափություններով: Այդ բացառիկ, սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող խնդիրը լուծելու միակ վստահելի ճանապարհն առայժմ մեր հնագույն 5-7րդ դարերում փորագրված վիմագիր արձանագրություններում կիրառված տառերի պատկերների կազմության ուսումնասիրությունն է (ինդրին լայնորեն կանդրադառնանք առանձին):

Վիմագրությունը գրերի կիրառման այն եզակի ասպարեզն է, ուր տառապատկերների ճոխացում, զարգարում կամ հավելումներ կատարելու հնարավորությունն ինքնուստինքյան սահմանափակ է. նրանում հիմնական խնդիրը տառանշանների պարտադիր նվազագույնի հասցնելն է և ոչ ավելին: Փորագրությունում տառանշանների նկարվածքի ծանրացումը լրացուցիչ և վտանգավոր աշխատանք է, այստեղ վրիպումներն անուղղելի են, ինչի հետևանքով վիմագրությունում տառերի գծագրությունը և՛ պարզ է ու խիստ, և՛ համաչափված: Ուստի, մեսրոպաստեղծ գրերի իսկատիպ նկարվածքը վերականգնելու միակ հավաստի և անխարդախ աղբյուրը վիմագիր արձանագրություններն են և նրանցում կիրառված գրերի ուսումնասիրության հիման վրա միայն կարող են անսխալ բացահայտվել մեսրոպյան պատկերագոյացումների սկզբունքները:

Այլ է հարցը գրչագրությունում: Այստեղ յուրաքանչյուր գրչագիր իր նախասիրության պահանջով և հնարավորությունների սահմանում հակված է յուրովի ներկայացնել գրությունը: Ուստի, որքան գրիչ՝ այնքան էլ ձևագիր, այնքան և նորամուծումներ գրապատկերների նկարվածքում: Հետևաբար, գրչագրության հազարամյա կիրառումներում ամբարված մշակումներն անգնահատելի են մեսրոպյան գրերի գեղադրության արվեստի զարգացումն ուսումնասիրելու, բայց ոչ երբեք գրերի սկզբնապատկերներն անսխալ վերականգնելու համար: Հատկանշական է, որ այն ուսումնասիրողները, ովքեր մեսրոպաստեղծ գրերի ձևերի քննությունը տարել են հիմք ընդունելով ձեռագիր հուշարձանները, գրեթե միշտ սխալ, նույնիսկ արտառոց եզրահանգումների են հասել: Ահա հենց այդ մասին է նշանավոր հայագետ Հ. Մարկվարտի խոսքը, երբ գիտնականը [Ի.] դրասկզբին ամսոսանքով հայտնում է. «Գրերի գյուտի ժամանակներում գրված ձեռագրեր, ինչպես հայտնի է մեզ չեն հասել: Յին հայկական վիմագիր արձանագրությունների հետապոստությունը մինչև օրս մնում է շատ տխուր վիճակի մեջ»: Այնուհետև գիտնականը հիշեցնում է. «Մինչև

կանոնավոր հնագիտական հետապոստությունն ձեռնարկելը ստիպված ենք քավարարվել առայժմ հայտնի մի քանի հնագույն ձեռագրերով»<sup>1</sup>:

Այժմ արդեն մեր ձեռքի տակ ունենք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի քննական բնագիրը, որը պատրաստել, աշխարհաբար թարգմանությունն ու «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի գրականության սկիզբը» հանգամանալից ուսումնասիրությունը կատարել է վաստակավոր գիտնական ահադ. Մանուկ Աբեղյանը, ուստի հայ գրի ստեղծման ընթացքը ներկայացնելու ենք այդ ճշտված սկզբնաղբյուրի վկայություններով<sup>2</sup>: Հայոց, վրաց և աղվանաց գրերի պատկերների քննությունը հնարավորինս կատարելու ենք համատեղ, գրերի վերականգնված սկզբնապատկերների հիման վրա: Այդպիսի մոտեցումը հնարավոր կդարձնի մեկը մյուսով ճանաչել, անհետացածը վերականգնել և, որ կարևոր է, այն կարող է անսքող դարձնել այդ երեք գրերի պատկերների միամտածված լինելու առանձնակի երևույթը:

Մեր սույն աշխատանքը վերաբերում է մեսրոպաստեղծ հայոց ազգային գրերի տառապատկերների կազմությանը. այն մի փորձ է՝ ճանաչելու հանճարեղ գրաստեղծի՝ տառանշանները կազմելու և հնչյունները պատկերավորելու սկզբունքները:

Աշխատանքը բաղկացած է երեք մասից.

Մաս առաջին - Ակնարկ հայոց ազգային գրի ստեղծման պատմության:

Մաս երկրորդ - Մեսրոպյան սկզբնաստեղծ գրապատկերների վերականգնում:

Մաս երրորդ - Գրապատկերներ կազմելու մեսրոպյան սկզբունքները<sup>3</sup>:



<sup>1</sup> Հ. Մարկվարտ, Հայոց սքրուբենի ծագումը և Սք. Մաշտոցի կենսագրությունը, Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 164-165: Խոսքը Մոսկվայի Լազարյան կոչվող ավետարանի մասին է. այն այժմ պահվում է Երևանի Մատենադարանում:

<sup>2</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի. բնագիր ձեռագրային ընթերցումներով, թարգմանություն, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով Մանուկ Աբեղյանի. ԵՊՀ, 1981:

<sup>3</sup> Չեղինակը ծրագրված «Մաս երրորդ»-ը չի գրել (Վ. քին. Դ.):



ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԱԿՆԱՐԿ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Երկու խոսք

Հայաստանում գրերի գյուտը նախորդող շրջանի ազգային-կրոնական և պետական-քաղաքական փոխհարաբերությունների մասին

8365

Մեսրոպյան գրերի գյուտը մեծապես պայմանավորված է ժամանակի ազգային-քաղաքական հարաբերությունների ճգնաժամային իրավիճակով: Ուստի, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը ճանաչելու և հայոց ազգային ինքնուրույն գրերի ստեղծման ու կիրառության ընթացքը զնահատելու համար, անհրաժեշտ է այն դիտարկել գյուտը նախորդող մի ամբողջ կարյուրամյա ժամանակահատվածում հայերի, պարսիկների, ասորիների և հույների միջև եղած պետական, ազգային և կրոնական փոխհարաբերությունների կապակցությամբ: Այդ ընթացքում տեղի են ունեցել հայ ազգի գոյատևումը հաստատող և հետագա գործունեությունն ուղենշող երկու մշակութային-լուսավորական հեղաշրջումներ՝ կրոնադարձությունը 4-րդ դարի արշալույսին, երբ ազգը միովի, պետականորեն, թանձր կոապոչառությունից անցավ առաջադեմ քրիստոնեական հավատի, և գրերի գյուտը՝ 5-րդի արշալույսին, երբ ստեղծվեց հայոց ազգային գիրն ու գպրությունը:

Քրիստոնեության մուտքի հետ մեկտեղ Հայաստան էին «թափվել» հույն և ասորի կրոնավորները, և Հայաստանի եկեղեցիների լեզուն օտար լուսարենն ու ասորերենն էին: Միաժամանակ այդ ընթացքում բացվել էին հույարեն և ասորերեն լեզուներով ուսուցվող եկեղեցական դպրոցներ: Երկրում բազմացել էր և շարունակում էր ավելանալ հունարենով ու ասորերենով կրթված հայ կրոնավորների թիվը: Ազաթանգեղոս

պատմիչը վկայում է, որ այդպիսի դպրոցներ էր բացել Հայոց Տրդատ Գ. Թագավորը. «... տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց եւ ի գաւառաց բապնութիւն մատաղ մանկտոյ ածել յարուեստ դպրութեան, ... եւ վնասա յերկուս բաժանեալ, ւոմանս յԼսորի դպրութիւն կարգել, եւ ւոմանս ի Գելլեն»: «Տրդատ թագավորը Հայոց երկրի տարբեր կողմերին հրաման տվեց՝ իր իշխանության նահանգներից, գավառներից ուսման համար մատաղ մանուկների բապնություն բերել... նրանց երկու մասի բաժանեցին, ոմանց տվեցին ասորի դպրության և ոմանց՝ հելլենականին»<sup>1</sup>:

Ու թեև Հայաստանում ե՛լ հույն, ե՛ւ ասորի քարոզիչներն անարգել քարոզում էին Աստծո խոսքը, այնուամենայնիվ, հունարենը համեմատաբար ավելի լայն տարածում էր գտել, քան ասորերենը, թերևս շնորհիվ այն բարձր հեղինակության, որ ուներ հարեան Կեսարիո եպիսկոպոսությունը (հիշենք, որ այստեղ ձեռնադրվեց Հայոց առաջին կաթողիկոսը՝ Սր. Գրիգոր Լուսավորիչը): Բայց ահա 4-րդ դարի վերջին քառորդում, հոռմեական կայսրության դեմ մղած երկարամյա ծանր պատերազմում Իրանը հաղթող դուրս եկավ և իր գերիշխանության տակ զցեց Հայաստանի արևելյան մեծ մասը: Այժմ պարսիկները չէին կարող թույլ տալ, որ հետագայում հունարեն լեզվի տարածմամբ խորանա հունական ազդեցությունը Հայաստանի՝ իրենց ենթակա մասում, որը կարող էր հիմք հանդիսանալ քաղաքական դաշնակցության համար: Հայաստանը հույներից մեկուսացնելու, հայերի և հույների մշակութային շփման որևէ հնարավորություն բացառելու նպատակով պարսիկներն իրենց ենթակա Հայաստանի արևելյան մասում, պարզապես ամենուրեք արգելեցին հունարեն լեզվի գործածությունը եկեղեցիներում: Եւ որպես կրոնա-ձիսական լեզու՝ խրախուսվեց ասորերենը, որը հասկանալի պատճառներով, չէր կարող քաղաքական վտանգ չներկայացնել: Թե ինչպիսի խստություններ և ինչ նպատակով էր արգելվել հունարենի գործածությունը Հայաստանի՝ Իրանին ենթակա հատվածում, քննախույզ պատմաֆայրն այսպես է նկարագրել. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրեր, եւ հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ, եւ մի որ իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, քի ամենեւին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն եւ հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ՝ խափանել զբրիստնութեան ուսումն, քի յայնժամ գիր դպրութեան Հայոց չէ եւս եր լեալ, եւ յունականսն վարէին եկեղեցոյ կարգ»: ... «Ինչ գիրք որ գտնում էր՝ այրում էր, և հրամայում էր հունարեն գրագրություն չսովորել, այլ պարսկերեն և ոչ որ շիամարձակվի հունարեն խոսել կամ թարգմանել: Եւ պատճառ էր բերում, որ հայերը ոչ մի ծանոթություն և բարեկամական հաղորդակցություն չունենան հույների հետ, բայց իրոք քրիստոնէության ուսումը խափանելու նպատակ

<sup>1</sup> «Ազաթանգեղայ պատմութիւն Հայոց», քննական քնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի աշխարհաբար թարգմանությունն Ա. Տեր-Ղևոնդյանի, ԵՊՀ, 1983, էջ 466-469:

ուներ, որովհետև այդ ժամանակ դեռ հայերեն գիր ու գրականություն չկար և եկեղեցու կարգը կատարվում էր հունարեն լեզվով»<sup>1</sup>:

Այդ մասին Մովսես Խորենացին իր Հայոց պատմության «Յաղագս դպրութեան Հայոց Վրաց եւ Աղուանից» գլխում նույնպես հիշատակում է. «...գտանէ ւմեծն Սահակ թարգմանութեան պարսպել յասորոյն, յոչ լինելոյ յունի: Բանպի նախ ի Մեհրուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք, դարձեալ ի բաժանել վաշխարիս Հայոց՝ չտային պարսիկ վերակապութն յոյն ումեք ուսանել դպրութիւն յիւրեանց մասինն, այլ միայն ասորի»: «... տեսնում է, որ Մեծն Սահակ պատված է (Սր. Գրքի) թարգմանությամբ ասորերենից, հունարեն չգտնելու պատճառով: Որովհետև նախ Մեհրուժանն այրել էր հունարեն գրքերը մեր ամբողջ աշխարհում, իսկ, այնուհետև, երբ Հայոց աշխարհը (երկու մասի) բաժանվեց, պարսիկ վերակացուններն իրենց մասում ոչ որի թույլ չէին տալիս հունարեն սովորել, այլ միայն ասորերեն»<sup>2</sup>:

Որ հունարենը խստապես արգելվել և դուրս էր մղվել Հայաստանի՝ Իրանին ենթակա մասի եկեղեցիներից ու դպրոցներից, և նրա տեղը հաստատապես բռնել էր ասորերենը, վկայում է նաև Ղազար Փարպեցի պատմագիրը՝ հայտնելով. «Բանպի պաշտօն եկեղեցոյ եւ կարդացմունքս ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ յեկեղեցիս Հայաստան ժողովրդս»: «Եկեղեցական արարողությունները և սուրբ գրքերի ընթերցանությունները Հայաստանի ժողովրդի վանքերում ու եկեղեցիներում կատարվում էին ասորերեն»<sup>3</sup>:

Իսկ թե ինչպիսի սերտ կապերի մեջ էին գտնվում այդ ժամանակ պարսիկներն ասորիների հետ մեծանուն հայագետ աղադ. Հր. Աճառյանն այսպես է բնութագրել. «Լսորերէնի ապեցությունը մեծ եղաւ պարսիկների վրա, արամեական այրութենն է, որ ձևափոխվելով դարձաւ պահլավական սորութեն, ասորերէն շատ բառեր մտան պարսից լեզվի մեջ. այնպես, որ այս փոփոխները հասան վերջապէս այն տարօրինակ դրության, որ պահլավերէն էին գրում, բայց ասորերէն էին կարդում»<sup>4</sup>:

Հայաստանի 387 թ. բաժանումից անմիջապես հետո արևելյան հատվածում Իրանի վարած հայակործան քաղաքականությունն անտես չի մնացել Հայոց երկրի մեծերին, այն սկզբից ևեթ երկրում առաջ է բերել համազգային դիմադրություն կազմելու մտահոգություն: Ազգային վտանգը համատեղել է երկրի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների խանրերը, վերացել են նրանց ավագանու միջև բնականոն արմատա-

<sup>1</sup> Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», քննական քնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Կարությունյանի, աշխարհաբար թարգմ. Ստ. Մալխասյանի, ԵՊՀ, Երևան, 1981, Գ. 18, էջ 366-367:

<sup>2</sup> Երկն տեղում, Գ. Ե. Դ, էջ 406-409:

<sup>3</sup> Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան», քննական քննագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Բ. Ուլուբաբյանի, ԵՊՀ, 1982 էջ 30-31:

<sup>4</sup> Կր. Աճառյան, Եզվ. աշխ., էջ 93:

վորված մասնատողական միտումները և առաջացել է ազգային անկախ եկեղեցու գաղափարը. եկեղեցին է ճանաչվել երկիրը կիսված, պետականությունը մասամբ կորցրած Հայ ժողովրդի միավորման և պաշտպանության միակ ներքին հենարանը, որի շուրջ և համախմբվել է ազգը միովի: Այդ բախտորոշ պահին ժողովրդի մեջ ուժեղացնել քրիստոնեական հավատը, բարձրացնել Հայ ազգային եկեղեցու դիմադրողականությունը զրադաշտականության դեմ՝ նշանակում էր պահպանել ազգի և՛ միասնությունը, և՛ ինքնուրույնությունը: Ուստի, սխալ էջը լինի մտածել, որ առաջինը հենց այդ պարտադրանքով էր նաև, երբ ազգային-կրոնական հակասություններով այնքան լարված այդ ժամանակում Իրանին ենթակա արևելյան Հայաստանում հայերը մտահոգվում են իրենց ազգային ինքնուրույն գիրն ունենալու հույս կարևոր և անհետաձգելի խնդրով: Ազգային գիրը, հայագիր գրականությունը գրեթե այն միակ ու զորավոր, նույնիսկ անորսալի պաշտպանության միջոցն էին այդ ժամանակ երկրում քրիստոնեական հավատը համատարած ամբապնդելու, ազգային միասնություն կազմելու և ուժացման վտանգից ժողովրդին զերծ պահելու: Հայոց ինքնուրույն գրի ստեղծմամբ սկզբնապես ազգայնացվելու էր ամենակարևորը՝ երկրի քրիստոնյա եկեղեցին ու նրա դպրոցները, իսկ դա նշանակում էր, որ մշակութային բարեփոխումն առաջադիմություն խնդիր լինելուց զատ (երբ այն պայմանավորվում է երկրի զարգացման բնական ընթացքով), այդ ճգնաժամային պահին, նախ և առաջ, հայապահպանման հույս կարևոր պահանջ էր՝ դիմադրելու Իրանի վարած նենգամիտ քաղաքականությունը: Ուրեմն ազգային գրի ստեղծման նպատակադրումն ինքնին իր խոցող ծայրով ուղղված էր ամենից առաջ Իրանից սպասվող, և արդեն սկսված զրադաշտական կրոնի տարածման դեմ: Հետևաբար, հայոց ազգային գրի ստեղծման գործը չէր կարող հանդուրժելի լինել և չենթարկվել Արքայից արքայի գործակալների և Իրանի այնքան աշխուժացած մոգերի հետապնդումներին ու դաժան հալածանքներին, երբ նրանց «վերակացութիւն», պատմահոր վկայություններ, այդ ժամանակ վխտում էին իրենց ենթակա Հայաստանի արևելյան մասում, Մեծ Հայքում: Ուստի պահանջվում էր զգուշանալ այդ վտանգից և ապահով ուղիներ որոնել հայ գրերի ստեղծման աշխատանքներն անվտանգ վարելու համար:

Հայ ազգային գրի ստեղծման նկատմամբ մեկ այլ չափազանց աննպաստ իրադրություն ևս կար. այդ այն էր, որ երկրի եկեղեցիների և դպրոցների ազգայնացումն ընդունելի չէր կարող լինել նաև երկրում գործող օտարազգի՝ ասորի և հույն կրոնավորների կողմից (իհարկե, ոչ ասորի և հույն եկեղեցիների), որով ընդմիշտ վերջ էր դրվում ընդարձակ Հայաստանում նրանց շուրջ հարյուրամյա գործունեությունը: Օտարազգի կրոնավորների անբարյացակամությունը հայ գրի նկատմամբ չի կարող կասկած հարուցել: Հետևաբար այս ներքին խոչընդոտը ևս ոչ

պակաս վտանգ էր ներկայացնում հայ ազգային գրի ստեղծման գործի նկատմամբ, և պահանջվում էր ոչ միայն զգուշանալ, այլև լրջորեն մտահոգվել նաև գրի ներդրումն անխափան իրադրություն համար:

Վերոբերյալ իրադրությունում միամտություն կլինեի մտածել, թե հայ գրի ստեղծման աշխատանքները կարող էին տարվել ազատ, անթափույց կերպով:

Այդ ժամանակ քաղաքական միջնորդուն այն աստիճան թշնամական ու անբարյացակամ էր հայ ազգային ինքնուրույն գրի հանդեպ, որ անգամ վտանգավոր էր գիր ունենալու մտքի հրապարակումը: Ուստի պահանջվում էր ապահով ուղիներ որոնել, անաղմուկ կատարել, անտես պահել պահանջվող ամենայն աշխատանք, իսկ որ առավել վտանգավոր ու զժվար էր՝ զգուշավոր, ապահով երաշխավորված ելք որոնել հատկապես գրի ներդրման—կիրառման, այսինքն՝ մշակութային բարեփոխումը տանելու, երկրի եկեղեցին ու դպրոցներն աննկատ, աստիճանաբար ազգայնացնելու համար: Ահա, ազգային-կրոնական այդ ծանր դրությունն աչքի առաջ ունենալով անհրաժեշտ է պարզել, թե որպիսի ճանապարհով է ընթացել, կամ ինչպիսի անթափանց քողով են ծածկվել հայոց անթերի գրերի ստեղծման ոչ քիչ տարիներ պահանջող աշխատանքները: Հիշենք նաև, որ այդ ժամանակ խիստ կաշկանդված և սահմանափակ իրավունքներ ունեին հայոց Արշակունի թագավորները. նրանց գործունեությունը մշտական հսկողության տակ էր առնված և չէր կարող ազգային գրի ուղղությունը նրանց որևէ ձեռնարկումն աննկատ մնալ Արքայից արքային և չպատժվել: Հետևաբար չէր կարող այդ նպատակով որևէ աշխատանք կատարվել երկրի աշխարհիկ իշխանություն ճանապարհով՝ իբրև նրա մտահոգություն խնդիր: Դա կարող էր կատարվել պետական հետաքրքրությունից միանգամայն անկախ, նույնիսկ Արշակունի թագավորներին թեկուզ և արտաքնապես զերծ պահելով այդ գործից: Այդ էր պահանջում գործի հաջողությունը: Այս աննպաստ, գրեթե անելանելի թվացող պայմաններում կար անելիքը պատասխանելու միայն մի եզակի հնարավորություն. Հայ գրերի ստեղծման գործընթացը տանել երկրի եկեղեցու, ապա և եկեղեցականների գծով, նրանց սահմաններում, հատկապես ասորական կենտրոն եկեղեցու, որին մերձենալն իրենք՝ պարսիկներն էին խրախուսում: Այդ ճանապարհն ապահով էր և արտաքնապես բնական երևացող ոչ միայն պարսիկներին: Ահա այդ ծանր ու վտանգավոր իրադրությունում հայ գրի (այս պարագայում երևի թե ճիշտ է անվանել եկեղեցական) ստեղծման դժվարին գործընթացի ծրագրման և ղեկավարման ողջ մտահոգությունը սկզբից մինչև գրերի կիրառումը, բնականորեն և բարեբախտաբար, հանձնվում է եկեղեցու առաջնորդի տնօրինությունը, սոճմիկ հայրենասեր Սահակ Պարթև կաթողիկոսի խորամտությունը: Իսկ թե ո՞վ էր և ի՞նչ կարողությունների տեր էր երկրի հոգևոր առաջնորդը, դիմենք սկազ. Մ. Աբեղյանի հակիրճ խոսքին. «Գրիգոր Լուսավորչի

տոհմից Մեծն Ներսես կաթողիկոսի որդին Էր Սահակը ... Ստացել է հունական կրթություն, եղել է մեծ գիտության տեր, ժամանակակից երաժշտական ու հռետորական արվեստին հմուտ, ինչպես և փիլիսոփայության: Պարսպել է թարգմանություններ անելով: Երբ 428 թ. Հայաստանի վերջին արշակունի թագավորը գահընկեց է լինում արքա Հապկերտի ձեռքով, Սահակն էլ կրկվում է իր կաթողիկոսական իշխանությունից: Բայց նրա և Մեսրոպ Մաշտոցի աշակերտները շարունակում են նրան կաթողիկոս ճանաչել»<sup>1</sup>:

Սահակ Պարթևը հայրապետական աթոռ է բարձրացել մոտավորապես Հայաստանը երկու հարևան՝ Սասանյան Պարսկաստանի և Հռոմի միջև 387 թ. բաժանվելու տարում և պաշտոնապես գահակալել է 41 տարի, մինչև արևելյան Հայաստանում Արշակունիների հարստության վերջը, 428 թ.: Մովսես Խորենացու հայտնած թվականները հիմք ընդունելով ակադ. Հր. Աճառյանը Սահակ Պարթևի գահակալության տարին դնում է 387 թվականը: Ներկայացնենք գիտնականի թվական հաշվարկը. «Յետաքրքրական է քննել Խորենացու վերջին թվական տեղեկությունները Սահակի մահվան առթիվ: Այս տեղեկությամբ Սահակը, որ վախճանվել էր 438 թվականին, աթոռակալել էր 51 տարի, սկսած Խոսրովի երրորդ տարուց: Ըստ այսմ, Սահակը նստել է 438-51=387»<sup>2</sup>:

Սահակ Պարթև կաթողիկոսը մշտապես եղել է իր ժամանակի պետական-քաղաքական լարված հակամարտությունների մասնակիցը: Նրա գահակալության տարիներին են Սասանյան արքաները ծրագրել և Հայաստանի իրենց ենթակա հատվածում հետեղականորեն վարել զրազաշտական կրոնի տարածմամբ հայ ժողովրդին դավանափոխ անելու ազգակործան քաղաքականություն: Սահակ Պարթևն անմիջական կրոն էր Հայոց եկեղեցու նկատմամբ մշտապես դյուլթվող ազգային-կրոնական հալածանքների ու սահմանափակումների, որոնք սպառնում էին առաջին հերթին կործանել երկրի քրիստոնյա եկեղեցին և որպես առաջնորդ, լուսամիտ Սահակ Պարթև կաթողիկոսը պարտավոր էր ու կարող էր օր առաջ հոգ տանելու եկեղեցին կործանումից, ասել է թե ժողովուրդն ու ծացումից պաշտպանելու մասին: Նախապես ծրագրեր ու ծավալեր սպասվող հայաջինջ վտանգի դեմ ազգը միավորելու գործունեություն: Առաջին հերթին պետք էր քրիստոնյա հավատքը համատարած դարձնել. ծավալուն քարոզչության միջոցով ժողովրդին եկեղեցու շուրջը համախմբել և, այդպիսով, համազգային դիմադրություն կազմել: Իսկ այդ անել հնարավոր էր միայն երկրի եկեղեցին ազգայնացնելու, ժողովրդականացնելու միջոցով, փոխելով նրա օտար լեզվուն, եկեղեցիներում Սուրբ գրոց ընթերցումներն ու քարոզները, ժամասացությունն ու ձեսերը, ժողովրդին

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 308, ծնթ. 57:  
<sup>2</sup> Հր. Աճառյան, Ազվ. աշխ., էջ 386, Սահակ գահակալել է՝ Չամչյան 390, Գաթրոյան՝ 388/9, Գարագաշյան՝ 388, Օրմանյան՝ 387, Ալիշան՝ 389, Ավինյան՝ 386 թվականներին, էջ 390:

հասկանալի հարազատ հայերենով կատարելու միջոցով: Ահա այս ամենն անհետաձգելի, նույնիսկ անխուսափելի էր դարձնում ազգային ինքնուրույն գրի ստեղծման գործը:

Ճգնաժամային այդ ծանր իրադրությունում երկրի հոգևոր առաջնորդն էր վարելու ազգապահպանման ողջ գործընթացը, անշուշտ, նեցուկ ունենալով հատկապես ասորական կենտրոն եկեղեցին: Ընդհատ էր պաշտպանությունը սպառնում էր առաջինը կործանել Մեծ Հայքի եկեղեցին, սակայն վտանգն ընդհանուր քրիստոնեությունից դեմ էր ուղղված, ուստի ասորի և հույն եկեղեցիների (բայց ոչ Հայաստանում գործող ասորի և հույն կրոնավորների) մի ներքին անձայն համերաշխությունը Հայոց եկեղեցու պաշտպանության հարցում ավելի քան ակնկալելի էր: Ուրեմն այս արտաքին օգնության հնարավորությունը ևս պետք է նկատի ունենալ հայոց ազգային գրերի ստեղծման աշխատանքների ապահովման գործում: Ընդունելով, որ հասկանալի պատճառով այն չէր կարող բացահայտ կերպով կատարվել, ուստի՝ ասորական եկեղեցու օգնությունը պետք է փնտրել ծայրահեղ դրություններում և տեսնել աննշանելի թվացող հարցերի լուծումներում միայն:

Որքան անդրադառնում ենք գրի գաղափարի առաջացման հանգամանքներին և նրա ստեղծման արտակարգ աննպաստ պայմաններին, ծանոթանում թե՛ սակավախոս Վարքագրի տված մթին տեղեկություններին՝ հայազեանների պարզաբանումներին, և թե՛ գրի ստեղծման առթիվ ուսումնասիրողների միմյանցից տարբեր, նույնիսկ իրարամերժ եզրահանգումներին, և այդ ամենը համադրում ենք ի վերջո գյուտի իրականում ունեցած հրաշագործության հետ (երբ պատմության մի կարճ ժամանակամիջոցում հայոց լեզուն և դպրությունը բարձրացրեց ոչ միայն անհասանելի աստիճանի, այլև առաջ բերեց աննախադեպ ազգային միասնություն, գոյապայքարում նահատակվելու անվարան կամք), այնքան համոզվում ենք (և դրան է տանում նաև մեր այս համեստ աշխատանքը), որ որքան էլ հեռավոր է եղել նենգամիտ կազմված դյուլթվող վտանգն, այդուհանդերձ, ԱՅՆ ԱՆՏԵՍ ԶԻ ՄՆԱՅԵԼ ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ՄԵԾԵՐԻՆ, ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ՆՐԱ ՏՈՂՄԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋԵՆՈՐԴԻՆ: ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆՔ ՈՐ ԼՈՒՍԱՄԻՏ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍԿԶՐԵԱՊԵՍ ԿՌԱՀԵԼ Է ԵԿՈՂ ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ՎՏԱՆԳՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԽՈՐԱՄՏՈՐԵՆ ՀՈԳ Է ՏԱՐԵԼ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐԻ՝ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵՋ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՎԱՏՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ և, այդպիսով, համազգային դիմադրություն առաջ բերելու, գոյատևման ազգային-կրոնական պատերազմի կոչելու մասին:

Գրերի գյուտի և նրա կիրառման հետ առնչվող կարևոր շատ հարցեր, ինչպես նաև դեպքեր ու դեմքեր, ժամանակի մեջ հաջորդած կարգով տեսնելու համար ներկայացնում ենք ակադ. Հր. Աճառյանի երկար տարիների, բազմակողմանի պրպտումներով կազմած ժամանակագրա-


կան տախտակը, որում ընդգրկված են Մեսրոպ Մաշտոցի կյանքի բոլոր դեպքերը ծննդից մինչև մահ: Գիտնականը հիշեցնում է որ. «Այս բոլոր թվականները մեր անձնական խուլարկության արդյունքն են ներկայացնում, հիմնված միակ ժամանակակից և վավերական պատմիչ Կորյունի վրա»,- միաժամանակ հայտնում է, որ. «Մյուսները, եթե տարբեր թվականների են հասել, մեծավ մասամբ նրանից է, որ կարևորություն են տվել Փարպեցու, Խորենացու կամ ավելի ուշ եկող պատմիչների ասածին, մոռանալով աղբյուրների աղբյուր Կորյունին, կամ Հապկերտ Բ.-ի մահվան տարեթիվը դնելով 439 (փոխանակ 438-ի)»<sup>1</sup>:

**Ժամանակագրական տախտակ Մեսրոպ Մաշտոցի կյանքի բոլոր դեպքերի՝ ծննդից մինչև մահ 364-439 թթ.<sup>2</sup>**

- 364? - Ծնունդ Մեսրոպ Մաշտոցի:
- 389? - Մտնում է պետական ծառայություն. գահակալում է Վռամ Կրման:
- 390
- 391 - Նեկտարիոսը նստեց պատրիարք:
- 392
- 393
- 394 - Մեսրոպը թողնում է արքունիքը և կրոնավոր է դառնում:
- 395 - Մեռավ Թեոդորոս Ա. և գահակալեց Արկաղիոս:
- 396
- 397 - Մեռավ Նեկտարիոս:
- 398 - Ոսկեբերանը նստում է պատրիարք. Թարսուզություն Գողթնի. մեռնում է Վռամ Կրման, գահակալում է Հազկերտ Ա.:
- 399 - Գահակալում է Վռամ Նապուհ (Ա. տարի):
- 400 - Մեսրոպ գումարում է Վաղարշապատի ժողով գրեթե գյուտի համար:
- 401 - Դանիելյան գրերը բերվում են Հայաստան (Գ. տարի Վռամ շապուհի):
- 402 - Փորձում են Դանիելյան գրերը:
- 403 - Մեսրոպ գնում է Միջագետք (Ե. տարի Վռամ շապուհի):
- 404 - Մեսրոպ հնարում է հայերեն տառերը (Զ. տարի Վռամ շապուհի):  
Ոսկեբերան գահընկեց. նստում է Ակակիոս պատրիարք:
- 405 - Լուսավորություն Փայտակարանի. մեռնում է Ակակիոս հաջ[որդում] է Ատիկոս:
- 406 - Ս. Գրքի թարգմանությունը վերջացավ. քացվեց Վարդապետարանը:
- 407 - Լուսավորություն Գողթան:

<sup>1</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 389:  
<sup>2</sup> Լույս տեղում, էջ 390-392:

- 408 - Լուսավորություն Սյունիքի. հնարում է վրացերեն գրերը.  
մեռավ Արկաղիոս և գահակալեց Թեոդոս Բ.:
- 409 - Լուսավորություն վրաց:
- 410
- 411
- 412
- 413 - Լուսավորություն Տուրուբերանի, Աղձնիքի, Մոկաց, Կորճայրի.
- 414 - Վասպուրականի և Պարսկահայքի:
- 415
- 416
- 417
- 418
- 419
- 420 - Հազկերտ Ա. սպանվեց. Շապուհ փախավ և սպանվեց. գահընկեց Վռամ Ե. Մեսրոպ գնաց Հունաստան և Պոլիս:
- 421 - Անիշխանություն:
- 422 - Գահակալում է Արտաշես Գ. Մեսրոպ հնարում է աղվաներեն գրերը, վերադառնում է Մեսրոպ Հունաստանից:
- 423 - Լուսավորություն Աղվանից, Բաղասականի և Գարդմանից:
- 424 - Լուսավորություն Վրաստանի և Գուգարաց:
- 425 - Մեռնում է Ատիկոս պատրիարք:
- 426 - Սիսինիոս նստում է պատրիարք:
- 427 - Եվնիկ և Հովսեփ գնում են Եդեսիա. Սիսինիոս մեռնում է:
- 428 - Արտաշես Գ. գահընկեց է լինում. պաշտոնանկ է լինում Սահակ, նստում է Սուրմակ հակաթոռ Սահակի, Նեստոր նստում է պատրիարք:
- 429 - Եվնիկ, Հովսեփ, Ղևոնդ և Կորյուն գնում են Պոլիս. Հակաթոռ է նստում Բրիքիչո ասորի :
- 430
- 431 - Եփեսոսի ժողովը. Նեստոր կարգալույծ. նստում է Մաքսիմիանոս. թարգմանիչները վերադառնում են Հայաստան:
- 432 - Ս. Գրքի երկրորդ թարգմանությունը. հակաթոռ է նստում Շմվել ասորին:
- 433
- 434 - Մեռնում է Մաքսիմիանոս և նստում է Պրոկղ պատրիարք:
- 435 - Թղթակցություն Սահակի, Մեսրոպի, Պրոկղի, Ակակիի:
- 436
- 437 - Մեռնում է Շմվել ասորին:
- 438 - Մեռավ Վռամ Ե. և գահակալեց Հասկերտ Բ. մահ Սահակի:
- 439 - Մահ Մեսրոպ Մաշտոցի:



ԳԼՈՒԽ Բ.

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մերոպ Մաշտոցի տիտանական գործունեությունը հետևելու, նրա ունեցած գիտաստեղծագործական հորինումները ճանաչելու, և հենց իր աննահանջ հայրենասերի անձի նկարագիրը պատմական ժամանակի թանձրությունում տեսնելու և հասկանալու համար անհրաժեշտ ենք համարում կրկին անդրադառնալու Կորյուն վարդապետի հաղորդած մի քանի առանցքային նշանակություն ունեցող վկայությունների քննությանը: Անշուշտ մեր ուժերի ներածին չափով փորձելու ենք լուսաբանել գրաստեղծի կյանքի առանձին գրվագներ՝ կապված նրա գործունեության որոշ հարցերի հետ, միաժամանակ սկզբնապես ներկայացնում ենք բերվող վկայությունների խորքում թաքնված եղելությունների վերծանումները, որ կատարվել են հայագետների կողմից:

Մերոպ Մաշտոցի կենսագիրը նրա ժամանակակից, մերձավոր աշակերտ և գործակից Կորյուն վարդապետն է: Կորյունի «Վարք Մաշտոցի» գրվածքը մերոպատառ հայագիր առաջին երկն է, Մերոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության ստույգ պատմությունը՝ գրված 443-450 թթ: Այն հնագույն գրավոր հուշարձանն է, որից տեղեկություններ են քաղել հետագայի մեր բոլոր պատմագիրները:

«Ուրեմն և այս գրքից «պետք է գաղափար կապմենք գրերի գյուտի և առհասարակ թարգմանական գրականության առաջին շրջանի մասին. այնպես որ, եթե այս գրվածքը չլիներ՝ մեր գրականության պատմության սկզբնավորության և փառավոր շրջանի մասին մեր տեղեկությունները թերի կլինեին»<sup>1</sup>. - Ստ. Մալխասյանին վկայակոչելով գրում է Հր. Աճառյանը:

Կորյունն իր ուսուցչի կյանքը բաժանում է երկու շրջանի՝ աշխարհական և կրոնական: Աշխարհական շրջանի մասին վարքագիրը հետևյալն է հաղորդում. «ԱՌՆ, փոքր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, Եր Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հայեկաց գեղօք, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպա-

<sup>1</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ.:

սաւոր արքայատուր հրամանացն առ հապարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ եւ հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ փնտորական արուեստին իւրոց փորականանց: Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածողէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ պանծն պարդարեալ, հարկանէր պիշխանանցն սպասատրութիւնսն»:

«Մաշթոց Եր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից Եր, Հայեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրոցում, [սպա] եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի սոված հրամանների ծառայող՝ ոմն Առափանի մեր Հայոց աշխարհի հապարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր փնտրական արվեստով սիրելի էր դարձել իր պորականներին: Եւ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ պարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում...»<sup>1</sup>:

Կորյունի վկայության այս սեղմ հատվածն է միայն, որ ներկայացնում է Մերոպ Մաշտոցի աշխարհական կյանքի ողջ պատմությունը, սակայն այս քիչն էլ այնքան է խտագրված, որ մերոպագետների կողմից կատարված պարզաբանումների շնորհիվ պատասխան են ստացել կարևոր նշանակություն ունեցող շատ հարցեր: Մերոպ Մաշտոցը ծնվել է պատմական Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում, շուրջ 362-364 թվականներին: Մաշտոցի հունական կրթությունը (հավանաբար նա կրթվել է իր ծննդավայրում՝ Ներսես Մեծի բացած հունարեն լեզվով ուսուցանվող դպրոցներից մեկում), ղինվորական ոչ ցածր աստիճանը և ծառայությունը Արշակունիների պալատում հիմք են տվել Մ. Աբեղյանին եզրակացնելու, որ. «Նա ծագումով ասլավական է եղել և ոչ ժողովրդի «ստորին» խավից»<sup>2</sup>:

Մերոպ Մաշտոցի օրոք 387 թվականին Հայաստանը բաժանվել էր երկու մասի, արևմտյան մասը գտնվում էր Հռոմի արևելյան կայսրության, իսկ արևելյան մեծ մասը՝ Սասանյան Պարսկաստանի գերիշխանության ներքո: Մաշտոցի աչքի առաջ բյուզանդական մասում վերացվեց հայրենի իշխանությունը: Նա տեսնում էր, թե ինչպես այնտեղ աստիճանաբար

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 84-85:  
<sup>2</sup> «Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», բնական բնութագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Բ. Ուլուբարյանի, էջ 28-29:

Հայոց եկեղեցիների գլուխն էին անցնում նաև օտարազգի կրոնավորները: Դրուեթյունը այլ էր Հայաստանի արևելյան մասում, այն թեև Արքայից արքայի գերիշխանության ներքո էր, սակայն երկիրը շարունակում էին կառավարել Արշակունի թագավորները: Մաշտոցը տեսնելով Հայաստանի արևմտյան մասում հայրենի իշխանության վերականգնման գործի այլևս անհեռանկար լինելը, որպես մտահոգ հայրենասեր թողնում է հայրենի Տարոնը և տեղափոխվում Հայաստանի արևելյան մաս՝ մայրաքաղաք Վաղարշապատ, որտեղ ծառայության է անցնում Հայոց թագավորի դիվանատանը և երիտասարդ հասակում (25-26 տարեկան) դառնում է պալատական քարտուղար-դիվանագիր: Հասկանալի է, որ Արևելյան Հայաստանում պաշտոնական հարաբերությունները, գրագրությունը գերազույն իշխանության հետ տարվում էր պարսկերեն լեզվով: Բացի պարսկերենից այդ ժամանակ դիվանական գրականության համար Իրանում ընդունված էր նաև ասորերենը: Ղազար Փարպեցին վկայում է որ. «ասորի և յոյն գրով վճարեին յայնժամ պզոր թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, պճոռցն և Կիրովարտակացն»: ...«Արքունի դպիրներն այն ժամանակ Հայոց թագավորների վճիռների ու հրովարտակների գործը կատարում էին ասորերեն ու հունարեն գրերով»<sup>1</sup>:

Այս նկատի ունենալով Մ. Աբեղյանը գրում է, որ. «Մաշտոցը չէր կարող Վաղարշապատում թագավորի դիվանում քարտուղար լինել և այդ լեզուները չիմանալ, իսկ եթե չգիտեր՝ չսովորեր»<sup>1</sup>:

Արշակունիների արքունիքում Մաշտոցը մոտիկից ծանոթանում է երկրի կառավարման գործին, ժամանակի քաղաքական միտումին և պետական տեղաշարժերին: Ղազար Փարպեցու վկայությամբ Մեսրոպ Մաշտոցը ծառայել է Հայոց խոսրով Գ. թագավորի պալատում և ակառատես է եղել, թե ինչպես է պարսից Շապուհ արքան գահընկեց արել խոսրովին և փոխարենը գահ բարձրացրել նրա եղբորը՝ Վռամշապուհին: Մեսրոպը տեսնում և հասկանում էր ոչ միայն Արշակունի թագավորների խիստ կախյալ վիճակը Սասանյան արքաներից, այլև նրանց շուրջ օրավուր սեղմվող օղակը, տեսնում էր Հայոց գահի անհուսալի երեքումը, որն առավել վտանգավոր էր դառնում Իրանից սպասվող զրադաշտականության հարձակումներով: Եւ դա այն ժամանակ, երբ կրոնադարձուեթյունը Հայաստանում ոչ միայն ավարտված և համատարած չէր, այլև հայրենի պետականության թուլացման հետևանքով եչիլի էին թե՛ փանցում տարբեր աղանդներ: Մաշտոցը, և ոչ միայն նա, կռահում է եկող ազգակործան վտանգը, այլև՝ նախապատրաստվում է աննահանջ դիմադրության կազմակերպմանը: Վարքագիրը հայտնում է նաև, որ Մեսրոպ Մաշտոցը պալատում ծառայելու տարիներին հետևել է «աստուածեղեն գրոց»՝ Սուրբ գրքերի ընթերցանությանը, «զանձն գարգարել»՝ գիտելիք-

<sup>1</sup> Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 7:

ներ ձեռք բերել և հինգ տարի քարտուղարություն անելուց հետո, 394 թվականին թողնում է ծառայությունը Արշակունիների արքունիքում և անցնում է կրոնական-մենակյաց կյանքի:

\*\*\*

Մինչև Մեսրոպ Մաշտոցի կյանքի հաջորդ՝ մինչ կրոնական շրջանի գործունեությունը ծանոթանալը նկատենք, որ նրա աշխարհիկ կյանքում տեղի ունեցած կտրուկ, երբեմն և անսպասելի շրջադարձերն ազգանվեր գործունեության ճանապարհների պատահական որոնումներ չեն եղել և ոչ էլ երիտասարդական հանդգնություններ: Այն արժանի է հատուկ ուշադրության: Տարոնից մայրաքաղաք տեղափոխվելը, թագավորի պալատում ծառայության անցնելը, և ապա իր գինվորական կոչումից հրաժարվելն ու նույնքան դյուրին կերպով արքունի դիվանագիրի զբաղմունքը ևս թողնելը և ճգնական-մենակյաց կյանքի տեղափոխվելը հեռատեսորեն նախորդում է սպասվող վտանգին և զարմանալիորեն գաղտնատես կերպով համընթաց է ժամանակի պահանջներին:

Վտանգված էր հայրենի պետականությունը, վտանգվում էր նաև երկրի քրիստոնյա եկեղեցին, ժողովրդի ազգապահպան հավատը: Այս ամենն, իհարկե, տեսնում էր ոչ միայն Մեսրոպ Մաշտոցը, այլ ինչպես արդեն ասել ենք, նաև Սահակ Պարթև կաթողիկոսը: Սահակ կաթողիկոսն իր դիրքով և, մանավանդ, ունակություններով ժամանակի այն միակ անձն էր, որ ավելի վաղ, քան Մաշտոցը կարող էր կռահել ու գնահատել քաղաքական կացությունը: Ամենից առաջ Սահակ կաթողիկոսին և ոչ ուրիշ մեկին էր տեսանելի ու խորապես հասկանալի վերահաս կործանարար վտանգը, որը սպառնում էր նախ և առաջ երկրի քրիստոնյա եկեղեցուն: Եւ որպես նրա առաջնորդի՝ Սահակ կաթողիկոսը պարտավոր էր հոգ տանել երկրում զրադաշտական կրոնի տարածման դեմն առնելու, ասել է թե՛ ժողովուրդը ուժացումից պաշտպանելու մասին: Մեծագույն բարեբախտություն պետք է համարել և ըստ արժանվույն գնահատել տոհմիկ հայրենասեր կաթողիկոսի, լուսամիտ Սահակ Պարթևի ընդհանուր ղեկավարությունը: Այդ նա՝ Սահակ կաթողիկոսն էր տեսել երիտասարդ Մեսրոպի կարողություններն ու նվիրվածությունը և կոչել նրան ժողովուրդը վտանգից պաշտպանելու հույժ կարևոր գործին: Եկող ազգակործան վտանգի դեմ ժողովուրդը միավորելու, ուժացումից պաշտպանելու միակ հնարավոր միջոցն այդ ժամանակ միասնական հավատի ստեղծումն ու պահպանումն էր, քրիստոնեությունը երկրում համատարած դարձնելը, իսկ այդ անել հնարավոր էր միայն ժողովրդին հասկանալի հայերենով ընդարձակ քարոզչության ճանապարհով: Մեր խոսքը տանում է նրան, որ Մեսրոպ Մաշտոցի ծառայությունն Արշակունիների արքունիքում, որպես դիվանագիր, հենց այդ նպատակով է եղել, և այն նախապես ծրագրվել է հեռատես Սահակ Պարթև կաթողիկոսի կողմից,



անշուշտ, ոչ առանց Խոսրով Գ. թագավորի հավանություն և իհարկե հենց իր՝ Մաշտոցի համաձայնություն: Համոզված ենք, որ այն եղել է հանճարեղ գրաստեղծի հետագա նշանավոր գործի ու գործունեությունն նախապատրաստության նպատակով: Ուրեմն անհրաժեշտ է նաև պարզել, թե Մաշտոցը մինչև կրոնական-մենակյաց կյանքի անցնելը (որը գրաստեղծի գիտաստեղծագործական աշխատանքի գործնական սկիզբն էր լինելու), նա պալատում քարտուղարելու տարիներին ինչպիսի նախապատրաստական, նույնիսկ պարտադիր աշխատանքներ պետք է կատարեր և այդ անելու ինչպիսի հնարավորություններ ուներ: Փորձենք կուսակցել:

1. Հայաստանի 387 թվականի բաժանումից գրեթե անմիջապես հետո, Մեսրոպ Մաշտոցը 389-394 թվականներին քարտուղարել է Արշակունիների արքունիքում: Նա այդ տարիներին պաշտոնապես, պատասխանատու կերպով գրագրություն է կատարել՝ պարսկերեն, ասորերեն և հունարեն լեզուներով: Դա նշանակում է, որ Մաշտոցը հինգ տարի շարունակ պատասխանատու կերպով գործադրել, կիրառել է այդ երեք՝ իր ժամանակ տարածված լեզուների գրերը: Հետևաբար, նա հնարավորություն է ունեցել և կարող էր գործանականորեն ծանոթանալ, ապա և համեմատել ու իր համար պարզել գրերին վերաբերող ամենատարբեր հարցեր: Այլ կերպ ասած, Մաշտոցն իր քարտուղարություն տարիներին բացառիկ նպաստավոր պայմաններ է ունեցել ազատ կերպով ուսումնասիրելու իր իսկ իմացած և կիրառած այդ երեք լեզուների գրերը՝ պարզելու նրանցից յուրաքանչյուրի զարգացման աստիճանը, յուրացնելու գրավոր լեզվի, ավելի ճիշտ՝ ԲԱՆԱՎՈՐ ԼԵԶՈՒՆ ԳՐԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԲԱՅԱՀԱՅՏԵԼՈՒ ԱՌԱՋԱԴԵՄ ԳՐԱՎՈՐ ԼԵԶՎԻ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ (վերջին խնդրին կանգրադառնանք առանձին):

2. Արշակունիների արքունիքում ծառայելու 5 տարիներին Մեսրոպ Մաշտոցն, անշուշտ, հնարավորություն է ունեցել բազմիցս մասնակիցը լինելու այդ տարիներին տեղի ունեցած ամենատարբեր պալատական արարողություններին, տոնախմբություններին և հանդեսներին: Միաժամանակ Վաղարշապատում տարբեր առիթներով ունկնդրելով ժողովրդական իմաստուն պատմություններ, լեզվականորեն գունեղ ավանդական գրույցներ և առօրյա շփումների միջոցով ՏԱՐՈՆՑԻ 25-ԱՄՅԱԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՇՏՈՅԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԾԱՆՈԹԱՅԵԼ ԵՒ ԽՈՐԱՊԵՍ ՅՈՒՐԱՅՐԵԼ Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՆՈՒՅՆԸ Է ԹԵ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԱՎՈՐ ԼԵԶՈՒՆ:

3. Վարքագրի վկայությամբ, Մեսրոպ Մաշտոցը արքունի ծառայության տարիներին «ջանալով՝ ուշադրությամբ» հետևել է Սուրբ գրքերի ընթերցանությանը և ամենայն պատրաստությամբ «զարգարել իրեն»: Սա նշանակում է, որ Մաշտոցը ջանասիրությամբ, նպատա-

կաղրված կերպով ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՄԱՄԲ Է ԶԲԱՂՎԵԼ, ԳԻՏԵԼԻՔՆԵՐ Է ԶԵՌՔ ԲԵՐԵԼ՝ ԱՅՆ ԷԼ ՈՉ ՄԻԱՅՆ ԿՐՈՆԱԿԱՆ:

4. Մեսրոպ Մաշտոցի՝ արքունական ծառայությունը թողնելը և ճգնական կյանքի տեղափոխվելը նույնքան անսպասելի շրջադարձ է նրա կյանքում, որքան և իր զինվորական զբաղմունքից պալատական քարտուղարի ծառայության անցնելը: Այդ առթիվ հայագետները տարակուսանք են հայտնել. գտնում են, որ Մաշտոցի ճգնական տարիները (394-398) «աննպատակ» չեն եղել: Հիրավի, ինչպես համատեղել Մաշտոցին վերագրվող այդչափ հակամետ հակվածությունները, ինչպիսիք են՝ մի կողմից նրա աշխարհական կարգերին հմուտ լինելը, մյուս կողմից աշխարհից կտրվելու նրա ձգտումը, իր ազգի ծանր հոգսերին նրա քաջատեղյակ լինելը, բայց և այդ հոգսերի նկատմամբ նրա անտարբեր, նույնիսկ անհաղորդ մնալու ցանկությունը, կամ, երբ իր զինվորական հմտությամբ նա իր զորականների սիրելին էր դարձել, այդուհանդերձ անապական, մեկուսի կյանք է նախընտրել. «Տեղեկացալ տ հմուտ եղալ աշխարհական կարգաց, ցանկալի եղալ պիսուրական արուեստին իւրոց պորականաց»: ... «Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր պիսուրական արվեստով սիրելի էր դարձել իր պորականներին»:

Վերոբերյալից հետևում է, և համոզված ենք դրանում, որ արքունիքում քարտուղարելու 5 տարիների ընթացքում, երբ Մեսրոպ Մաշտոցը խորապես ուսումնասիրել և յուրացրել է հայոց լեզվի և առաջավոր գրի հիմնահարցերը, բոլոր կողմերով նախապատրաստվել, անհրաժեշտ գիտելիքներ է ձեռք բերել, իր գործին համախոհներ է գտել, հավաքել և Սահակ Պարթև կաթողիկոսի խորհուրդով ու Հայոց Խոսրով Գ. թագավորի հավանությամբ տեղափոխվել քաղաքներից ու շենքերից, նույնիսկ վանքերից հեռու՝ Գողթան գավառի Երնջակի լեռներում ձվարած իր ճգնարանը, որպեսզի Իրանի մոզերին և Հայաստանում գործող օտարազգի կրոնավորներին անտես, իր աշակերտ-օգնականներով ձեռնամուխ լինի և՛ իր նշանավոր աշխատանքին, և՛ նախապատրաստվի համատարած քարոզչության: Նկատենք, որ այս ընթացքով ազգային գրի ստեղծման համար պահանջվող աշխատանքները զուգակցվում են քարոզչության գործի հետ, ուստի այն կարող էր տարվել հենց այդ անվան ներքո: Այդ համոզմամբ և շարունակենք հետևել Մեսրոպ Մաշտոցի կրոնական Մեծ կյանքի պատմությանը: Հիշելով, որ եթե Մաշտոցի կյանքի աշխարհական շրջանը կարող էր նրա հայրենակից Սահակ Պարթև կաթողիկոսի օգնության կարիքն ունենալ միայն, ապա հաջորդ՝ կրոնական շրջանը, նրա ղեկավարման և անմիջական գործոն մասնակցության կարիքն ուներ և երկու «զուգակիցների» - հավասարների անբաժանելի գործունեությունը նաև անչափելի եղավ: Հենց այստեղ, որպես վերջաբան Մաշտոցի աշխարհական կյանքի պատմության, և նախաբան նրա հաջորդ՝ կրոնական կյանքում ունեցած մեծագործությունների, ինչպես նաև ի հաստա-

տու՛մն վերոասվածի բերենք այդ մասին ասված և ընդհանուրի ճանաչմանն արժանացած գերմանացի նշանավոր գիտնական Հ. Մարկվարտի որքան ճշմարիտ, նույնքան և դիպուկ խոսքը, ուր ըստ արժանվույն գնահատվում են Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի միացյալ ջանքերն՝ ազգային միասնություն կազմելու և ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու սուրբ գործում: Գիտնականը միանշանակ եզրակացնում է. «... Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սահակն իրենց մտքի ուժով հայ ժողովրդին եկեղեցական ու ազգային ինքնագիտակցության պարթոնքի հասցրին և այս ամենը համեմատում ենք այն դանայան պարզևի հետ, որը Ֆրանկ Պիպինը, քաղաքական ու եկեղեցական իշխանության բոլոր միջոցներն իր ձեռքին ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին՝ տեսնում ենք, որ Պիպինը և նրա պինակից Կինֆրիդը ողորմելի թուլեկներ են երևում մտքի այդ երկու հսկաների հանդեպ»<sup>1</sup>:



ԳԼՈՒԽ Գ.

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենչափելիորեն արգաստվոր և իր ժողովրդի համար բախտորոշ եղավ Մեսրոպ Մաշտոցի կյանքի կրոնական շրջանի գործունեությունը: Նախ՝ յուրովի մենակյաց-ճգնական կյանք՝ աշակերտ-օգնականների քրիստոնեական ուսմունքի ուսուցում և ավետարանական արվեստում վարժեցում, ապա՝ Գողթան գավառում քրիստոնեության դարձի եռանդուն քարոզչություն, այնուհետև՝ հայոց, վրաց և աղվանից ազգային գրերի ստեղծում և ուսուցում. ամենուր դպրոցների հիմնում, կրթական գործի կազմակերպում, հսկում և ղեկավարում: Ի վերջո, ծավալուն թարգմանությունների ձեռնարկում և հայագիր դպրության սկզբնավորում: Ահա այն հիմնական մեծագործությունները, որ Մեսրոպ Մաշտոցն ունեցել է իր մեծ կյանքի վերջին 45 տարիների ընթացքում (394-439):

Այն ավելի արգաստվոր եղավ հայ ժողովրդի, և ոչ միայն նրա, հետագա ճակատագրի՝ ազգի գոյատևման և առաջադիմություն համար:

Մեսրոպ Մաշտոցի կրոնական կյանքի մասին վարքագիրը հետևյալն է պատմում. «Եւ յետ այնորիկ ըստ անտարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ վիշխանակիր ցանկութիւնսն, եւ ատեալ պիտաչն պարծանաց՝ ելանէր վկնի ամենակեցոց իսարելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խառնէր, եւ անդէն վաղվադակի ի միայնակեցական կարգ մտանէր... եւ գտեալ եւս րմանս՝ յինքն յարեցուցանէր՝ աշակերտեալ նմին սովորական անտարանութեան»:

Եւ այնպէս ամենայն փորձութեանց ի վերայ հասելոց կամայական բաշութեամբ տարեալ եւ պայծառացեալ՝ ծանօթական եւ հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան:

Առեալ այնուհետեւ երանելոյն պիտառացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան: Այլ եւ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած եւ աստուածատր, որում անուն էր Շարիթ, եւ ասպնջական հիրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաստոցն Քրիստոսի: Իսկ երանելոյն վաղվադակի վաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր պաստոզն հանդերձ միամիտ սաստարութեամբ իշխանին. գերեալ քամենեւեան ի հայրենեաց ասանդեցոց, եւ ի աստանայական դիւսպաշտ սպասաւորութենէն՝ ի հնապանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

<sup>1</sup> Հ. Մարկվարտ, *Ազգ. աշխ.*, էջ 125:

Եւ յորժամ ի նոսա Կրանն կենաց սերմանեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երեւէին, կերպակերպ նմանութեամբ դիւացն **փախստական լինելով՝ անկանէին ի կողմանս Մարաց: Նոյնպէս առաւել հոգ ի մտի արկանէր Կհամաշխարհականս սփոփելոյ եւ առաւել աղօթս մշտնջենամոունչս եւ բազկատարած պաղատանս առ Աստուած եւ արտասուս անդադարս, Կմտաւ ածելով Կառաբելականն, եւ ասէր հոգալով. «Տրտմութիւն է ինձ եւ անպակաս ցաւք արտի իմոյ, փասն եղբարց իմոց եւ ազգականաց»:**

Եւ այնպէս տրտմական հոգովք պաշարեալ եւ թակարդապատեալ եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք էյս իրացն գտանիցէ:

Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր **Սահակ, Կոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ:** Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծաւք առ Աստուած կանխէին, փասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյն: Եւ Կայն առնէին աւուրս բազումս:

...«Եւ դրանից հետո նա՝ ըստ ավետարանական կանոնի՝ դարձաւ մարդասեր Աստծու ծառայութեանը. այնուհետև մերկացաւ [իրենից] աշխարհական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետևից: Եւ [հավատքի] հրամանների հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ: ... Եւ մի քանիսին ևս գտել հարուցել էր իրեն աշակերտ դարձնելով նույն սովորական ավետարանությանը:

Եւ այսպէս նա կամայական քաջութեամբ տանելով բոլորի վրա հասած փորձությունները և պայծառանալով՝ ծանոթ և հանելի էր դարձել Աստծուն և մարդկանց:

Երանելին այնուհետև իր հավատացյալներին առավ, գնաց իջաւ **Գողթնի** անկարգ ու անինամ [թողած] տեղերը: Նրա առաջ դուրս եկավ նաև **Գողթնի իշխանը**, մի աստվածավախ և աստվածասեր մարդ, որի անունը Շարիթ էր և հյուրամեծար ասպնջական հանդիսանալով՝ բարեպաշտութեամբ սպասավորում էր [նրան] Քրիստոսի հավատքի աշակերտների [կարգի] համաձայն: Իսկ երանելին իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով՝ իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց [բարոյել] գավառում. ամենքին իրենց հայրենական ավանդություններից ու աստանայական դիվապաշտ ծառայությունից գերեց, շուտ տվավ Քրիստոսի հնապանդությանը:

Եւ երբ նրանց մեջ սերմանեց կյանքի խոսքը, հայտնապէս մեծամեծ հրաշքներ երևացին գավառի բնակիչներին. դները Կանապան կերպարանքներով փախան, ընկան Մարերի կողմերը: Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպէս համայն աշխարհի ժողովրդին միախառնելու մասին, [ուստի] և ավելացրեց մշտամոունչ աղոթքն ու բազկատարած պաղատանքն առ Աստված և անդադար արտասուքը, մտաբերելով առաքյալի խոսքը. և ասում էր հոգալով. «Տրտմություն է ինձ համար, և անպակաս են իմ արտի ցավերն իմ եղբայրների և ազգակիցների համար:

Եւ այնպէս տրտմական հոգւերով պաշարված և թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդոք ինչպիսի էլք գտնի այդ բանի համար:

Եւ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] Կրաղվելուց հետո՝ վեր կացաւ այնուհետև [եկավ] հասաւ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը **Սահակ էր, որին և պատրաստ ու հավան գտաւ նույն հոգսի վերաբերմամբ:** Եւ նրանք միասին սիրով մեկտեղ՝ առավոտը կանուխ մեծ աղոթքներով Աստծուն [էին դիմում], որպէսզի բոլոր մարդկանց հասնի Քրիստոսաբեր փրկությունը: Եւ այդ անում էին շատ օրեր»<sup>1</sup>:

Կորյունը խուսափում է տեղեկութուններ հայտնել Մաշտոցի կյանքում կատարված այդ անսպասելի շրջադարձի առիթի մասին: Նրա այդպիսի մոտեցումը երևի թե ժամանակի ազգային-քաղաքական հարաբերությունների սրված իրադրություն պարտադրանքն է եղել: Այդուհանդերձ, որքան էլ սակավախոս կամ ծածկամիտ, Կորյունը չի կարողացել խուսափել և թեկուզ հեռավոր ակնարկներով ուշադրաւ մատնանշումներ արել Մաշտոցի կրօնական առաջին 6 տարիների (394-400 մինչ զրի առթիվ կրօնական համագումար ժողովը) ընթացքում նրա կատարած աշխատանքների մասին: Կորյունն այդ ժամանակաշրջանը ներկայացնում է երկու մասով. առաջինը՝ Մաշտոցի մենակյաց կյանքի 4 տարիներն են (394-398 մինչ Գողթան գավառում քարոզչություն անելը), երբ նա համախոհներ է գտել, աշակերտ է դարձրել. «աշակերտեալ նմին» և իր ճգնարանում նրանց ավետարանական ուսմունք է սովորեցրել ու առաքելական արվեստում վարժեցրել. այլ խոսքով ասած՝ նախապատրաստել է քարոզչության համար: Երկրորդ՝ երբ նա իր այդ աշակերտներին առած «փառատացեալս իւր», իջել է Գողթն և 2 տարի (398-400), գավառի իշխանի հավատարիմ օգնությամբ, «միամիտ աստարութեամբ» քրիստոնեություն դարձի եռանդուն, նույնիսկ ուժի գործադրումով քարոզչություն է կատարել: Այստեղ վարքագիծը հայտնում է նաև այն կարևոր տեղեկությունը, որ Գողթնում քարոզչություն անելու ընթացքում, Մաշտոցը մտահոգվել է երկրի ողջ ժողովրդին նույնպես միախառնելու մասին. «փամաշխարհականս սփոփելոյ», և հենց այդ միջոցին նրա մտքում ծագել է ազգային զրի անհրաժեշտության գաղափարը և նա Գողթնում բազում օրեր զբաղվել է այդ նույն խնդրով. «աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր», որից հետո միայն Մաշտոցը գնացել է Վաղարշապատ և այդ մասին հայտնել Սահակ Պարթև կաթողիկոսին, ինչն արժանացել է նրա հավանությունն ու խրախուսանքին. «պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ»: Այնուհետև նրանք երկուսով, դարձյալ բազում օրեր՝ վաղ առավոտից մեկտեղ գալով, աղոթքներ են ուղղում առ Աստված, որպեսզի այդ լուսավորությունը «Քրիստոսաբեր փրկութեանն» հասնի իրենց ողջ ազգին, այլ խոսքով ասած՝ հաջողի հայոց ազգային զրեբի գործը զլուխ բերել:

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 86-91:

Վերորերյալից հետևում է, որ Մեսրոպ Մաշտոցն իր կրոնական կյանքի առաջին 6 տարիների ընթացքում կատարել է հետևյալ երեք շատ կարևոր աշխատանքներ.

1. Աշակերտների ուսուցում-վարժեցում:
2. Գողթան գավառում աշակերտ-օգնականներով քարոզչություն:
3. Ազգային գրի մտքի ծագում և այդ խնդրով Գողթնում և Վաղարշապատում միաժամանակ պարապում:

Հիշենք, որ սա Կորյունի այն վկայությունն է, որտեղ նա առաջին անգամ խոսք է բացում ազգային գրի անհրաժեշտություն մասին՝ կապելով այն դարձի քարոզչության հետ, և սպասելի է, որ հետաքրքիր շատ հարցեր կարող են հենց այստեղից սկիզբ առած լինել: Հետևաբար, բերված հարցերի պարզաբանումները կարող են բացահայտել Մեսրոպ Մաշտոցի ո՛չ միայն ճշմարիտ տարիների գործունեություն իրական իմաստը:

### 1. Աշակերտների ուսուցում-վարժեցում

Արքունի դիվանագիտի «Հելլենական դպրություն» կրթված, Արշակունիների արքունիքում հինգ տարի շարունակ պարսկերեն, ասորերեն և հունարեն լեզուներով պաշտոնական գրագրություն վարած, գրի խնդիրներն ու օրենքներն ուսումնասիրած, արարատյան բանավոր լեզուն յուրացրած տարոնցի երիտասարդ Մաշտոցը «խորամուխ» է եղել աստվածային հանգամանքների էություն մեջ, գիտելիքներով «զարգարել» է իրեն, «տեղյակ ու հմուտ» է դարձել աշխարհական կարգերին, երկրի կառավարման գործերին, իր գորականների «սիրելին» է դարձել և ճանաչել, ամբողջապես ըմբռնել է Հայաստանի գլխին կախված վտանգը, որը սպառնում էր կործանել իր ժողովրդին: Նա թողնում է ծառայությունն Արշակունիների արքունիքում, իր շուրջն է հավաքում համախոհներ, նվիրվում կրոնական-մենակյաց կյանքի և բնակավայրերից հեռու, իր մեկուսարանում, նրանց «աշակերտներ դարձնելով» 4 տարի շարունակ վարժեցնում է Ավետարանի քարոզչությունը:

Որպեսզի Մաշտոցն իր գործի նվիրյալներին ավետարանական ուսմունք սովորեցնեք, ինչպես նաև հետագա երկու տարում Գողթն գավառում, իր այդ աշակերտներով քարոզչություն ծավալեք, առաքելական արվեստում վարժեցնեք, անհրաժեշտ էր նրանց համար Սուրբ Գրքերից համապատասխան թագմանություններ կատարել, ուսման այլ եղանակ չկար: Եթե ուսման սկզբում կարող էր բավարարվել բանավոր թարգմանություններով, ապա ուսումը խորացնելու, ձեռք բերվածն ամրացնելու նպատակով Սուրբ Գրքերից ընդարձակ և զբաղվող թարգմանություններն անհրաժեշտություն էին, եթե ոչ պարտադիր (անշուշտ, օտար այբուբենի գրերով) անգամ նրա աշակերտների համար: Եւ քանի որ այդ ուսուց-

մանն անմիջապես հաջորդելու էր Մաշտոցի և իր օգնական աշակերտների ընդգրկուն քարոզչությունը, ապա կպահանջվեք նաև կազմել ժողովրդի համար և՛ մատչելի, և՛ անսխալ թարգմանված քարոզվող գրավոր նյութ (և ոչ միայն կրոնական): Ահա գործերի այդպիսի ընթացքն էր, որ զուգակցվում, անբաժանելի էր դարձնում քարոզչության և ազգային գրի ստեղծման աշխատանքները:

Հայ ժողովրդի ուծացման վտանգը, ինչպես նաև երկիր թափանցող տարբեր ազանդների դեմն առնելը հրատապ ու ծավալուն քարոզչություն էր պահանջում: Քարոզելու նախկին ձևերն ու ընթացքն այլևս չէին կարող բավարարել ժամանակի պահանջները, անհրաժեշտ էր առավել արդյունավետ միջոցներ որոնել, չուշացող գործողություններ ձեռնարկել, և որքան հնարավոր է արագ, համատարած կարգով ժողովրդի մեջ բարձրացնել քրիստոնեական հավատը, ամրացնել երկրի քրիստոնեական եկեղեցին: Սա էր ժողովուրդը միավորելու և ազգային գիտակցության բերելու վերջին հնարավորությունը: ԱՀԱ ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ԱՅԴ ՎՏԱՆԳՆ Է՝ ՄՏՔԻ ՄԵՐ ԵՐԿՈՒ ՀՍԿԱՆԵՐԻ ՄՈՏ ՍԿԶԲՆԱՊԵՍ ԱՌԱՋԱՅՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ: Այս ըմբռնմամբ է, որ դեպքերի հաջորդական ընթացքն ենթադրել է տալիս, որ սխալ չէր լինի ընդունել, որ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐԱՍՏԵՂԾԻ ՄԵՆԱԿՅԱՅ ԶՈՐՍ ՏԱՐԻՆԵՐԸ ՈԶ ՄԻԱՅՆ ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԵՆ ԵՆ ԵՂԵԼ, ԱՅԼԵԻ (ԳՈՒՅԵ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ) ԳՅՈՒՏԻ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՍԿԻԶԲԸ, ԱՌԱՋԻՆ ԵԻ ՎՃՌԱԿԱՆ ՓՈՒԼԸ: Հետևաբար Մաշտոցի անապատական տարիները, ոչ միայն «աննպատակ» չեն եղել, այլ՝ հեռամտորեն նախատեսված են եղել որպես անվտանգ ճանապարհ՝ հայոց գրերի ստեղծման աշխատանքներն անխափան տանելու նպատակով (զուգակցված դարձի քարոզչությունը):

Սուրբ Գրքերը, լինեին հունարեն, թե ասորերեն, լեզվականորեն մշակված գրական կատարյալ գործեր էին, որոնց հայերեն գրավոր թարգմանությունները հնարավորություն էին ընձեռում հայոց զարգացած բանավոր լեզվի ողջ կարողությունը կանոնակարգված կերպով արտահայտելու, նրա բարդ հնչյունական կազմությունն ամբողջապես, լիակատար կերպով գրսեկորելու համար: Անշուշտ, նույն նպատակով գրի կառավելին նաև ժողովրդական իմաստուն գրույցներ, խրատներ և ավանդական պատմություններ: Այդ էր բանավոր լեզուն գրավոր արտահայտելու, այն գրականացնելու, լեզվի հնչյունային համակարգը հայտնաբերելու վճռական աշխատանքի միակ և անսխալ ճանապարհը: Իսկ Մաշտոցը զա կարող էր անել իր համար ոչ այնքան դժվարին միջոցով: Նա կարող էր հայերեն գրառումներ կատարել, հիմք ընդունելով թարգմանվող լեզուներից որևէ մեկի՝ ասորերենի կամ հունարենի այբուբենի գրերը, և այդ գրերի շարքի համապատասխան տեղերում ավելացնելով հայոց լեզվի այն հնչյունների նոր, իր կողմից կազմված նշանները, որոնք

չունենր տվյալ լեզուն, և մյուս կողմից նրա գրերի շարքից հեռացնեն այն գրանչանները, որոնց հնչյունները չունեն հայոց լեզուն: Աշխատանքի ընթացքում մշտապես ստուգելով ու ճշտելով Մաշտոցը կարող էր կազմել (և համոզված ենք, որ կազմել է) հայերենի իր առաջին աշխատանքային օտարագիր այբուբենը և առաջ տանել թե՛ իր աշակերտների ուսումը, և թե՛ հայ գրի ստեղծման իր զուգահեռ աշխատանքը: Իսկ երբ ամբողջապես հայտնաբերված ու նշանակված կլինեին հայոց բանավոր լեզվի բարդ հնչյունների կազմությունը, նրա համակարգը, երբ վերջնականապես լուծված կլինեին գրի ստեղծման այդ գերխնդիրը, նրա հիմնահարցը (իսկ այդ գործնական կիրառումների միջոցով բազմիցս փորձարկվող ու ստուգվող, տարիներ պահանջող աշխատանք էր), գրանից հետո միայն Մաշտոցը կարող էր մտահոգվել երկրորդ հիմնահարցի՝ իր օտարագիր հայերեն այբուբենի ազգայնացման մասին, ինչպես նաև գրանչանների նկարվածքի, դյուրին գծագրություն, միասնական համաչափությունների և հավասարաստիճան արտահայտելու հարցերով:

Անշուշտ, վերը առաջարկված միջոցը հայերենի այբուբենը կազմելու միակ միջոցը չէր, կար ևս մեկը. Մաշտոցը կարող էր դա անել հնչյունները նշանակելով իր իսկ կողմից ընտրված, բոլորովին անկախ գծագրված նշաններով, ասենք՝ այնպես ինչպես առաջարկում է ակադ. Գ. Սեակը. «... ամեն տեսակ պայմանական նշաններով. ասենք թվանշաններով, կետով ու գծով և այլն»: Հարկավ այդ ազատ ու անկաշկանդ եղանակով հնչյունների նշանակումներով այբուբենի կազմելը բնավ դժվար չէր և ոչ էլ ժամանակատար, նույնիսկ այն կարող էր ավելի արագ կատարվել, քան առաջին դեպքում: Սակայն չի կարելի չհամաձայնել, որ այս երկրորդ սկզբունքով այբուբեն կազմելու դեպքում նրա յուրացումը չափազանց դժվար կլինեին թե՛ սովորելու, և թե՛ կիրառելու տեսակետից: Նախ իր բոլորովին անձանոթ և անկանոն նշանակումների, ապա և չտպավորվող ու անհամաչափ գծագրված լինելու պարզ պատճառով (նկատի ունենք նշանների կիրառվելու հաճախականությունը), էլ չենք խոսում արագագրություն, ինչպես նաև դյուրին գծագրության գործնականում կարևոր հարցերի մասին: Ահա այդ պայմաններում նրա միակ իմացողն ու կիրառողը, այն էլ ոչ առանց մի երկրորդ օժանդակող գրի օգնությամբ (կատարված նշանակումները վերհիշելու կամ հիշեցնելու համար, և այս պարագայում ևս կարող էր լինել ասորերենը կամ հունարենը) միայն Մաշտոցն էր լինելու և ուրիշ ոչ ոք: Նույնիսկ ի՛նքը՝ Մաշտոցը, այն անսխալ ու վարժ գործադրելու ճանապարհին մեծ դժվարությունների կհանդիպեր: Հետևաբար բոլոր գործածական կողմերով դյուրին էր ու ձեռնատու (նույնիսկ ստեղծվող հայ գրի աշխատանքները քողարկելու նպատակով), որպեսզի Մաշտոցը հայերենի աշխատանքային իր այբուբենը կազմեր՝ հիմք ընդունելով հունարեն կամ ասորերեն այբուբենների գրերը: Այդ ճանապարհով կազմված հայերեն այբուբենը նոր ուսուցում

չէր պահանջում և ոչ էլ հատուկ վարժվելու կարիք ուներ: Այն անդրադիտությունն առաջ չէր բերում: Դա էր հայերենի օտարագիր այբուբենի արագ կազմելու, դյուրին յուրացնելու և ազատ կերպով կիրառելու միակ միջոցը, որը, միաժամանակ, հնարավորություն էր տալիս Մաշտոցին իր ծանր ու դժվարին գործում ներգրավել նրանց ուղբեր կրթվել և լավ գիտեին նորակազմ հայերեն այբուբենի հիմքը կազմող ասորերեն կամ հունարեն լեզուները: Իսկ այդպիսիք, որոնք տիրապետում էին ասորերենին կամ հունարենին և պատրաստ էին ճգնություն մը օգնելու Մաշտոցին, այդ ժամանակ քիչ չէին ոչ միայն կրոնավորների մեջ, այլև երկրում: Երբ կպարզվի այն կարևոր հարցը, թե Մաշտոցը որ լեզվի գրերն է հիմք ընդունել իր աշխատանքային այբուբենը կազմելու համար, կպարզվի նաև, թե ուղբեր էին, ինչ կրթություն տեր և ինչպիսի նվիրյալներ էին գրաստեղծի առաջին, մենակյաց տարիների և Գողթն գավառի քարոզչության նրա աշակերտ-օգնականները, և թե սկզբնապես որքան կազմակերպված և համընդհանուր օգնություն է ցույց տրվել Մաշտոցի ազգապահպան անհետաձգելի գործունեությունը:

Մինչև պարզաբանումն այն կարևոր հարցի, թե Մեսրոպ Մաշտոցը ո՞ր լեզվի՝ հունարեն, թե՞ ասորերեն գրերի հիման վրա է կազմել հայերենի իր առաջին, աշխատանքային այբուբենը, առաջ անցնելով ասենք, որ հետագայում, երբ նա հոգ էր տանելու այդ օտարագիր հայերեն այբուբենի տառանշաններն ազգայնացնելու, գրերի պատկերներն ինքնատիպ, ինքնուրույն դարձնելու մասին, որպիսի հնարամտությամբ էլ որ աներ դա, միևնույն է չէր կարող ծածկել, իսպառ վերացնել իր հայ գրերի նկարվածքային խմբերի երկհետային հիմնանկարները: Եւ հենց այդ երևույթի քայահայտամբ միայն կարող են հավաստի կերպով պարզվել մեսրոպյան պատկերագոյացումները, հանճարեղ գրաստեղծի տառանշաններ կազմելու ուրույն ՍԿԶՐՈՒՆ-ՔՆԵՐԸ: Միաժամանակ կպարզվեն նաև հայոց ազգային գրերի ՍԿԶՐՆԱՂԲՅՈՒՐԸ, որի պարզաբանումն այնքան հեռուներն է տարել ինդերին անդրադարձած ոչ սակավաթիվ ուսումնասիրողներին:

\*\*\*

Գողթան գավառում կատարած քարոզչական գործունեության ուսումնասիրությունից առաջ փորձենք պարզել թե Մեսրոպ Մաշտոցը ո՞ր լեզվի այբուբենը կարող էր հիմք ընդունել հայերենի աշխատանքային այբուբենը կազմելիս՝ ասորերենի, թե՞ հունարենի: Հարցի մեր պատասխանը հետևյալն է.

1. Մաշտոցը կարող էր օգտագործել այն լեզվի այբուբենը, որով նա կրթվել էր ու որին լավ էր տիրապետում, դա հունարենն էր. «Ի մանկությունս տիւսն վարժեալ հելլենական դպրութեամբն». («Մանկական հասակում ես կրթվել էր հելլենական դպրությամբ»):- Վկայում է վարքագիրը:

2. Մաշտոցը կարող էր օգտագործել ժամանակի կատարելագործված ու զարգացած լեզվի այբուբենը՝ դա նույնպես հունարենն էր: Ահա՛ թե ինչու:

ա. Հունական այբուբենն անջատական էր, գրերը իրար կողքի էին շարվում ջոկ ջոկ, մինչդեռ ասորական այբուբենը կցողական էր, գրերը շարվում էին իրար կցված, և ամեն անգամ, երբ փոխվում էր տառերի հարեանությունը, տառերն իրենց կցվող մասերում փոփոխություններ էին կրում:

«Իմաստուն Մեսրոպը տեսել է կցողականի անպատեհությունները և անջատականի առավելությունները, և հակառակ ավելի տարածված ասորական ու պահլավիկ այբուբենների դրության ընդունել է հունական դրությունը, - գրում է ահադ. Հր. Աճառյանը և ավելացնում,- Այսպիսով մենք էլ, ինչպես և մեկ հետ մեր դրացի վրացիները՝ այսօր անջատական այբուբենների լավագույն շարքի մեջ մեր տեղն ունենք»<sup>1</sup>:

բ. Հունարեն այբուբենում ձայնավորները գրվում էին, իսկ ասորական այբուբենում՝ ոչ, ընթերցողը պետք է կռահեր այն, այդ դրությունը դժվարություններ էր հարուցում և պատճառ էր դառնում հաճախակի սխալ ընթերցումների (անշուշտ այն կաստկանար Մաշտոցի աշխատանքի ընթացքում): Այդ մասին Հր. Աճառյանը հետևյալն է գրել. «Մեսրոպը, որ ամեն օր աչքի առաջ տեսնում էր անձայնավոր այբուբենների պատճառած դժվարությունները, ընթերցանության այն բավմաթիվ սխալները, որ հայ նորուսներն անում էին ասորերեն կամ պահլավերեն գրելու կամ կարդալու ժամանակ, իմաստուն գտնվեց այստեղ էլ հետևելու հունական այբուբենական դրության՝ թե՛ հայերենի, և թե՛ վրացերենի համար, որով և տվավ մեզ այս կողմից էլ կատարյալ այբուբեն: Այս է ցույց տալիս նաև Կորյունի կարճ, բայց փորձ վկայությունը. «յօրինէր սիղորայիւք եւ կապօք եւ ձայնատուր նշանօք»<sup>2</sup>:

գ. Ասորերեն, ինչպես և պահլավերեն գրերը գրվում էին աջից դեպի ձախ, ձախակողմյան ուղղությամբ, իսկ հունարեն գրերը՝ ձախից աջ, աջակողմյան ուղղությամբ: Մեսրոպ Մաշտոցն այս հարցում ևս հետևել է հունական աջընթաց գրություն ոճին: Նկատենք, որ վերը բերված հիմունքներով են կազմված նաև հայերեն, վրացերեն և աղվաներեն այբուբենները, որը հատկանշական է գրաստեղծի սկզբունքներին և հավաստում է, որ նրա հայերեն առաջին օտարագիր այբուբենը նույնպես կազմված է եղել այդ եղանակով: Գրություն այդ ուղղության մասին Հր. Աճառյանը հետևյալն է գրում. «Այն ժամանակ, երբ Մեսրոպը իր ապգի համար մի այբուբեն հնարելու հետամուտ էր, հայերը երեք լեզու էին գործածում. ասորերեն, պահլավերեն և հունարեն: Սրանցից առաջին երկուսը աջից ձախ էին գրվում, միայն

<sup>1</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 494:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 495:

հունարենը ձախից աջ էր: Ենթադրելով, թե երկու լեզվի գործածությունը միասին ավելի շատ պիտի լիներ քան միայն հունարենը, հավատալով նույնպես պատմիչների խոսքին, որոնք ցույց են տալիս, թե ասորերենը շատ ավելի տարածված էր Հայաստանում, քան հունարենը, կարող էր հետևյալն էլ, որ հայերը ավելի վարժված էին աջից ձախ գրության, քան թե ձախից աջին: Սակայն Մեսրոպը չհետևեց այս ձևին, թողեց ավելի տարածված դրությունը և հունարեն գրության ոճը ընդունեց»<sup>1</sup>:

3. Մաշտոցը պետք է նախընտրեր այն լեզվի այբուբենը, որով առավել հարուստ և զարգացած գրականություն կար. դա ևս հունարենն էր:

4. Մաշտոցը կարող էր օգտագործել այն լեզվի այբուբենը, որով կրթվածները շատ էին երկրում, որոնց անմիջական օգնության կարիքն ուներ նա. այդ լեզուն դարձյալ հունարենն էր:

5. Ի վերջո, այն երևույթը, երբ հայերենի այբուբենից հեռացվում են այն գրանշանները, որոնց հնչյունները հունարենը չունեն, ապա մնում է հունարենի այբուբենը, առանց այն գրանշանների, որոնց հնչյունները չունեն հայերենը: Եւ մի՞թե սա վերն ասվածի հավաստումը չէ: Այս հարցում ևս գիմենք Հր. Աճառյանի խոսքին, երբ մերժելով հայ գրերի սեմական կարգը, գիտնականը գրում է. «Մի պարզ համեմատություն սեմական, հույն և հայ այբուբենների, ցույց է տալիս, թե հայ տառերը չունեն թևավ սեմականի կարգը... Հունարենը սակայն բայլ առ բայլ համաձայն է մեր այբուբենին, որ հետևում է նրանից միմիայն իր գերազանց ճիշտության պատճառով: Հավելվածական տառերն անցնելուց հետո՝ դասավորության նույնությունը շարունակվում է մինչև Բ. սրան հաջորդող հունարեն փս և ով գրերը չկան հայերենում:

Ահա հայերեն և հունարեն այբուբենները դեմ դեմի՝ իրենց բնական շարքով:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ		
Α	Β	Γ	Δ	Ε	Ζ	Η	•	Θ		
Ժ	Ի	Լ	Խ	Ճ	Կ	Չ	Ղ	Ճ		
•	Ι	•	•	•	Κ	•	•	Λ		
Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ		
•	Μ	•	Ν	•	Ο	•	Π	•		
Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ	Ը		
Ρ	Σ	•	Τ	•	•	Υ	Φ	Χ	Ψ	Ω

«Հունարեն այբուբենը ընդամենը 3 տառ ունի, որից, բարեբախտաբար, փորկ ենք մենք (Ξ ρυ, Ψ փս, Ω ով): Իսկ մենք ընդամենը 15 տառ ունենք, որից փորկ է հունարենը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 497:

<sup>2</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 557:

Հետևապես բոլոր գործնական կողմերը բերում են այն մտքին, որ Մեսրոպ Մաշտոցը հայերենի իր առաջին, պայմանականորեն ասված, աշխատանքային այբուբենը կազմել է՝ հիմք ընդունելով հունարենի այբուբենը, պահպանելով նրա տառերի հնչյունները, պատկերները, կարգը տառերի շարքում և նրանում տեղ-տեղ (համապատասխան պատկերի կամ հնչյունի) լրացրել է հնչյունների՝ իր կողմից կազմած նոր նշաններով, որպիսիք չունեն հունարենը, և ընդհակառակը, հունարեն այբուբենի շարքից հեռացրել է այն գրանշանները, որոնց հնչյունները չկային հայոց լեզվում: Ահա, հայերենի այդ նորակազմ օտարազիր այբուբենով, որը սովորելու և գործադրելու համար առանձին դժվարություն չէր կարող հանդիսանալ հունարենով կրթված նրա ընկերների ու աշակերտների համար, Մաշտոցն առաջ է տարել իր գրերի ստեղծման և քարոզչության նախապատրաստվելու գործերը: Նա իր աշակերտ – օգնականներին ավետարանական ուսմունք սովորեցնելու, և առաքելական արվեստով վարժեցնելու նպատակով Սուրբ Գրքերից գրավոր թարգմանություններ և գրառումներ կատարելու ճանապարհով աստիճանաբար հայտնաբերել և լրացրել է հայոց բանավոր լեզվի հնչյունները և ամբողջացրել է հայերենի իր օտարազիր աշխատանքային այբուբենը:

2. Գողթան զավառում աշակերտ-օգնականներով քարոզչությունը

Մեսրոպ Մաշտոցն ընդամենը 4 տարի անց (394-398 թթ.), դուրս է ելնում իր նախընտրած մենակյաց կյանքից, որի համար նա թողել էր ծառայությունն Արշակունիների արքունիքում, և ավետարանականություն ուսած ու առաքելական արվեստում վարժված իր աշակերտներին՝ «վիսաւտացեալս իւր» օգնականներ ունենալով, իջնում է Երնջակի լեռներում ծվարած իր ճգնարանից և Գողթան գավառում 2 տարի շարունակ (398-400 թթ.), եռանդուն կերպով ընդարձակ քարոզչություն է կատարում: Թե որքան անհարիր էր ազգի նվիրյալ, տիրտանական գործունեության ընդունակ Մաշտոցին քաղաքներից ու շենքերից, նույնիսկ վանքերից հեռու մնալը, իր երկրի ու ժողովրդի հոգսերի նկատմամբ անտաբեր ու անտեղյակ լինելը, անապական մեկուսի կյանքը (որքան էլ որ այն այդ ժամանակ ընդունված լիներ ուսումնասիր երիտասարդության շրջանում), հայազեռների մեջ կասկածանք է առաջացրել: Հիրավի ինչպես կարող էին համատեղվել այդքան հակամետ կացություններ, ինչպիսիք են՝ նախ Մաշտոցի փափագած անվրդով ու անտարբեր մենակեցությունը, և մեկ էլ դրան անմիջապես հաջորդված նրա Գողթան գավառում նույնքան եռանդուն, նույնիսկ բռնություն ու հալածանք գործադրած քարոզչությունը: Մաշտոցի մենակյաց կյանքի առթիվ գիտնականների հայտնած տարակուսանքն անհիմն չէ: Ուսումնասիրողները գտնում են,

որ Մաշտոցը որքան էլ տարված լիներ մեկուսի կյանքով, որքան էլ կամենար այդ անել, միևնույն է, նա չէր կարող մինչև վերջ իր ազգի ծանր հոգսերի հանդեպ անտարբեր մնալ:

«Մաշտոցի նման անձը չէր կարող մինչև վերջն առանձնացած մնալ, թեկուզ մի քանի աշակերտի հետ, - գրում է Մանուկ Աբեղյանը: - Նա աշխարհի մարդ էր, ծառայած մարդ, աշխարհական ու փնվորական կարգերին հմուտ. ինչքան էլ «մերկանում է իրենից իշխանակիր ցանկությունները», չի կտրվում աշխարհից և անգործության չի մատնում իրեն»<sup>1</sup>:

Այդ մասին ընդարձակ խոսք ունի Հր. Աճառյանը. գիտնականը գրում է. «Որչափ էլ որ տաք էր Մեսրոպի սերը դեպի անասական կյանքը, այնուամենայնիվ, նա չէր կարող աստնությամբ վերաբերել իր ժողովրդի խավար ու անկյալ վիճակին: Տեսել էր նա ինչպես այդ ժողովուրդը խոր տագնապի և հեթանոսական նախապաշարմունքների մեջ խարխալում էր: Մտածելով ժողովրդի մասին, իր հոգին վայրանում և իր սիրտը բարի նախանձով բորբոքվում էր: Միթե ինքը միայն իր անձի կրթությամբ պիտի փրկվեր. փոխանակ իր հոգին միայն կրթելու, ավելի հաճելի գործ կատարած չպիտի լիներ, եթե ամբողջ ժողովրդի հոգին կրթեր:

Այսպիսի մտածմամբ, հոգեկան այսպիսի ներշնչությամբ, լայն հասարակության օգտակար ցանկությամբ լցված՝ հրաժեշտ տվեց Մեսրոպ իր լեռներին, իր ճգնական բարայրներին, և իր հետ առնելով իր աշակերտներին ու ընկերներին, Գողթան գավառի բարբարոս ու անկիրթ տեղերն իջավ քարոզչության համար. «Առեալ այնուհետև երանելոյն փաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ եւ յանդարման տեղիս Գողթան»<sup>2</sup>:

Նկատի առնելով Գողթան գավառում կատարած քարոզչության բնույթը, առկա ազգային-քաղաքական կացությունը՝ երբ եկեղեցին երկրում իշխանություն էր ձեռք բերում, ինչպես նաև Մաշտոցի անձը, ունակությունները, նրա հետագա ողջ գործունեությունը Ա. Մարտիրոսյանը, ոչ առանց հիմքի, այն միտքն է հայտնում, որ Մաշտոցի մենակյաց տարիներն աննպատակ չեն եղել: Մենք կավելացնեինք՝ այն որոշակի նպատակով նախապես ծրագրված է եղել: Գիտնականը գրում է. «Մի մարդ, որ այնպես խորամուխ է եղել աշխարհական կարգերին և չի հիասթափվել, իսկ այնուհետև գիտենք, թե ինչպիսի եռանդուն գործունեություն է ծավալում՝ մի քանի անգամ շրջելով Հայաստանում և անցնելով Վրաց աշխարհից մինչև Կոստանդնուպոլիս, չէր կարող այդպիսի ոգևորություն ունենալ անասական կյանքի նկատմամբ, չէր կարող անատիթ մենակեցության դիմել»<sup>3</sup>:

Մեսրոպ Մաշտոցը Գողթան գավառի աստվածավախ, «երկիրսած եւ աստուածասէր» Շաբիթ իշխանի հավատարիմ օգնությամբ՝ «միամիտ աստարութեամբ», երկու տարի շարունակ, իր աշակերտներին օգնականներ

<sup>1</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 9:  
<sup>2</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 84-85:  
<sup>3</sup> Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 167-168:

ունենալով, Գողթան գավառում ազդու միջոցներով քարոզչություն է կատարում: Նա ավետարանական համոզումներից և առաքելական խոսքից զատ բռնություն է գործադրել, ուժի է դիմել և Հեթանոսներին՝ «դուացն» հայածել, փախստական է արել Արաբսի այն կողմը՝ «ի կողմանս Մարաց», որն այնքան ցավագին է նկարագրել պատմաբան Լեոն: Միանգամայն իրավացի է Ա. Մարտիրոսյանը, երբ նկատում է, որ Մաշտոցն այդ անելու իրավունք է ունեցել, դա նրան արտոնված է եղել, որ նրան սպասել է Գողթան գավառի իշխանը: Գիտնականը համոզված գրում է. «Մաշտոցն անսպասելի իջնում է իր ճգնարանից, որին դիմավորում է Գողթնի իշխանը. «Ընդ առաջ էլանէր նմա իշխանն Գողթան», - ուրեմն, բնականաբար, սպասում էր նրան: Պարզ նկատելի է, որ Մաշտոցը ոչ թե մի սովորական ճգնավոր է, այլ՝ ինչ-որ լիազորություններով օժտված անձնավորություն, որին դիմավորում է իշխանը: Բացի այդ, Մաշտոցը չի բավարարվել միայն իր ավետարանական արվեստը բանեցնելով, այլ հենվել է նաև ուժի վրա, ուժ է գործադրել, այլապես ինչով պիտի բացատրել իշխանի հավատարիմ օգնությունը: Յետևանքը լինում է այն, որ «կերպակերպ նմանութեամբ դուացն փախստական լինելով՝ անկալնէին ի կողմանս Մարաց»: Դա ևս խոսում է հալածանքի մասին»<sup>1</sup>:

Մաշտոցի այս քարոզչությունը հայագետները նմանեցնում են Գրիգոր Լուսավորչի քրիստոնեության դարձի քարոզչությանը, և Մաշտոցին կոչում՝ երկրորդ Լուսավորիչ: Սակայն նմանությունը սոսկ նրանց գործադրած միջոցներին կարող է վերաբերել. առաջինում՝ սուր-ավերում էր, իսկ երկրորդում՝ բռնություն-հալածանք: Եթե 4-րդ դարի արշալույսին Լուսավորչի գործունեությունը գորավիզ էր Հայոց Տրդատ Գ. թագավորի սուրբ, և այն նպատակ ուներ ազգը թանձր կռապաշտությունից առաջադեմ քրիստոնեական դարձի բերելու, ապա այդ նույն դարի մայրամուտին Մաշտոցի, նրա գործի համախոհների, այս դեպքում և Գողթան գավառի Շաբիթ իշխանի միացյալ ջանքերը, նվիրված էին երկիրը կիսված, թագավորությունը մասամբ կորցրած ազգի միասնությունը, նրա ինքնուրույնության պահպանմանը: Առաջինի սուրն ու Հեթանոսական տաճարների ավերումները, որքան էլ անհամահունչ, ազգի առաջադիմությունը նպատակով էր, իսկ երկրորդի բռնություններն ու հալածանքը՝ միայն ու միայն ազգի միասնության և գոյատևման համար:

Որքան էլ անդրադառնում ենք Մաշտոցի՝ Գողթն գավառում իր ոչ սակավաթիվ աշակերտներով ու ընկերներով կատարած քարոզչության հանգամանքներին, հաշվի առնում նրա ԸՆԴԳՐԿՈՒՄԸ, ՏԵՒՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՇՏՈՅԻ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՐԱՆ ԱՐՏՈՆՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ԳԱՎԱՌԻ ԻՇԽԱՆԻ ՀԼՈՒ ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅՆՔԱՆ ՀԱՄՈՉՎՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՆ ՆԱԽՕՐՈՔ ԾՐԱԳՐՎԱԾ ԵՒ ԽՆԱՄՔՈՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ԵՂԵԼ: Իսկ դա, ինչպես արդեն ասել ենք, նշանակում է, որ Մաշտոցը Գողթն գավառում

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 170:

քարոզչություն անելուց առաջ, իր մենակյաց 4 տարիների ընթացքում, ոչ միայն չի կտրվել, անհաղորդ չի մնացել իր ժողովրդի հոգսերի նկատմամբ, այլ հենց այդ նույն նպատակով է առանձնացել և անմնացորդ նվիրվածով, իր հանճարի ուժով, իսկապես որ ճգնական աշխատանք է կատարել: Գրաստեղծը մեկուսի, անվտանգ պայմաններում, իր ազգանվեր գործի նվիրյալների հետ միասին ձեռնամուխ է եղել Հայոց զրբերի ստեղծման և քարոզչությանը նախապատրաստվելու միջանց անբաժանելիորեն զուգակցված, մեկով մյուսը լրացվող, հույժ կարևոր ու անհետաձգելի գործը գլուխ բերելուն: Իսկ դա անելու համար 4 տարի հետաձգելի գործը գլուխ բերելուն: Իսկ դա անելու համար 4 տարի ժամանակը քիչ չէր: Քաղաքականորեն վտանգավոր լարված այդ ժամանակներում, որքան որ հրատապ էր քարոզչություն ծավալելու գործը, ժողովրդի մեջ քրիստոնեական հավատի ամրացումը, որպես նրա համախմբման և ինքնուրույնության պահպանման առաջնային միջոցի, նույնքան և անհրաժեշտ էր նախ և առաջ աշխատանքները քողարկել, և ապա գործնական ճանապարհով ստուգել, լրացումներ ու ճշտումներ կատարել: Այդ ժամանակ նորաստեղծ զրբերի ստուգման և ընդհանրապես այդ գործն անվտանգ առաջ տանելու համար այլ ելք չկար, քան՝ քարոզչությունը: Ուստի սխալ չէր լինի մտածել, որ Գողթնում քարոզչության 2 տարին (398-400) պայամանավորված է եղել նաև նորաստեղծ զրբերի ստուգումների ավարտով: Եւ մի՞թե կար ավելի գերազանցի ճանապարհ բանավոր լեզվի հնչյունական համակարգը լիակատար կերպով բացահայտելու և բացահայտված հնչյուններն անսխալ նշանակելու-պատկերավորելու և կամ դրական լեզվի օրենքներն ու կանոնները սահմանելու լավագույն, նույնիսկ եզակի հնարավորություն, քան՝ քարոզչությունն էր, գործնականում նրա կիրառումը: Այս պարագայում Մաշտոցի գրի խնդրով պարապելու ժամանակը կազմում է ոչ թե 4 այլ 6 տարի (394-400) մի ժամանակ, որը միանգամայն բավական էր, որպեսզի գրաստեղծն ավարտեր իր անթերի զրբերի ստեղծումը, և իրականացներ իր և Սահակ Պարթևի կողմից նախապես ծրագրված, խոսքով Գ. և Վուամշապուհ թագավորների խրատուսած Հայոց ազգային գրի ստեղծման գործը:

Վերը շարադրվածից հետևում է, և համոզված ենք, որ Կորյունը միտումնավոր է այդքան կարևորել Մաշտոցի քարոզչությունը Գողթն գավառում և միանգամայն մոռացություն մատնել նրա հենց այդտեղ կատարած զրբերի գյուտը, այդ մասին բավարարվել է ակնարկելով միայն, որ քարոզչության ընթացքում և այդ նույն առիթով ու նպատակով է Մաշտոցի մտքում ծագել երկրի ողջ ժողովրդին ևս մխիթարելու գաղափարը, և ոչ ավելին. «Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի ժողովրդին մխիթարելու մասին»: Վարքագրի այդպիսի մոտեցումը նպատակ է ունեցել ազգային ինքնուրույն գրի հարցն եկեղեցու ներքին մի սովորական խնդիր ներկայացնելով, անկարևոր ճանաչելով այն հեռացնել Արքայից արքայի, և հատկապես Իրանի անգիջում մոգերի



վտանգավոր, ինչպես նաև Մեծ Հայքի եկեղեցիներում ու դպրոցներում գործող օտարազգի անբարյացակամ կրոնավորների ուշադրությունից, և այդ ճանապարհով դուռ բանալու հետագա պահանջվող աշխատանքներն անվտանգ շարունակելու համար (այդ մասին մանրամասն՝ ստորև), որոնք այլևս չէին կարող ծածուկ տարվել (նկատի ունենք հատկապես նորաստեղծ գրերի սկզբնական ուսուցումները): Վարքագրի այդ կանխավ մտածված և, իհարկե, պարտադրված զգուշավորությունը, բնականաբար, հայագետների կողմից «ծածկամտություն» է նկատվել, արժանանալով նրանց և՛ հանդիմանություններին, և՛ ակոսոսանքին: Առաջ անցնելով ներկայացնենք վարքագրի այդ վերաբերմունքի առթիվ գիտնականների հայտնած կարծիքները. «Թեև Մաշթոցի ձեռնաստուն աշակերտը և նրա կենսագիրը, նա գրերի մասին շատ բան չգիտե, գոնե շատ բան չի պատմում,- գրում է Ն. Ադոնցը և ավելացնում: Նրան հետաքրքրում է կարծես ոչ այնքան գյուտը, որքան Մաշթոցի քարույշությունը և այն էլ Հայաստանի ծայրագավառներում և Ադվանից Վրաց աշխարհներում: Այս հանգամանքը ընդունակ է իրավամբ կասկածներ հարուցելու»<sup>1</sup>:

Իսկ, երբ Կորյունը գյուտը վերագրել է աստվածային լուսավորության և խնդիրը ծածկել հրաշքի ներքո, Հ. Մարկվարտն ակոսոսանքով հայտնում է, որ. «Այսպիսով Կորյունը հայկական գրերը ներկայացնում է իբրև Մաշտոցի մտքի ծնունդ, որը նրա կողմից դիտվում է որպես աստվածային լուսավորության շնորհ: Այսպիսի մոտեցումը պատճառ է հանդիսացել, որ գյուտի հետ կապված հետաքրքիր հարցերն սկզբից ևեթ մատուցվեն լրության»<sup>2</sup>:

Մենք մտածված կերպով կատարեցինք այս անժամանակ հղումները, նպատակ ունենալով այսու կատարվող քննություններում մշտապես աչքի առաջ ունենալ վարքագրի միտումնավոր սակավախոսությունը, ծածկամտությունը, թերի ասվածն ու անհավանական թվացող շեղումները: Քարոզչությունն աստվածային գործության վերագրելով, նախ՝ նպատակ է ունեցել ազգային գրի գործի հետագա շարունակումն ու նրա հրապարակումն օտարի կողմն ուղղել, նրա օգնությունն ապավինել: Սա էր այդ ժամանակ գրի ստեղծման գործընթացը տանելու ապահով ճանապարհը: Եւ մի՞թե այդ մասին չէ խոսքը, երբ Կորյունն իր պատմությունն ավարտում է հենց այսպիսի հիշեցումով. «Ոչ սուտապատում ճարտարիսու եղևալ առ ի մերոց բանից Կորեւն իմոյ կարգեցաք, այլ պլանախագոյնն թողեալ, եւ ի նշանաւոր գիտակացն բաղելով Կիսմառոսու կարգեցաք, որ ոչ միայն մեզ այլ եւ որ Կիսմառոսու ընթեռնուն՝ յայտնի է:

Քանպի չէաք իսկ հանդուրժօղք՝ Կամենայն արարեալսն կտակաւ նշանակեալ Կիրաքանչիրան. այլ ի դիրապոյնս եւ ի հեշտագոյնս, յառաքելականս անդր Կանձինս պատապարեցաք»: ...«Ոչ թե սուտապատում ճարտարախոս

<sup>1</sup> Նիկողայոս Ադոնց, Մաշթոց և նորա աշակերտներն ըստ օտար աղբյուրների. Մեսրոպ Մաշտոց. Հոդվածների ժողովածու. ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 199-200:  
<sup>2</sup> Հ. Մարկվարտ, *Ազգ. աշխ.*, էջ 147:

լինելով մեր խոսքերով՝ իմ հոր մասին կարգեցինք [այս], այլ շատը թողնելով և նշանավոր գիտակներից բաղելով՝ այս համառոտը գրեցինք, որ ոչ միայն մեզ այլև այս մատյանը կարդացողներին հայտնի է:

Որովհետև իսկապես չէինք դիմանալ նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրքի մեջ նշանակելուն, ուստի պատապարվեցինք այս ավելի հեշտ ու դյուրինով՝ առաքելականով»<sup>1</sup>:

Հետևապես, այս ըմբռնմամբ և պիտի առաջնորդվենք հաջորդ դեպքերի պարզաբանումներում:

### 3. Ազգային գրի մտքի ծագում և այդ խնդրով Գողթնում և Վաղարշապատում միաժամանակ պարապում

Պատմաբան Լեոն ուշագրավ ու հուզիչ է նկարագրել Գողթն գավառում Մեսրոպ Մաշտոցի կողմից բռնի կերպով կատարված քարոզչությունը, երբ նա ուժի դիմելով հալածել է հեթանոսներին և պետականություն թուլացման հետևանքով երկիր թափանցած այլ ազանդավորների: Հենց այստեղ էլ դնում է Լեոն Մաշտոցի մեջ հայ գրի անհրաժեշտության մտքի ծագումը: Լեոնի այդ կռահումն անտես չի մնացել նշանավոր հայագետին և այն նրա կողմից առանձնակի է գնահատվել. «Գեղեցիկ մտածություններ ունի այստեղ Լեոն՝ Գողթնի քարույշության առթիվ,- գրում է Հր. Աճառյանը.- Նորից քրիստոնեությունը հենվում էր հրամանի, իշխող գավառի վրա: Կրկնվում են Տրդատի ժամանակները... Այդ դեպքը, ինչպես և Գրիգոր Լուսավորչի ժամանակ, հեթանոսության պաշտոնյաներն ու կողմնակիցներն էին, որոնք տեղի տվին բռնության, ուժին և փախսան» (Լեո, «Մ. Մեսրոպ», էջ 156-157): Լեոն ենթադրում է, ուրեմն, որ Մեսրոպը Շաբիաթ իշխանի օգնությամբ նյութական հալածանք է հանել հեթանոսների դեմ, բայց ինքն է ընդունում, որ այդ հալածանքը հակամայից էր, և ավելացնում է. «Հաղթությունը դառն տրտմություն էր նրա համար. Հաղթողը նույնիսկ լաց էր լինում և ասում. Տրտմություն է ինձ և իմ սրտի ցավերը անպակաս են իմ եղբայրների և ազգականների համար: Ո՛վ գիտե, գուցե մի քանդված մեխյան կամ մի արյունաթաթախ դիակ փորփորում էր նրա լուսավոր միտքը և տանջում նրան իբրև լուռ, արյունոտ հարցեր. ինչո՞ւ այս անգթությունը, ինչո՞ւ այս հարկադրանքը, մի՞թե մարդը մեղավոր է, որ պաշտում է իր լավ հասկացածը»: - Եւ ահա, Լեոն այստեղ է դնում գրերի գյուտի գաղափարի առաջին աստիճանը. գիր տուր մարդուն, գիրք տուր տգետին, և դա կլինի սրից ու թրից ավելի հուժկու մի միջոց՝ գիտություն և կրթություն տարածելու համար»<sup>2</sup>:

Երբ Կորյունը հայտնում է, որ Մաշտոցը Գողթնի քարոզչության ընթացքում մտահոգվում է նաև համայն հայությունը միխթարելու համար մի ելք գտնելու մասին, նա ավելացնում է նաև, որ Մաշտոցը հենց այնտեղ՝

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 146-147:  
<sup>2</sup> Հր. Աճառյան, *Ազգ. աշխ.*, էջ 88:

Գողթն գավառում, իր այդ նույն խնդրով, այսինքն՝ գրի հարցով, ոչ քիչ օրեր է զբաղվել, և որից հետո միայն նա գնացել է Վաղարշապատ և այդ մասին հայտնել Սահակ Պարթև կաթողիկոսին. «Եւ իբրեւ արուրս բապունս անդէն ի նմին դեգերէր յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթողիկոսն Յայոց Մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ»: ...«Եւ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] պրաղվելուց հետո՝ վեր կացաւ այնուհետեւ [եկավ], հասաւ Մեծ Յայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր»:

Այս ևս հավաստում է այն մասին, որ Մաշտոցն արդեն նորաստեղծ գրերն է տարել Սահակ Պարթև կաթողիկոսի քննությունը, ավելի ճիշտ՝ համատեղ քննելու, որին նա սպասում էր: Իսկ այդպիսի ստուգողական քննություններ գեռ շատ էին կատարվելու, յուրաքանչյուր անգամ գրի տարբեր խնդիրները պարզելու և լուծելու համար:

Վարքագիրը հիշատակում է նաև, որ երբ Մաշտոցն ազգային գրի անհրաժեշտություն իր միտքը հայտնում է Սահակ Պարթև կաթողիկոսին, այն ոչ միայն արժանանում է նրա հավանությունը, այլև՝ այդ կարիքը հոգալու նրա պատրաստակամ օգնությունն է գտնում:

Այդ առթիվ Հր. Աճառյանը հետևյալն է հայտնում. «Ներշնչված այն մեծ գաղափարով, Մեսրոպը մոռացավ ամեն բան, և իր աշակերտները, իր բարոյությունը, իր եկեղեցիներն ու իր սիրած Գողթն գավառը թողնելով, եկավ Վաղարշապատ, Սահակ կաթողիկոսի մոտ: Մեսրոպը հայտնեց նրան իր գեղեցիկ մտադրությունը: Բնականաբար այնպիսի լուսամիտ մեկը, ինչպիսին Սահակն էր, ո՛չ միայն պիտի հավաներ այդ գաղափարն, այլ նույնիսկ Մեսրոպից ավելի փափագող հանդիսացավ և ամեն կերպով պատրաստակամ ցույց տվեց իրեն՝ այդ մեծ գործի հաջողության համար. «Եգիտ վնա առաւել եւս փափագող այնմ» (Խորենացի, Գ. ԽԹ.):», «Պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ» (Կորյուն, Էջ 8):

Այնուհետև գիտնականը հիշեցնում է ազգային ավանդական մի բարի սովորություն, հայտնելով որ. «Յին հայոց բարեպաշտական սովորությանը, որ ամեն գործ աղոթքով էր սկսվում, Սահակ և Մեսրոպ իրենց հարակիցների հետ հավաքվում են և մի բանի օր աղոթքի են նվիրում իրենց, խնդրելու համար Աստուծոց, որ իրենց այս բարի մտածությանը հաջողություն պարգևի. «Եւ միանգամայն յօժարութեամբ գումարեալ հանդերձ աղօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսաբեր փրկութեանն հասանելոյ. եւ պայն առնէին արուրս բապունս» (Կորյուն, Էջ 8)»<sup>1</sup>:

Հիշենք, որ Գողթն գավառում, երբ Մաշտոցը մտահոգվում է համայն հայությանը մխիթարելու համար մի ելք գտնել, կրկին դիմում է այդ բարի սովորությունը՝ ուղղելով իր «մշտամոռնչ աղոթքն ու բավկատարած պաղատանքն առ Աստված»:

<sup>1</sup> Հ. Աճառյան, *Ազգ. աշխ.*, էջ 96:

Մաշտոցի՝ բազմաթիվ օրեր Գողթնում պարապելը, մյուս դեպքում այն նույն խնդրով Վաղարշապատում, դարձյալ շատ օրեր Սահակ Պարթև կաթողիկոսի, իր և իր հարակիցների հետ համատեղ քննությունների կատարումը վարքագիրը հաջողությունամբ քողարկել է այդ իսկապես որ բարի և պահպան ավանդության ներքո:

Եթե Կորյունը հայ գրի ստեղծման նպատակով Մաշտոցի նախապատրաստական տարիները ծածկել է նրա արքունի դիվանագրիքի ծառայության ներքո, եթե նա գրերի ստեղծման Մաշտոցի ճգնական աշխատանքի առաջին և ամենավճռական շրջանը ևս հաջողությունամբ սքողել է այս անգամ էլ նրա մենակյաց կյանքով տարված լինելու հանգամանքով, և եթե Կորյունին բնավ դժվար չէր նորակազմ գրերի Մաշտոցի գործնական ստուգումները պատասպարել Գողթան գավառում քարոզչության անվան ներքո, ապա, այժմ Մաշտոցն արդեն կազմել և ավարտել էր հայերենի իր աշխատանքային օտարագիր (հունագիր) այբուբենը, և նորակազմ գրերի ուսուցման ընթացքն այլևս չէր կարող ծածուկ տարվել, Կորյունն այլևս չէր կարող լուել և չի լուում: Ավելին՝ նա խորամտորեն, միտումնավոր կերպով հոգևոր առաջնորդի առջև բարձրացնում է, այս պարագայում ճիշտ կլինի ասել՝ եկեղեցական գրի անհրաժեշտության պաղափարը միայն, և ոչ ավելին: Այսպիսի մոտեցմամբ Կորյունը միտումնավոր ազգային գրի ստեղծման գործն ամբողջապես տեղափոխում է եկեղեցու և եկեղեցականների ոլորտ և այն հանձնում հոգևոր առաջնորդ Սահակ Պարթև կաթողիկոսի տնօրինությանը: Միաժամանակ, այդ միջոցով, աշխարհիկ մեծին հեռու է պահում վտանգավոր ուշադրությունից: Ուրեմն, հետայսու և այս մոտեցմամբ պետք է առաջնորդվենք մեր հետագա քննություններում:



## ԳԼՈՒԽ Դ.

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Հայոց ազգային գրի խնդրով հրավիրված կրոնական համագումար ժողովի մասին

ՍաՀակ Պարթև կաթողիկոսը Մաշտոցից ստանալով նորակազմ՝ Հայերենի օտարագիր այբուբենը (որին սպասում էր), իրենց հարակիցների հետ միասին (որոնց թվում և գրաստեղծի աշակերտ-օգնականներից կային), դարձյալ բազում օրեր խորապես քննութ-յան առնելուց հետո (իսկ այդ անել նրանց համար դժվար էջը՝ հու-նարեն այբուբենի հիմքի վրա կազմված լինելու հանգամանքով), այդ նույն խնդրով (այսինքն՝ գրի աշխատանքները շարունակելու նպա-տակով), ՍաՀակ Պարթև կաթողիկոսը 400 թվականին Վաղարշապատում եկեղեցական ժողով է հրավիրում: Ահա սրան է բերում մեր քննությունը և դրանում համոզված ենք: Սակայն շարունակենք հարցը ներկայացնել Կորյունի վկայությամբ. երբ Մաշտոցը ՍաՀակ կաթողիկոսին հայտնում է ազգային-եկեղեցական գրի անհրաժեշտության իր միտքը, այն ոչ միայն արժանանում է Լուսամիտ կաթողիկոսի հավանությանը, այլև այդ գոր-ծում նրա օգնելու պատրաստակամությանը: Այդ գործի հաջողության համար նրանք միասին, շատ օրեր աղոթքներով Աստուծոց աղերսում են, որպեսզի այդ քրիստոսաբեր փրկությունը հասնի իրենց ազգին, որից հետո միայն ՍաՀակ Պարթևն այդ խնդրով ժողովում է երանելի միա-բանների աշխարհահոգ խորհուրդ: Իսկ թե ի՞նչ արդյունքի են հասել եկեղեցու երանելի հայրերը, վարքագիրը հետևյալն է հայտնում. «Այսպես լյաներ ևնցա պարգեական յամենաբարին Աստուծոյ ժողովել պաշարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել:

Բազում հարցափորձի և քննութեան պանծինս պարապեցուցեալ և բա-զում աշխատութեանց համբերեալ, ապա առնէին ապա և վկանիսագոյն խնդրե-լին իւրանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր ևնցա արքայն վասն առն որում ասորոյ եպիսկոպոսի ապևուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ նշանա-գիրս աղիարեւոսց հայերէն լեզուի: Եւ իբրեւ պատմեցաւ ևնցա յարքայէ վասն

գտելոյն ի Դանիէլէ, յօժարեցին պարբայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն պևն-ցիկ: Եւ նա առաքէր Կոնն Վահրիճ անուն հրովարտակօթ առ այր մի երեց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորոյ եպիսկոպոսի:

Իսկ Հաբէլին պայն լուեալ, փութանակի հասներ առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց: Ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հա-սուցանէր: Իսկ արքայն հանդերձ միաբան սրբովքս Սահակաւ և Մաշթոցի՝ ընկալեալ վնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին:

Այս առեալ երանելի հոգաբարձուացն պանկարծագիւտ խնդրելին, հայ-ցելին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով վնշանագիրսն արժարծել մար-թասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գե-ղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրեւ ամս երկու կարգեալ վարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր:

Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել պիտոյրայս վկայս հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին էլս խնդրէին ժամանակս ինչ»:

... «Այս ամենաբարի Աստուծոց պարգևեց նրանց՝ երանելի միաբան-յալների աշխարհահոգ խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել:

Շատ հարցուփորձով ու որոնումներով պարապեցին և շատ նեղություն-ներ կրեցին. հետո և իրենց առաջուց ուլած բանի մասին իմաց տվին հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում:

Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու Դանիել անունով մի ապևական ասորի եպիսկոպոսի մասին, որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ալիարեւոներ - նշանագրեր: Եւ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին, արքային հոժարեցրին, որ հոգ տանի այն պիտոյքի համար: Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր:

Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դա-նիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքա-յին Հայոց երկիրը: Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան լնշանագրերը: Իսկ արքան սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին՝ նշանագ-րերն ստանալով Հաբելից՝ ուրախացան:

Այս երանելի հոգեբարձուներն իրենց հանկարծագրուտ ուլածն առնե-լով էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարո-ղանային նշանագրելը գործադրել: Եւ երբ նրանցից շատերը սովորեցին, ապա թագավորը հրամայեց ամեն տեղ նույն լնշանագրերով կրթել. որով և երանե-լին հասավ նույն իսկ վարդապետական գեղեցիկ աստիճանին, և մոտ երկու տարի իր ուսուցչությունն արեց ու նույն նշանագրերով տարավ:

Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայտնել լեզվի սիրողները-կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մասնավորապես որ նշանագրերն էլ ինչպես ուրիշ դպրությունից թաղված և հարություն առած հանդիպեցին, - ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկած և մի քանի ժամանակ մի էլք էին փնտրում դրան»<sup>1</sup>:

Ազգային-եկեղեցական ինքնուրույն գրի ստեղծման գործնական ընթացքի մասին Կորյունն առաջին անգամ խոսք է բանում իր այս վկայությունում: Նա սկզբնապես հայտնում է այդ խնդրով գումարված կրոնական բարձրագույն խորհրդի մասին, ապա և ընդարձակ տեղեկություններ է հաղորդում Դանիելյան նշանագրերով ուսուցում տարված լինելու վերաբերյալ: Սակայն որքան էլ դեպքերով ու դեմքերով խտացված է Կորյունի երկու տարի ընդգրկող այդ պատմությունը (400-402), այդուհանդերձ, այն մի լրիվ բոլորապատույտ կատարելով, ի վերջո, անարդյունք մտնում է ճիշտ այնտեղ, որտեղից սկիզբ էր առել: Որքան էլ անսպասելի է Կորյունը ոչ մի հետաքրքիր տեղեկություն չի հայտնում ազգային գրի կարևոր հարցով հատուկ հրավիրված «երանելի միաբանյաների աշխարհահոգ խոհրդում» ինչ հարց է քննվել, հիշելով միայն, որ եկեղեցու երանելի հայրերը «շատ հարցուփորձով ու որոնումներով պարապեցին և շատ նեղություններ կրեցին», սակայն ուզած բանի ճարը չեն գտել և ստիպված Սահակ Պարթև կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոցը «իրենց առաջուց ուզած բանի մասին» իմաց են տվել Վռամշապուհ թագավորին: Ահա սա է միայն ազգային գրի նպատակով գումարված այդ բարձրաստիճան ժողովի մասին վարքագրի տված տեղեկությունն ամբողջապես, երբ այն նրա պատմության նշանակելի մասն է կազմում: Ակնհայտ է, որ Կորյունը խուսափել է համագումար ժողովում քննված հարցերի մասին տեղեկություններ հայտնել: Սակայն, որքան էլ մթին, Կորյունի այս պատմությունը հայ գրի մասին այն առաջին և եզակի հիշատակությունն է, առանց որի հանգուցալուծման հաղիվ թե հնարավոր լինի ստույգ կերպով պարզել գրի ստեղծման ընթացքն ու նրա պատմությունն ընդհանրապես: Կարծում ենք, և դրանում համոզված ենք, որ Կորյունի լուրջությունը բնավ անտեղյակության հետևանք չէ և ոչ էլ անկարևոր ճանաչված լինելու արդյունք: Ավելին, Կորյունի վկայությունն այն մասին, թե Դանիելյան նշանագրերն երկու տարի գործադրել-ուսուցանելուց հետո միայն «իմացան», որ դրանք հայերենի գրեր չեն, նույնպես կասկածանք է հարուցում նրա ուղղամտության և ոչ իմացության նկատմամբ: Ուրեմն, ի՞նչ նպատակով է լռել: Հիշենք, որ Կորյունն իր պատմությունը գրել է ազգային-կրոնական հարաբերություններով լարված կրոնական պատերազմի նախատարիներին (443-450), և պակաս վտանգավոր չէր կրոնական համագումար ժողով հրավիրելը, հետևաբար բոլոր դեպքերում ազգային գրի ստեղծման գործը դեռևս խտացույնս սքողելու կարիք կար: Հիշենք, որ

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 90-95:

դարձի քարոզչության նպատակով բարձրացված ազգային-եկեղեցական գրի հարցը, նրա բնականոն ստեղծման գործն ամբողջովին տեղափոխում է եկեղեցու ոլորտը, որով և այն դառնում էր ոչ միայն Հայոց եկեղեցու մտահոգության խնդիր՝ մեկընդմիջտ հանձնելով նրա առաջնորդ Սահակ Պարթև կաթողիկոսի հոգածությունը, այլև՝ միաժամանակ դառնում է երկրի աշխարհիկ իշխանությունից անկախ: Ահա այդ ճանապարհն էր սպասվում վտանգավոր գործի մեկուսացված ընթացքը: Այդ պայմաններում է, որ հասկանալի է դառնում այն երկմտանքը, թե ինչու բացառիկ կարևորության մի այսպիսի հարցի առիթով հատուկ գումարված կրոնական բարձրագույն խորհրդին չի հրավիրվել Վռամշապուհ թագավորը, երբ ժողովը կայանում էր Վաղարշապատ մայրաքաղաքում, երբ դիտենք, թե այդ նպատակի իրագործման համար որպիսի առատաձեռնություն է ցուցաբերել արքան և կամ ընդառաջել Սահակ կաթողիկոսի ու Մեսրոպ Մաշտոցի բոլոր խնդրանքներին: Ուրեմն կարող ենք մտածել նաև, որ Սահակ կաթողիկոսը հարմար չի տեսել թագավորի մասնակցությունը ժողովին, և դա բնավ չի նշանակում, թե այդ մասին նա անտեղյակ է մնացել: Այլ խոսքով՝ կաթողիկոսը խուսափել է հարցի լայն ու ազատ, ավելի ճիշտ՝ ազմկալի քննարկումից:

Այդպես է եղել ժամանակի քաղաքականապես վտանգավոր լարված իրադրությունը, քանի որ միայն այդ կերպ կարող էր անվնաս պահվել ազգային գրի ստեղծման արդեն չթաքցվող աշխատանքները ամենից առաջ Իրանից ու նրա արդեն աշխուժացած մոզերից, ինչպես նաև Հայաստանում գործող ասորի և հույն ոչ պակաս անբարյացակամ քարոզիչներից, իհարկե, ոչ նրանց եկեղեցիներից: Ուստի այդ պայմաններում չսքողել, ուշադրությունից չչեղել գրի առթիվ տարվող աշխատանքների իրական ընթացքը, նշանակում էր հաստատապես զրկվել ոչ միայն ազգապահպան վերջին հզոր հնարավորությունից, այլև տեղիք տալ Արքայից արքայի անժամանակ դաժանություններին:

Վաղարշապատում գումարված կրոնական բարձրագույն խորհուրդն այլ նպատակ ու բնույթ է ունեցել, ուրեմն չեն հրավիրվել ոչ միայն Վռամշապուհ թագավորը, այլև շատ աշխարհիկ այրեր ու հոգևոր օտարազգի հայրեր:

Համոզված ենք, ժողովը հրավիրել է Սահակ կաթողիկոսը, որին մասնակցել են (նրա ընտրությամբ) գործին օգտակար (իսկ թե որպիսի, այդ մասին ստորև) և որ կարևորն էր նաև վստահելի սակավաթիվ կրոնավորներ: Ահա այդ հատուկ ընտրված, գուցե և ոչ մեծ թիվով երանելիների ժողովը հեղինակավոր դարձնելու և նրանց՝ իբրև թե անարդյունք ավարտը հավաստելու միտումով վարքագիրը հարկադրաբար այն «պաշխարհահոգ» է ներկայացրել, լիազուժար համարել, լռել, ոչ մի տեղեկություն չհայտնելով այն մասին, թե իսկապես, ինչ տեղի ունեցավ ժողովում: Եւ

երբ կպարզվի, թե ինչ հարց են քննել երանելիները, ըստ այդմ և կարող է հայտնի դառնալ, թե ովքեր, ինչ կարողություն տեր էին նրա մասնակիցները:

Ներկայացնենք այդ մասին գիտնականների հայտնած կարծիքները. «Դժբախտաբար այստեղ մի մեծ պակասություն ունի Կորյունը. ափոստսանքով գրում է Հր. Աճառյանը և հարցնում.՝ Նա ոչինչ չի ասում այն մասին, թե ինչ էին այն երկար վիճաբանությանց գլխավոր կետերը. արդյոք ոմանք այս առթիվ լինելիք նորամուծություններին հակառակություն էին ցույց տալիս, կամ թե վիճում և չէին կարողանում համաձայնության գալ այն մասին, թե որ այբուբենը պիտի հարմարեցնեին հայ լեզվին (պարսկերեն , թե՛ հունարեն, թե՛ ասորերեն), և կամ թե ուրիշներ հունարենի և ասորերենի ուսման ավելի լայն ծավալ տալով, դժվարությանց առնջքն առնել էին առաջարկում. վերջապես գուցե ոմանք էլ (անշուշտ օտարապահ բարոյիչներ) իսպառ հակառակ էին հայ լեզվի համար գրականություն ստեղծելուն»<sup>1</sup>:

Ո՞րտեղից է հայտնի, որ վիճաբանություն, հակառակություն և անհամաձայնություն է տեղի ունեցել, երբ Կորյունը հիշատակում է ընդամենը, որ ժողովականները «Շատ հարցուփորձով ու որոնումներով պարապեցին և շատ նեղություններ կրեցին»: Գիտնականի հարցումներին Ա. Մարտիրոսյանը համոզված պատասխանում է, որ. «Անհրաժեշտ են սեփական գրեր, թե՛ ոչ. այս ուղղությամբ է գնացել վեճը և հարցը չի վճռվել, ժողովն ընդհանուր կարծիքի չի եղել»: Այնուհետև առաջ տանելով իր միտքը Ա. Մարտիրոսյանն այն նույնիսկ դարձնում է ժողովի իրավասության հարց և հայտնում, որ «նրանք ուզում են ժողովի համաձայնությունը, որը, սակայն, մերժում է, և ստիպված դիմում են թագավորին՝ «այդ առնելին» կամ «պագուցին արքային»<sup>2</sup>... «Հայտնեցին, իմաց տվեցին» և ոչ թե «դիմում են» խորհուրդը տարբեր է հենց սա է նշանակում, որ թագավորը գիտեր ժողովի և նույնիսկ նրանց՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի նախապես ուղածի մասին՝ «վկանխագոյն խնդրելին իրանց»: Եթե Հր. Աճառյանի խոսքը ժողովում քննած հարցի վերաբերյալ թեական է, հարցում է միայն, ապա Ա. Մարտիրոսյանը հետևելով իր հայտնած միանշանակ կարծիքին միանգամայն անընդունելի է մեկնաբանում համագումար ժողովից առաջ կաթողիկոսի և գրաստեղծի համատեղ աղոթքները, գրելով. «Բոլոր մարդկանց հասնի, այսինքն բոլորը հասկանան, բոլորին ընդունելի դառնա գրերի անհրաժեշտությունը և ոչ թե բոլորն ունենան այդ գրերից, այն մտքով, որ բոլորը հայերեն գրեն, որ անհնար էր և աղոթքը՝ վաղաժամ, որովհետև նախ պետք էր գիր ունենալ, ապա նոր մտածել բոլորին ուսուցանելու: Նրանք դիմում էին առ Աստված, որովհետև վստահ չէին, որ կարող է քրիստոսաբեր փրկությունը բոլորին հասնել, նրանք սպասում էին ընդհանության»:

<sup>1</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 97:  
<sup>2</sup> Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 182:

Հապա ո՞ւր մնաց, և կամ ո՞րն էր պատմական այդ ժամանակի ազգային-քաղաքական խնդիրներում ծայրահեղորեն լարված, նույնիսկ անխնայի թվացող իրադրությունից դուրս գալու ելքը: Ինչպե՞ս կարող էին մտքադավ Սասանյաններից ու նրանց կատաղի մոգերից պաշտպանել ազգային ինքնուրույն գրի ստեղծման գործը, առայժմ չասենք նրա հետագա գործընթացը, երբ ընդունվում է, որ հարցի այդօրինակ ազատ ու աներկյուղ, նույնիսկ չափից ավելի բացահայտ քննարկում է տեղի ունեցել, այն էլ հենց իրենց կողմից ճանաչված և բնավ կասկած չհարուցող օտարազգի ընդդիմադիր կրոնավորների բուռն մասնակցությունը: Եթե դա վնասում էր Հայաստանում գործող ասորի և հույն կրոնավորների շահերը, ուրեմն ի՞նչ, այդ օգո՞ւտ էր Սասանյան Իրանին: Սահակ կաթողիկոսը միամիտ էր և չպետք է երկմտել, որ այդ գործում նա օժտված է եղել ամենայն արտոնություններով: Կորյունի լուծության այդօրինակ մեկնաբանումով, ոչ միայն հիմնովին կտապալվեք գրերի գործը, այլև ազգն անժամանակ աղետի առաջ կարող էր կանգնել միայն: Ո՛չ, կրոնական ժողովում այդպիսի հարց էր կարող քննվել և չի քննվել, և ինչպես կասենք ստորև՝ գրա կարիքն էլ չկար:

Ընդհատ է Կորյունը չափազանց սեղմ, միայն ընդհանուր գծերով է ներկայացրել խնդիրը, սակայն նա նպատակահարմար է գտել գրերի ստեղծման կարևոր հոգսով գումարված ժողովի մասին հայտնելու միայն, որ երանելի հայրերը շատ նեղություններ են կրել հատկապես գիր գտնելու նպատակով՝ «ի գիւտ նշանագրաց» և ուրիշ ոչինչ: Չհավատալ Կորյունին իրավունք չունենք, չըջանցել նրա ասածները, ձևափոխել դրանք, կամ նկատի չառնել, հաղիվ թե ճիշտ լինի: Ի վերջո, չպարզել վարքագրի հարցրածի իմաստը, չըմբռնել իրականում տեղի ունեցածը՝ նշականում է խավարի մատնել իսկապես կատարվածը, միաժամանակ չլուծել նաև նրա հաջորդ, ճիշտ է ավելի ընդարձակ ու բավականին մանրամասն պատմված, բայց և խիստ հակասական, նույնիսկ անհավանական թվացող տեղեկությունները, որոնց պարզաբանումներում այնքան իրարամերձ կարծիքներ են հայտնել ուսումնասիրողները:

Համոզված ենք, որ ազգային գրի ստեղծման երկրորդ փուլին վերաբերող, այլևս չթաքցվող, աշխատանքների գործնական ճանապարհների վերաբերյալ ողջ պատմությունը Կորյունի հենց այս առաջին վկայությունում է թաքնված, որն ամեն կերպ նա աշխատել է քողարկել: Որքան էլ դժվար լինի, բայց փորձենք վերծանել իրականում տեղի ունեցածը: Իհարկե, հավատալ Կորյունի անկեղծությանը, թե Հայոց եկեղեցու բարձրաստիճան հայրերը հավաքվել էին իրենց ազգի համար գրեր որոնելու, կամ որևէ ազգի գրերը հայոց բանավոր լեզվին հարմարեցնելու համար, չենք կարող հավատալ: Միայն կլինեք հետևել այդ մտքին: Այստեղ պարմանալին այն է, որ եկեղեցու բարձր ընտրանին հավաքվել էր մայ-

րաքաղաքում գրեր փնտրելու համար: Մի՞թե եկեղեցու ուսյալ առաջնորդ հայրերը չգիտեին, որ գրերը տքնանքով են ստեղծվում միայն և ոչ թե փնտրելով են այն գտնում: Արդյո՞ք ազգային գրերի ստեղծումը պայմանավորված է երկրի առաջադիմության պահանջով (չասենք նրա ճգնաժամային կարիքից), եղե՞լ է արդյոք որևէ մի ժողովուրդ, որի գրերի ստեղծման մեկ այլ, պետականությունից (լինի աշխարհիկ, թե հոգևոր) անկախ ստեղծված լինելու թեկուզ մեկ օրինակ: Արդյո՞ք հնարավոր է ստեղծել, եթե այն ազգային-պետական ըմբռնում ու պահանջ է: Եւ եթե մեկը նույնիսկ զորու է իր հանճարի ուժով այդ տիտանական աշխատանքը կատարել, գրեր ստեղծել, արդյո՞ք դա նշանակում է, որ կարող է նրա ուսուցումը երաշխավորել, երբ դրա պահանջը ազգային-պետական անհրաժեշտություն է և չի հովանավորվում: Հետեապես այդ ինչ շատ նեղություններ էին կրում «երանելի միաբանյալները», որ այդպես էլ իրենց ազգի համար նշանագրեր չգտան: Վարքագրի վկայությունն այն մասին, որ աշխարհահոգ միաբանյալները Սբ. Էջմիածնում ժողովի էին հավաքվել իրենց ազգի համար գրեր գտնելու նպատակով՝ «ի գիւտ նշանագրաց», որքան էլ անընդունելի, այդուհանդերձ, կասկածից վեր է, որ այն իսկապես տեղի է ունեցել: Դատելով գործի հետագա ընթացքից, չէր կարող համագումար-ժողով տեղի չունենալ, որովհետեւ եկեղեցու ուսյալ հայրերը, հենց այդ հատուկ խնդրով պետք է իսկապես տքնանքներ տանեին, լեզվական խրթին հարցերի մի շարք ստուգումներ ու ճշտումներ կատարեին, գուցե և գործի շարունակման ապահով ճանապարհներ որոնեին, և նույնիսկ իրենց համագումարի իսկությունով գործից վտանգը հեռացնեին, ուշադրություն չեղեին: Կորյունը իսկապես խուսափել է տեղի ունեցածը հայտնել. նա գործը վտանգելու երկյուղ է կրել և ոչ թե գործին անտեղյակ է եղել:

Շարունակելով մեր հայտնած միտքը, համոզված ենք (և դրան է տանում գրերի ստեղծման գործի ողջ ընթացքը), որ երբ Մեսրոպ Մաշտոցը Գողթան գավառում իր անապական և քարոզչության 6 տարիների ընթացքում կազմել, փորձարկել և ավարտել է հայերենի իր աշխատանքային այբուբենը, տարել է Վաղարշապատ ներկայացրել Սահակ Պարթև կաթողիկոսին, վերջինս նախ ծանոթացել, վարժվել է նորակազմ գրերին (իսկ դա նրա համար դժվար չէր), ապա նրանք միասին ստուգումներ, ճշտումներ են կատարել, որից հետո Սահակ կաթողիկոսը մտահոգվել է գրերը մի հեղինակավոր մասնագիտական վստահելի քննության առնել, ապա և գործի այլևս մեկուսի չտարվող աշխատանքներն անվտանգ շարունակելու համար: Ահա այդ նպատակով 400 թվականին Սբ. Էջմիածնում եկեղեցական գերագույն խորհրդի անվան տակ կաթողիկոսը գործին օգտակար կրոնավորներ է ժողովում, որպեսզի ուսյալ հայրերը ամենատարբեր գրառումներ ու թարգմանություն կատարելու միջոցով գործադ-

րեն, կիրառեն Մաշտոցի նորակազմ գրերը, գործնականում ստուգելով ճշտումներ, լրացումներ կատարեն, հավաստեն գրերի ավարտուն լինելը և երաշխավորեն այն ուսուցման համար (իհարկե այդ նորաստեղծ գրերի վերջին քննությունը չէր, այն շարունակաբար կատարելու էր գրաստեղծն իր գրերը բոլոր կողմերով անթերի դարձնելու համար): Անշուշտ, մինչ այդ, ժողովականները սկզբնապես կծանոթանային և կյուրացնեին Մաշտոցի հուններեն գրերի հիման վրա կազմած հայերենի այբուբենին, որը բնավ դժվարություն չէր կարող ներկայացնել հունարեն լեզվով ուսում առածներին, որոնց թիվը քիչ չէր Մեծ Հայքի եկեղեցիներում (այս հանգամանքով և հայտնի է դառնում, թե որպիսի կրթության տեր էին ժողովի հրավիրվածները): Հասկանալի է, որ այդօրինակ գիտա-լեզվական բարդ և պատասխանատու քննություններ և ստուգումներ կատարելու համար կհրավիրվեին լեզվի և գրի խնդիրներին գիտակ, ճանաչված և նաև վստահելի հայազգի կրոնավորներ միայն, և ոչ օտարազգի հույն թե ասորի քարոզիչներ, որոնց համար հայ ազգային գրի ստեղծումն անընդունելի էր, քանզի շահերը տարբեր էին, ինչպես սխալմամբ կարծում են որոշ գիտնականներ, և այդ հանգամանքը կարծեցյալ երկար վիճաբանությունների պատճառ նկատում և ոչ գործի խափանման միջոց:

Ահա լեզվագիտական այս դժվարին և պատասխանատու, իսկապես որ տքնանք ու ժամանակ պահանջող աշխատանքը նկատի ունի վարքագիծը, երբ հայտնում է, որ. «բապուն հարցուփորձի և բնութեան վանձիսս պարսպեցուցեալ և բապուն աշխատութեանց համբարեալ»: Այդ պայմաններում է միայն, որ հասկանալի է դառնում, թե ինչու պետական-ազգային այդ կարևոր հարցով գումարված, թեկուզ և կրոնական ժողովին չի հրավիրվել, գրերի գործին այսքան սատար կանգնած Վստաշապուհ թագավորը: Իհարկե այդ ամենևին չի նշանակում, որ թագավորն անտեղյակ է մնացել գործերի ընթացքին, որ Սահակ կաթողիկոսը ժողովի ընթացքի մասին մշտապես իրազեկ չի պահել թագավորին, երբ նրանք այդ հարցում նույն մտքին էին:

Ավելին, ինչպես պիտի տեսնենք հետագա վկայություններից, այդ ժամանակ և հատկապես այդ հարցում թագավորին ձեռնպահ, նույնիսկ անտարբեր, կամ անհազոր գույց տալը բարենպաստ դիվանագիտություն էր հետագայի այլևս չթաքցվող և ոչ փոքրածավալ աշխատանքների ապահով ու անվտանգ ընթացքի համար:

Ամփոփենք մեր միտքը.

1. Սահակ Պարթև կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցն, ավարտելով նորաստեղծ հայերեն գրերի իրենց համատեղ ստուգումները, հատուկ կրոնականներ են ժողովել, մի վերջին անգամ գործնական փորձարկումներով գրերի համակողմանի ստուգումներ կատարելու և գրի գործն ապահով ճանապարհով տանելու համար:


2. Ժողովին մասնակցել են Սահակ կաթողիկոսի կողմից հրավիրված լեզվի և գրի հարցերի գիտակ հայագրի վստահելի կրոնականներ միայն: Գործնական ստուգումներով (առանց ազգային—կրոնական վիճարանությունների) ժողովականները ճշտել, լրացրել և հավաստել են նորաստեղծ հայերեն այբուբենի կազմությունը և այն երաշխավորել ուսուցման համար:

3. Մաշտոցն իր այդ այբուբենը կազմել է հունարեն գրերի հիման վրա, այն եղել է օտարագիր և աշխատանքային (գրապատկերները դեռևս ազգայնացված չէին): Գրերի ստուգումները կատարել են հունարեն լեզվի իմացությունը օժտված կրոնականներ:

4. Սահակ կաթողիկոսի ընտրված սահմանափակ թվով կրոնականների այդ գործնական ժողովը Կորյունը միտումնավոր կերպով ներկայացրել է համագումար՝ «վաշխարհահոգ»: Կրոնական համագումար-ժողովի անարդյունք ավարտը դիվանագիտություն է օգնություն կարիք առաջացնելու և իրականում կատարվածը պատասպարելու նպատակով: Իրենց ազգի համար գրեր գտնելու երանելի հայրերի ջանքերի այդ հեղինակավոր խափանումը միտված է գրերի ստեղծման գործը երկրից դուրս, ասորական կենտրոն եկեղեցու ոլորտ տեղափոխելու, հարցը եկեղեցական և ոչ ազգային ներկայացնելու:

5. Կրոնական համագումար ժողովին Վուսնապուհ թագավորը չհրավիրվեց: Ընդհանրապես գրերի ստեղծման գործից նրա հեռու, մեկուսի մնալը, բնավ նրա անգրասեր լինելու հետևանք չէր, այլ՝ հեռատես քաղաքական դիտավորություն էր՝ գրի գործն երկրի աշխարհիկ իշխանությունից հեռացնելու, գործի անվտանգ շարունակումն ապահովելու և թագավորի կողմից ցույց տրվող օգնությունը ծածկելու նպատակով: Առաջ անցնելով հիշենք, որ Վուսնապուհ թագավորն է պատմում, ավելի ճիշտ հիշեցնում, մատնացույց անում մեր երկու մեծերին՝ Սահակ Պարթև կաթողիկոսին և Մեսրոպ Մաշտոցին «սպնավական ասորի եպիսկոպոսի», Դանիելի և նրա նշանագրերի գոյություն մասին, որով և թագավորը գրերի գործն ամբողջապես դնում է ասորական եկեղեցու հովանու ներքո, դարձնում նրա հոգածության առարկա և գերծ պահում Սասանյանների հետապնդումներից:

Այդ մետեցմամբ և շարունակենք ծանոթանալ Կորյունի հիշատակություն հաջորդ՝ Դանիելյան նշանագրերին վերաբերող հատվածին:



## ԳԼՈՒԽ Ե.

### Դանիելյան նշանագրերի առեղծվածը

**Յ**ակառակ «երանելի միաբանյալների» կրած ամենայն նեղություններին, երբ «աշխարհահոգ խորհուղը» ավարտվեց անարդյունք, Սահակ Պարթև կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցն «սպնավական ինդրելին իրեանց», իմաց են տվել Հայոց Վուսնապուհ թագավորին: Այդ ժամանակ է, որ թագավորը պատմում է նրանց, որ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ գտել է հայերեն լեզվի սպիարեաներ՝ նշանագրեր»: Ստանալով այդ ուրախ լուրը սուրբ Սահակը և Մաշտոցը խնդրում են արքային հոգ տանել այդ «սպնավական» համար: Արքան հոժարվում է և Վահագն անունով իր պատվիրակին հրովարտակներ տալով ուղարկում է Միջագետք՝ Դանիելի մերձավոր Հաբել երեցի մոտ: Ստանալով թագավորագիրը՝ Հաբելը շտապում է Դանիելի մոտ, նախ ինքն է Դանիելից տեղեկանում նշանագրերին, ապա՝ վերցնում է այն նրանից և ուղարկում թագավորին Հայոց երկիր: Երանելի հոգաբարձուներն ստանալով «սպնավածագիտ ինդրելին», արքայից խնդրում են նաև «մակուևս մատաղս» նշանագրերը գործադրելու համար: Եւ երբ այդ «մատաղահաս մանուկներից» շատերը սովորում են, թագավորը հրամայում է ամեն տեղ այդ նույն նշանագրերով կրթել, այլ խոսքով այդ նշանագրերով երկրում ուսուցում է տարվում: Մոտ երկու տարի Մեսրոպ Մաշտոցն ուսուցչություն է արել և նույնիսկ հասել է «վարդապետական գեղեցիկ աստիճանի»: Սակայն, ի վերջո, համոզվում են «ի վերայ հասնալ», որ այդ նշանագրերը պակասավոր են և բավական չեն Հայոց լեզուն ամբողջովին արտահայտելու համար: Եւ, մանավանդ, երբ պարզվել է, որ այդ նշանագրերն ուրիշ դպրությունից են, այն էլ վաղուց գործածությունից դուրս ընկած «յայլոց դպրութեաց թաղեալք եւ յարուցեալք դիպեցան». կրկին անգամ սուրբ Սահակը, Մեսրոպ Մաշտոցը և Վուսնապուհ թագավորը նույն հոգսի մեջ են ընկնում և որոշ ժամանակ այդ բանի համար ելք են փնտրում: Սակավախոս Կորյունի վկայությունն այս երկրորդ մասը, որքան էլ ընդարձակ ասված, դեպքերով ու դեմքերով խտացված, այդուհանդերձ, նրա երկու տարի ընդգրկող այդ պատմությունը ևս մի բոլորապատույտ կատարելով դարձյալ անհուսալի մարում է այնտեղ, որտեղից սկիզբ էր առել:

Այստեղ կասկած է ծագում մի՞թե լուսամիտ Սահակ կաթողիկոսը և թե՛ հատկապես հանճարեղ գրաստեղծն այդքան միամիտ են եղել, որ մոտ երկու տարի (400-402) շարունակ Դանիելի պատահական, հայոց լեզվին

անհարմար նշանագրերով ուսուցում տարած լինեն, և այդ այն դեպքում, երբ ընդամենը երկու տարի հետո Մաշտոցը Եղեսիայում ստեղծում և Սամոսատում գեղադրում, ավարտում է իր հայոց ազգային անթերի գրերը: Սակայն որքան էլ երկմտանքի հիմքեր կան, այնուամենայնիվ, ճիշտ չէր լինի չընդունել, որ այդ տարիներին Մեսրոպ Մաշտոցը իսկապես ուսուցչություն է արել, կրթել է և ուսուցչապետի բարձր աստիճանի է հասել: Ուրեմն իրականում ի՞նչ է տեղի ունեցել: Այդ և հաջորդ հարցերի պարզաբանումները շարագրենք վարքագրի կողմից հիշատակված կարգով:

Առաջին կարո՞ղ էր արդյոք Վռամշապուհ թագավորն ամենևին տեղյակ չլինել և կամ նախօրոք չիմանալ իր պալատի դեմ դիմաց, Սբ. Էջմիածնում գումարվող համակրոնական ժողովի և նրա շարժառիթի մասին: Մի՞թե արքային լսելի չէին երանելի հայրերի, ծիսական կարգով ամենօրյա՝ առավոտյան և երեկոյան պարտադիր ազոթքների կանչող Մայր տաճարի բազմաձայն զանգերի ղողանջները<sup>1</sup>: Մի՞թե իր երկրի Մայր եկեղեցու նկատմամբ այդքան անտարբեր, այս պարագայում նաև անդպրասեր թագավոր է եղել Վռամշապուհը: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել, որ նա ընդառաջել է Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի բոլոր պահանջներին:

Ասենք ավելին, մի բոլորովին կարճ ժամանակ անց նա լիովին ապահովում է Մեսրոպ Մաշտոցի աշակերտական խմբերի ու օգնականների բազմամարդ, նույնիսկ ժամանակով չսահամանափակված ուղևորությունը Միջագետքի քաղաքներ (402-404): Ո՛չ, այդ բնութագիրն անհարիր է ազգային գրի ստեղծման, և հատկապես նրա ուսուցման գործին այդքան սատար եղած Վռամշապուհ թագավորի գործունեությունը: Գրերի գյուտը պետական-համազգային ըմբռնում է եղել և երախտապարտ հայ ժողովուրդն իրավացիորեն նրա անունը միացրել է մեր երկու մեծերի՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի լուսավոր անուններին: Համոզված ենք, և դրան է բերում գործերի հետագա ընթացքը, որ Վռամշապուհ թագավորին գրերի գործից հեռու պահելը միտումնավոր էր, առերես միայն և այն նախապես մտածված, հեռատես դիտավորություն էր: Վռամշապուհ թագավորը երբեք անմասն չի եղել ազգային գրի ստեղծ-

<sup>1</sup> Սբ. Էջմիածնի կաթողիկե տաճարի արևմտյան կողմում դեռ կանգուն է «Տրդատա դուռը» (ցավոք, 60-ական թվականներին այն ձևափոխվեց և վերածվեց կամարի): Կառույցի ճակատները ներսից և դրսից երեսպատված են մեծաչափ սրբատաշ քարերով, ստորին շարքերը իսկապես հնագույն են, պատերի շարքերի հորիզոնական և ուղղահայաց կարանները երիզավոր են տաշված, քարերի երեսին փորագրված են քարգործ վարպետների հնագույն նշաններ: Արևմտյան ճակատին փակագրով փորագրված է ԴԱԻԻԹ անունը: Տրդատադռան և կաթողիկոսյան Վեհարանի միջև ընկած տարածությունում հողային աշխատանքների կատարման և պեղումների ժամանակ հայտնաբերվել են հելլենական շրջանին պատկանող հնագիտական առարկաներ, որոնք վկայում են Արշակունի թագավորների պալատի տեղը Վաղարշապատ քաղաքում:

ման գործից (կարծում ենք իրեն նախօրոք իր Խոսրով եղբայրը ևս): Նա մշտապես տեղյակ է եղել Մաշտոցի նորակազմ Հայոց գրերի (գեոևս օտարագիր) համակողմանի ստուգումների նպատակով Սբ. Էջմիածնում հատուկ հրավիրված ուսյալ հայրերի աշխատանքի ընթացքին, ինչպես նաև գրերի հաջողված, ուսման համար երաշխավորված լինելուն: Ուստի, Վռամշապուհը պետք է մտահոգվեր գրերի սկզբնական ուսուցումը երկրում անվտանգ տանելու մասին: Երբ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը երանելի միաբանների ժողովի միանգամայն անարդյունք ավարտից հետո հուսահատված ներկայանում են գրի գործից անտեղյակ թագավորին, նա առանց ուշացնելու (կարծես թե գիտեր այդ մասին և սպասում էր նրանց) փարատում է նրանց ընկճված լինելը, պատմելով, որ լսել է, թե Դանիել անունով, շեշտում ենք՝ մի սպիտակաշուկա ասորի եպիսկոպոս, հոգ չէ, որ պատահաբար է գտել (դա ևս միտումնավոր է եպիսկոպոս, հոգ չէ, որ պատահաբար է գտել (դա ևս միտումնավոր է Դանիելյան նշանագրերի ի վերջո խափանման նպատակով), այլ կարևորն է՝ հայերեն լեզվի նշանագրեր: Իր այդ պատմությունը թագավորը նրանց դուրս է բերում շվարած վիճակից և միամիտ ուրախություն պատճառում՝ գործը հաջողությունը գլուխ բերելու ակնկալությունը: Եւ մի՞թե Վռամշապուհի պատմությունը ճանապարհ չի հարթում Մեսրոպաստեղծ գրերի ուսուցման համար հենց Դանիելյան նշանագրերի անվան տակ անվտանգ վարելու համար: Թագավորի պատմությունն այնպիսի գործնական ուղղվածություն ունի, որ մտածել է տալիս, թե այն նախագործնական ուղղվածություն ունի, որ մտածել է տալիս, թե այն նախապես է կազմվել, այլևս կարևոր չէ, թե ում կողմից, ի՞ր՝ Վռամշապուհի՞, Սահակ-Մաշտոցի՞, եկեղեցու ուսյալ հայրերի՞, թե՞ հենց իր՝ Կորյունի: Հատկանշականն այն է, որ Հայոց Վռամշապուհ թագավորն է իր հեղինակավոր խոսքով մատնանշել և Հայոց գրի մտահոգությունը վերագրել ասորի կրոնավորին, այլ խոսքով, այն սկզբնապես է կապել եպիսկոպոս Դանիելի անվան հետ, որով և գրի հարցն ընդգծված կերպով դարձրել է բացառապես եկեղեցու անհրաժեշտություն, հետևապես և նրա մտահոգություն, այլ ոչ՝ աշխարհիկ շահագրգռվածություն խնդիր: Թագավորն իր այդ ցուցումով դուռ է բացել Ասորիք՝ կրոնական կենտրոն և այդ մտեցմամբ ապահովել է, այդ անվան տակ նորաստեղծ գրերի պահանջվող ուսուցումն երկրի ներսում տանել, իսկ նրա շարունակումն ու վերջնական ավարտը երկրից դուրս ասորական կենտրոն - եկեղեցու ոլորտ տեղափոխել, և որ կարևորն է, նրա պաշտպանություն խնդիր: Գործն այդ ընթացքով վարելը միանգամայն ընդունելի պիտի երևա, եթե նկատի ունենանք, թե որպիսի սերտ կապեր կային հայ և ասորի եկեղեցիների միջև, մանավանդ, որ այդ ճանապարհով ազգային գրի ստեղծման աշխատանքները հեռացվում էին Սասանյան Պարսկաստանի և Իրանի մոգերի ուշադրությունից, միաժամանակ Մեծ Հայքի եկեղեցիներում ու դպրոցներում գործող օտարագրի կրոնավորների (հատկապես ասորի) բարյացակամությունն էր շահում:



Վռամշապուհ թագավորի պատմութիւնն ամբողջապես հենված է զբաղաշտի տարածման վտանգի դեմ, քրիստոնյա եկեղեցիների բնականոն միասնութեան վրա:

Երկրորդ - Նկատենք նաև, որ Վռամշապուհ թագավորի հրովարտակն ուղղված է ոչ թե Դանիել եպիսկոպոսին, որ տրամաբանական կլիներ, այլ նրա մերձավոր Հաբելին: Եւ ոչ թե թագավորի պատվիրակ Վահրիճը, այլ Հաբելն է շտապել Դանիելի մոտ, նախ ինքն է ծանոթացել նշանագրերին, նոր միայն այն վերցրել է և ուղարկել հայոց երկիրը, թագավորին: Կորյունի հետագա վկայութիւնն իմանում ենք նաև, որ Մեսրոպ Մաշտոցը երկու անգամ լինում է այդ կողմերում և ոչ մի անգամ չի հանդիպում ազնվական ասորի եպիսկոպոսին, երբ նրանք այնքան ճշտելու բան ունենին նրա՝ պատահաբար, ասել է թե մի տեղ գտած կարծեցյալ հայոց լեզվի ալփաբետներում:

Մի առիթով Հր. Աճառյանը վրդովմունքով գրում է. «Դանիելի գրերը համեմատել Մեսրոպի վրացերեն գրերի գյուտի հետ, շատ անհարամար է. Մեսրոպն ինքը անձամբ գնաց Վրաստան, գրերը հնարեց, քարույեց, տարածել աշխատեց, մինչդեռ Դանիելը հետվում նստած գիր է շինում և Հայաստան ուղարկում, այն էլ երբ իրենից Վռամշապուհը խնդրում է, հրովարտակով մարդ է ուղարկում և այլն: Եթե Դանիելն էր հնարողը, ապա ինչո՞ւ չէկա՞վ Հայաստան, ինչո՞ւ իր ձեռքով չտարածեց գրերը: Նշանակում է, թե ինքը բոլորովին չեղբ դիրք ունի և անտարբեր պահապան է միայն»<sup>1</sup>:

Ճշմարիտ՝ ասորի Դանիել եպիսկոպոսը, իսկապես որ հայոց ազգային գրի ստեղծման վտանգավոր գործի պահպանն է եղել: Այս և այլ անհամապատասխանութիւններն ուսումնասիրողների մոտ անհավանականութեան կասկածանք են առաջացրել և իրավացիորեն հարցականի տակ առել հայոց լեզվի Դանիելյան նշանագրերի գոյութիւնն ընդհանրապես: Այդ մասին մեկ այլ մեջբերում ևս կատարենք, այն ավելի քան կարևոր է Դանիելյան կոչվող նշանագրերի մասին գիտնականի վերջնական կարծիքը ներկայացնելու համար. «Այն հեղինակները, որոնք հայերեն գրերին տալիս են փյունիկյան, արամեական կամ պալմիրական ծագում, հավատում են Դանիելյան գրերի գոյությանը, որով չափապակց մոտենում են կամ նույնիսկ ժամանակակից են դառնում այդ գրերին: Բայց որովհետև մեզ համար Դանիելյան հայ գիր ու գրականություն գոյություն չունի (ընդգծումը մերն է - Լ. Ս.), ուստի հայ գրերն էլ չեն կարող փյունիկյան, պալմիրական կամ արամեական ծագում ունենալ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Հր. Աճառյան, *Ազգ. աշխ.*, էջ 439:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 510: Մեսրոպաստեղծ հայոց գրերի այսպես կոչված «սկզբնաղբյուրների» պարզաբանումների առթիվ գիտնականը գրում է, որ «Փյունիկ, պալմիրական և արամեական գրերը գործածված են մինչև Քրիստոսի երկրորդ դարը, որից հետո նրանք տեղի տվին ասորական և հունական այբուբեններին: Եւ այն ժամանակ, երբ Մեսրոպը հնարում էր հայերեն գրերը, փյունիկյան պալմիրական

Ուրեմն և այս ըմբռնումով էլ մոտենանք Դանիելյան նշանագրերի պարզաբանման հարցին:

Երրորդ. Ազնվական ասորի եպիսկոպոս Դանիելի պատահաբար գտած, կարծեցյալ հայերեն լեզվի ալփաբետների առեղծվածն ավելի քան մեկ հարյուրամյակ եղել, և շարունակում է մնալ ոչ միայն մեսրոպագետների քննութեան առարկան: Նրա պարզաբանմանն են նվիրվել բազմաթիվ ուսումնասիրութիւններ, որոնցում որքան էլ որ տարբեր նույնիսկ իրարարամերժ են եղել հետաութիւնները, այդուհանդերձ, հարցը խորապես հետազոտած հայագետների վերջնական խոսքը հետևյալն է. «...ամբողջ թյուրիմացությունը, - գրում է Հր. Աճառյանը, - որին Կոնստանդինոպոլիսի Դանիելը և թե Մեսրոպը, արամեական (հին ասորական) և արամյան (հայ) բառերի շփոթությունից էր առաջանում և նորագյուտ այն տառերը ուրիշ բան չէին, բայց եթե ինչ-որ արամեական հնացած տառեր»<sup>1</sup>:

Այնուհետև գիտնականը շարունակում է. «Միակ իրական և հաստատուն կետը որ կա, այն է, թե Դանիելյան այբուբենը չուներ հայերեն լեզվին հասուն կապերը և այս իսկ պատճառով մի կողմ դրվեց Մեսրոպի ձեռքով:

Այս վերջին իրողությունը մի իմաստուն մտածություն է տալիս Ստ. Մալխասյանին, որ իր վիմաստիպ Մատենագրութեան պատմութեան մեջ (էջ 50) պատճառաբանում է այսպես. «Եթե Դանիելյան գրերը պակասապոր և հայերեն լեզվին անհարմար էին, նշանակում է, թե հայերեն լեզվի տառերը չէին»<sup>2</sup>:

Ստեփանոս Մալխասյանին վկայակոչելով գրում է Հր. Աճառյանը. նա այնուհետև հիշեցնում է. «Միևնույն բանն է նաև Խորենացու ասածը. «Մուրացածոյին այնուիկ գծագրութեամբ», այսինքն օտարից մուրացված և երբեք հայ ազգի սեփականություն չեղած: Դանիել ասորի եպիսկոպոսը հանկարծ մի տեղ գտնելով հիշյալ այբուբենը և կարծելով, թե հայ լեզվի այբուբենն է, հայտնեց Վռամշապուհին, որով և պատճառ եղավ սուտ լուրի տարածվելուն հայոց մեջ»<sup>3</sup>:

Թե ի՞նչ էին իրենցից ներկայացնում Դանիելյան նշանագրերը, որպիսի ծագում կամ ինչպիսի կազմութիւն են ունեցել, զբաղեցրել է միջ-

և արամեական գրերն արդեն 250 տարուց ի վեր գործածությունից դուրս եկած և մոռացության էին մատնված: Կարող էր և կամ պետք ունենալ Մեսրոպը այս անհետացած այբուբենները երևան հանելու և նրանցից օգտվելու հայերեն տառերի համար, մինչդեռ իր ձեռքի տակ պատրաստ ուներ մի խումբ այբուբեններ, որոնց իր հայրենակիցներն էլ մասամբ կամ ամբողջովին ծանոթ էին», էջ 109:

Նկատենք, որ գիտնականների խոսքը Մեսրոպյան գրերի «սկզբնաղբյուրների» պարզաբանման հարցում վերաբերում է առանձին տառանշանների սոսկ գծագրական որոշ նմանություններին միայն և ոչ այբուբենի նկարվածքային կազմության սկզբունքներին:

<sup>1</sup> Հր. Աճառյան, *Ազգ. աշխ.*, էջ 153:

<sup>2</sup> Հր. Աճառյան, *Ազգ. աշխ.*, էջ 452:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 455: Ծանոթությունում. 1 «Մուրացածոյ» բառի այս նշանակությունը գտնում ենք նաև Փարպեցու մոտ. «Մանաւանդ թէ գոն նշանագիրը հայերեն լեզուոյս, որով հնար է ինքեան ձայնիւ եւ ոչ մուրացածոյ բարբառով շահել զոգիս»:

նազարի մեր պատմագիրը գիտնականներին, նրա պարզաբանման խնդրով զբաղվել են գրեթե դրանք հայտնվելու ավելի ճիշտ «սուտ լուրի» տարածման ժամանակից: Եւ, ինչպես տեսանք վերը բերվածից, դեռ քննախույզ պատմահայրն էր մերժել Դանիելյան նշանագրերի հայոց լեզվի այբուբեն լինելը: Բերենք նաև Դանիելյան գրերի առթիվ գիտնականի որակումները.

- «Դանիելյան գրերը փուշ դուրս եկավ»:
- «Երկու տարվա փորձից հետո դեն գցեցին»:
- «Երկու տարի հետո փթուկ դուրս եկավ»:
- «Մեսրոպը հասկացավ, որ խաբեության կամ սխալմունքի փոխ է գնացել»:
- «Արամեական հնացած տառեր» և այլն<sup>1</sup>:

Հարցը խորապես քննած գիտնականի վերջնական եզրահանգումն է. «Մեր կարծիքն այն է, որ Մեսրոպը Դանիելյան գիրը բոլորովին դեն գցելուց հետո՝ իր այբուբենն ամբողջապես ինքը հնարեց»<sup>2</sup>:

Մեր քննությունն առաջ տանելու համար ասենք, որ մեծանուն գիտնականը, և ոչ միայն նա, ընդունում է Դանիելյան նշանագրերի իրողությունը, այն երկու տարի փորձարկելու փաստը, գիտնականն իր խորագնին քննությունը հաստատապես մերժում է թագավորի կողմից սկզբնապես այն հայերեն լեզվի գրեր ներկայացված լինելու հանգամանքը միայն, այլ ոչ նրա գոյությունն ընդհանրապես, որին բերել և տանում է մեր աշխատանքը:

Վարքագիրը հայտնում է, որ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ կաթողիկոսը երկու տարի շարունակ ասորի եպիսկոպոս Դանիելի հանկարծագրուտ նշանագրերով կրթել են, Մաշտոցն անգամ վարժապետի բարձր աստիճանի է հասել և նոր միայն հասկացել են, ճանաչել, որ այդ նշանագրերը թերի են և բավարար չեն հայերեն լեզվի սիղոբաները-կապերն ամբողջովին արտահայտելու համար: Այդ դեպքում ինչպես բացատրել, որ մի քանի լեզուներով Արշակունիների արքունիքում հինգ տարի շարունակ զբաղություն կատարած Մաշտոցի և Հունաստանում բարձր կրթություն ստացած, մեծ գիտություն տեր Սահակ կաթողիկոսի այդքան միամիտ, երկու տարի Դանիելյան նշանագրերով ուսուցած լինելու հանգամանքը: Մաշտոցը կամ Սահակ կաթողիկոսը որպեսզի կրթել կարողանային, նախ իրենք պետք է ծանոթանային և վարժվեին Դանիելյան նշանագրերին, ապա և նրանով, որպես ուսումնական նյութ, մի պարզ գրույց գրի առնեին, կամ Սբ. Գրքերից մատչելի թարգմանություններ կատարեին, անծանոթ նշանագրերից օգտվելու այլ ճանապարհ չկար: Իսկ դա անելու համար ո՛չ Մաշտոցին, և ո՛չ Սահակ կաթողիկոսին երկու տարի կամ երկու ամիս ժամանակ հարկավոր չէր, և նրանք նշանագրերի առաջին իսկ կիրառումից կհասկանային դրա թերի և հայերեն լեզվի համար

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 364, 457, 491:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 492:

անպիտան լինելը, և այլևս ապարդյուն աշխատանք չէին կատարի: Այդ առթիվ Հր. Աճառյանը ոչ անվրդով գրում է. «Առանց Դանիելի միջամտության, մենք գոնե երեք տարի ավելի շուտ պիտի ունենայինք հայերեն գիր և գրականություն, երկու տարի հաշվելով դանիելյան գրերի փորձը և գոնե մի տարի՝ Մեսրոպի ճամփորդությունը»<sup>1</sup>:

Նկատենք, որ իր այս հանդիմանական խոսքում գիտնականը ևս ընդունում է Դանիելյան նշանագրերի իրողությունը, այդ դեպքում ուրեմն ինչ, Դանիելի պատահաբար գտած, գործածությունից դարեր առաջ դուրս ընկած, օտար դպրություն հնամենի նշանագրերի միայն փորձարկումը, ինչպես անվանում է մեծանուն գիտնականը, մեր երկու մեծերից երկու տարի ժամանակ է պահանջել, իսկ հայոց, այս դեպքում արդեն ազգային ինքնուրույն և անթերի գրերի ստեղծումը Մաշտոցը կատարել է ընդամենը մեկ տարում: Այդպիսի մոտեցումն անշուշտ ընդունելի չէ: Գիտնականն իր այդ միտքը հաստատելու և Մաշտոցի ապարդյուն կորցրած երկու տարին արդարացնելու (որովհետև ընդունում է Դանիելի նշանագրերի գոյությունը, և ոչ նրա հայերենի լինելը), հետևապես և Մաշտոցի վարդապետական աստիճանը հավաստելու նպատակով (իսկապես որին նա հասել է, իսկ թե որպիսի գրերով է նա կրթել այդ մասին ստորև), ընդարձակ հիշեցումով այսպես է պատճառաբանում. «Երկու տարվա փորձը ոչ թե ստվեր է ձգում Մեսրոպի վրա, այլ մեծ պատիվ է իրեն, - գրում է Հր. Աճառյանը: - Պարսիկները, թուրքերը և այլն հապարամյա գործածությունից հետո, նորերս միայն զգացին իրենց այբուբենի պակասությունը և դարմանելու կարիքը: Իսկ եթե Մեսրոպը երկու տարուց կարողացավ զգալ, սրանից ավելի ինչ մեծ պատիվ իրեն: Չեմ ուզում շեշտել այն հանգամանքը, որ հիշյալ ապերը թեև զգացին իրենց այբուբենի պակասավորությունը, բայց դարմանելուց շատ հեռու են: Թուրքերը ոչ շատ տարիներ առաջ միայն ջնջեցին իրենց այբուբենը և ընդունեցին տիրուպականը, իսկ պարսիկները, արաբները, աֆղանները և այլն դեռ մնում են իրենց պակասավոր այբուբենին կապված: Մինչդեռ Մեսրոպն զգաց և մեկ տարվա մեջ դարմանեց ամենազեղեցիկ կերպով»<sup>2</sup>:

Անշուշտ, այդ համեմատությունը հարմար չէ: Հիշված ազգերն անկարող են եղել իրենց այբուբենները դարմանել, իսկ Մաշտոցն օտար գրերն է փորձել երկու տարի, նրա ինչ լինելը պարզել, ինչ է թե Վռամշապուհ թագավորը սկզբնապես ասել է, որ Դանիել ասորի եպիսկոպոսը հանկարծ հայերեն լեզվի նշանագրեր է գտել: Դանիելի թերի և օտարածին նշանագրերը չէ՞ որ Մաշտոցը մեկ տարում գեղեցիկ կերպով դարմանել է, նա այն մի կողմ է դրել և իր նորն ու ազգայինն է ստեղծել, իսկ այդ գիտաստեղծագործական ուրույն հորինումը տարիների տքնանք պահանջող աշխատանք էր, նույնիսկ օգնություն հայցող: Այդ հարցում տեղին է Ա. Մարտիրոսյանի հակաճառությունը, երբ նա գրում է. «Այս

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 157:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 111:

համեմատության մեջ, իհարկե, անճիշտ բան կա: Պարսիկները, թուրքերը և այլն... պատահականորեն ձեռք բերած որևէ սյրուբեն չէր, որ ընդունել էին հապարամյա գործածության, իսկ հապարամյա գործածության ընթացքում էլ փոխվել էր լեզուն: Իսկ այստեղ Կորյունը պարզ վկայում է Դանիելից ձեռք բերված ինչ-որ արհեստական գրի մասին:

Այս դեպքում, իհարկե երկու ամիսը բավարար էր, և Մաշտոցի համար ամենևին էլ երկու տարին մեծ պատիվ չէ»<sup>1</sup>:

Արտաշես Մարտիրոսյանն իր 5-րդ դարի քաղաքական-լուսավորչական շարժմանը նվիրված «Մաշտոց» մենագրությունում մեկնաբանելով միաբանների խորհրդում քննված հարցերը, հանգել է այն եզրակացություն, որ Դանիելյան գրերի մասին Կորյունի արած պատմությունը «պրոպոզիցիոն» է, և այն նպատակ է ունեցել սոսկ ցույց տալու հայ գրի ստեղծման գործում «ասորական նպաստը» միայն: Գիտնականը գրում է. «Մեր խոսքը տալու է նրան, որ Կորյունի բնագրում դանիելյան հատվածն անհարիր է, բայց ոչ օտար: Այն հորինվել է հենց իր Կորյունի կողմից, կամ նրանից առաջ և ընդգրկել է Կորյունի պատմության մեջ, «ի նշանաւոր գիտակացն քաղելով»<sup>2</sup>:

Եւ մի՞թե այդ նույն միտքը չի արտահայտում գերմանացի հայագետը (որի խոսքն է վկայակոչում Ա. Մարտիրոսյանը), երբ տարակուսանք է հայտնում Դանիելի անձի նկատմամբ, գրելով. «Շատ տարօրինակ է գրում է 3. Մարկվարտը, որ հայերը ոչ միայն դանիելյան սյրուբենի որպիսության, այլևս նրա տիրոջ անձնավորության մասին համարյա թե ոչինչ չունեն ասելու: Միայն լսում ենք, որ նա ասորի է և եպիսկոպոս է եղել, բայց երբեք չի հայտնվում այն տեղը, ուր նա գործել է որպես եպիսկոպոս»<sup>3</sup>:

Զուգադիպությունն ակներև է և մտահոգող: Ինչպես Դանիել եպիսկոպոսի կողմից հանկարծազուտ հայերեն լեզվի նշանագրերի սուտապատումը, այնպես և Դանիելի անձի իսկությունն նկատմամբ հայագետների երկմտանքն իրական, շատ հիմնավոր հիմքեր ունեն: Ահա այդ հանգամանքը և գրերի գյուտի ողջ ընթացքը բերում են այն մտքին, որ իսկապես Դանիել անձնավորություն գոյություն չի ունեցել, պատահաբար հայերենի գրեր չի գտնվել, չեղած գրերով երկու տարի կրթություն չի տարվել: Մեր խորին համոզմամբ թագավորի արած ամբողջ պատմությունն սկզբից մինչև վերջ հորինել են Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը, գուցե և թագավորի գիտությունը, այն «պրոպոզիցիոն» է միայն: Այդ «սուտ լուրը» տարածվել է հայոց Վառամյան թագավորի հեղինակավոր խոսքի միջոցով նպատակ ունենալով այդ ճանապարհով պաշտպանել գրի գործի հետագա ընթացքը, այլևս չթաքցնելով հայոց գրերով երկրի ներսում տարվող ուսուցման աշխատանքը: Թագավորի պատմությունն իսկապես «նպաստել» է ազգային-քաղաքական հարաբերություններով

<sup>1</sup> Ա. Մարտիրոսյան, *Ազգ. աշխ.*, էջ 179:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 194:  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 193:

լարված այդ ժամանակներում հայ գրի մտահոգությունն ասորի եպիսկոպոսին վերագրելով, այդ անվան տակ պատասպարել, նույն է թե ասորական կենտրոն-եկեղեցու հովանու ներքո, անհետաձգելի աշխատանքներն անարգել առաջ տանել: Իսկապես, ասորի եպիսկոպոս Դանիելը գրերի գործին «պահապան» է եղել և ուրիշ ոչինչ: Ուրեմն, իրականում ի՞նչ է տեղի ունեցել, ի՞նչ կրթություն է տարվել երկու տարի շարունակ, որի համար Մեսրոպ Մաշտոցը հասել է վարդապետական, վարժապետությունացապետի բարձր ու գեղեցիկ աստիճանի:

Շարունակելով նախապես հայտնած մեր միտքը, հիշենք միայն, որ Մաշտոցն իր մենակեցություն և քարոզչություն 6 տարիների ընթացքում (394-400), երբ կազմել և ավարտել էր հայերենի իր աշխատանքային հունագիր այբուբենը, երբ այն Սահակ կաթողիկոսի հետ միասին ստեղծել ու ճշտել էին, և երբ եկեղեցու ուսյալ հայերը «շատ օրեր, բազում ևնդություններ կրելով» իրենց համակողմանի քննություններով արդեն հավաստել ու երաշխավորել էին այն ուսման համար, Վառամյան թագավորին և Սահակ կաթողիկոսին այլևս մնում էր միայն մտահոգվել այդ նորակազմ գրերով անվտանգ կրթելու մասին: Իսկ երկրով մեկ ծավալուն կրթության համար անհրաժեշտ էր նախ կրթողներ ունենալ, ուսուցիչներ պատրաստել, որը և վարքագիրը ծածկել է Դանիելի հանկարծազուտ նշանագրերը սկզբնապես «արծարծել»-գործադրել կարողանալու հանգամանքով: Իսկ երբ այդ աշակերտներից շատերն արդեն սովորել էին, այլ խոսքով կրթված ուսուցիչներ էին և կարող էին կրթել, Վառամյան թագավորը հրամայել է «ամեն տեղ նույն նշանագրերով կրթել», այս էլ նշանակում է Դանիելյան նշանագրերի անվան տակ մեսրոպակազմ գրերով ուսուցում տանել: Ահա և երկրում մեսրոպակազմ հայերեն գրերը ուսուցանելու և այդ նպատակով սկզբնապես ուսուցանողներ պատրաստելու կրթական աշխատանքների համար է, որ գրաստեղծը վարդապետական-վարժապետի գեղեցիկ աստիճանին է բարձրացել: Այլևս պարզ է դառնում, որ Մաշտոցի ուսուցչության կամ նրա Դանիելի նշանագրերի անվան ներքո տարած կրթության «իբրև ամս երկու»՝ մոտ երկու տարի հիշատակած ժամանակը պայմանավորված է եղել գրի ստեղծման այն հիմնահարցերի պարզաբանումների ու անհրաժեշտ ավյալների ձևաբերումների ավարտով, որոնք հարկավոր էին գրաստեղծին գործի ընթացքում, և առանց որոնց նա չէր կարող առաջ տանել իր սկսած մեծ գործը (արդեն անիմաստ է երկու տարի, թե երկու ամիս հարցի վերաբերյալ վիճաբանությունները): Հետևաբար, երբ գրաստեղծը կարգեր իրեն հետաքրքրող բոլոր հարցերը, այն ժամանակ էլ միայն կհրապարակվեր Դանիելի նշանագրերի ինչ լինելը, նրա անալիտանիությունը (ահա թե հայ գրի ստեղծման գործին որպիսի «պահապան» է ազնվական ասորի եպիսկոպոսը): Այդպիսի մոտեցմամբ ծածկվել, ուշադրությունից հեռացվել է գրաստեղծի նորակազմ գրերով իսկապես վարած ուսուցումը, ապա-

Հովվել է գործի վերջին ավարտական մասը երկրից դուրս տեղափոխելը (որտեղ գրապատկերների ազգայնացում էր կատարվելու) և ասորական կենտրոն-եկեղեցու (նույնպես և Հունական) պաշտպանությունը մալահովել է ազգային գրի հրապարակումն ու կիրառումը:

Այժմ փորձենք ընդանուր գծերով պատկերացնել, թե աշխատանքի այդ շրջանում, երբ նորակազմ գրերը (Հունագիր) առաջին անգամ գործադրում, կիրառում էին, Մաշտոցն ինչպիսի՞ ընթացիկ հարցեր ունեւր դեռ պարզելու և ճշտելու, որպեսզի կարողանար շարունակել իր սկսած մեծ գործը:

1. Եթե լեզուն գրավոր արտահայտելու, գրականացնելու առաջին և վճռական մասը բանավոր լեզվի հնչյունական համակարգի լիակատար հայտնաբերումն է, ապա Մաշտոցն իր ուսուցչությունն երկու տարում հնարավորություն ունեւր մի վերջին անգամ հիմնավոր կերպով ճշտել և նշանակել հայոց զարգացած բանավոր լեզվի հնչյունական բարդ կազմությունը, ի հայտ բերել նրա ներքին կանոններն ու օրենքները. պարզել յուրաքանչյուր հնչյունի նշանակությունը լեզվում և որոշել պատկերավորվող հնչյունների վերջնական թիվը: Արդյո՞ք Մաշտոցը սկզբնապես է ի հայտ բերել այբուբենի տառերի 36 թիվը, թե՞ այն նրա երկարատե ուսումնասիրությունների արդյունքն է (հակված ենք երկրորդին): Հայտնի չէ. ավելի քան մեկ ու կես հազարամյակ փոփոխություններ չկրած, կամ գրեթե չկրած տառերի այդ թիվով էր պայմանավորվում նաև գրերի դյուրընթեռնելիությունը:

2. Գրի երկրորդ հիմնահարցը դյուրընթեռնելիությունն է, գրերի հավասարաստիճան արտահայտվելու հնարավորությունն՝ անկախ նրանց գործածվելու հաճախականությունից (առայժմ չանդրադառնանք գրապատկերների գեղագրական կողմին): Որպեսզի պարզ լինի, թե գրերի կիրառությունն ինչպիսի մեծ տարբերություններ կան, և այդ հանգամանքն ինչպիսի խոչընդոտ է դյուրընթեռնելիության համար, բերենք պատմիչներ՝ Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի և Կորյուն վարդապետի բնագրերում կատարած մեր հաշվումներից՝ հաճախ և սակավ կիրառվող գրերից առայժմ երկուական ցուցանիշներ միայն:

Յուրաքանչյուր բնագրում 10 հազար գրերի հաշվով համապատասխանաբար կիրառվել են՝

Ա - 1702, 1705, 1883 = 17,6%	Ե - 808, 1049, 1046 = 9,7%
Ե - ..19, ..18, ..18 = 0,18%	Զ - ..29, ..23, ..24 = 0,25%


Տարբերությունը կազմում է՝ մի դեպքում 96, իսկ մյուսում՝ 36 անգամ, ասել է թե՛ անհամեմատելի է (ընդարձակ ցանկով և այբուբենի բոլոր գրերի հաշվումները կներկայացնենք համապատասխան տեղում):

Հետևապես, գրաստեղծն իր հայերենի հունագիր նշաններն ինքնուրույն դարձնելու, ազգայնացնելու նպատակով ամենից առաջ պետք է, որ պարզ հաշվումներ կատարելով նախապես ճշտեր յուրաքանչյուր գրի-գրանշանի կիրառվելու աստիճանի մեջ (անշուշտ, այդ հաշվումները գրաստեղծի համար կարող էին կատարել նրա աշակերտ-օգնականները), համապատասխան օրի և պատկերավորեր հնչյունները, կազմեր գրանշանները, (իսկ, թե որպիսի հնարամիտ միջոցներով է հանճարեղ գրաստեղծը հարթել, վերացրել այդ անհավասարությունը և ապահովել իր գրերի դյուրընթեռնելիությունը՝ այդ խնդրին կանգրադառնանք առանձին):

3. Երկրում եկեղեցիների և եկեղեցական դպրոցների առաջնահերթ ազգայնացումը հարկադրում էր հայերեն լեզվով կրոնա-ձիսական և ուսումնական գրականություն ստեղծել, ամենից առաջ ասորերեն և հունարեն Սուրբ գրքերից անհրաժեշտ թարգմանություններ կատարել և եկեղեցին ու նրա դպրոցներն ապահովել անհրաժեշտ կրոնական գրքերով: Ահա և այդ նպատակով, երբ Մաշտոցը իր գրերով ուսուցանում էր, քարոզիչներ և ուսուցիչներ պատրաստելուց զատ, պետք է մտահոգվեր նաև ասորերենից ու հունարենից հայերեն թարգմանիչներ և թարգմանություններ, ընդունված կարգով կրոնական գրքեր կազմող գրիչներ ևս պատրաստելու մասին: Իսկ դա անելու համար նա կարող էր նախապես ընտրել և առանձնացնել առաջադեմ, համապատասխան գիտելիքներ ձեռք բերած և որոշակի շնորհներ ունեցող իր աշակերտներից, և առանձին խմբեր կազմել՝ ասորերեն, հունարեն լեզուներով կրթությունը շարունակելու և գրչագրություն արվեստում վարժվելու համար:

Մեր կարծիքն այն է, որ քաղաքական իրադրությունն է պարտադրել հորինելու Դանիելի հայերեն լեզվի հանկարծադյուտ ալփաբետների պատմությունը, որպեսզի հենց այդ անվան ներքո երկրի ներսում մեսրոպատեղծ գրերով ուսուցում տարվի: Իսկ Դանիելի նշանագրերով երկու տարի ուսուցանելուց հետո նրա հայերեն գրեր չլինելու հրապարակումը (որքան էլ մշուշված, այնուամենայնիվ, այս կասկածը վկայություն սկզբից է հարուցվում), գրերի գործի վերջին ավարտական մասը, և հատկապես նրա հրապարակումը երկրից դուրս տանելու, ասորական կենտրոն-եկեղեցու պաշտպանությանը հանձնելու նպատակով է: Ուստի, այսու նաև այս ըմբռնմամբ մոտենանք վարքագրի կողմից ներկայացվող գրաստեղծի հետագա գործունեությունը:





## ԳԼՈՒԽ 2.

### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅԻ ՄԻՋԱԳԵՏՔ ԿԱՏԱՐԱԾ ՈՒՂԵՒՈՐՈՒԹՅԱՆ  
ԵՒ ՀԱՅՈՑ ԱՉԳԱՅԻՆ ԳՐԵՐԻ ԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ն**ախորդ քննություններից պարզվեց, թե Մեսրոպ Մաշտոցը որքան էր առաջ տարել իր սկսած մեծ գործը. կրոնական-մենակյաց կյանքի (394-398), Գողթան գավառի քարոզչության (398-400) և Դանիելի հանկարծազուտ հայերեն լեզվի ալփարեանների անվան ներքո տարած ուսուցման (400-402) ճտարիների ընթացում (394-402): Այդ ժամանակը բավարար էր այդպիսի աշխատանքի համար: Մաշտոցի գյուտի ավարտին մնում էր միայն իր աշխատանքային հունազիր այբուբենն ազգայնացնել, ինքնուրույն գրապատկերներ կազմել և գեղագրել. «Ազգային լեզու, ազգային այբուբեն՝ այս էր հին սկզբունքը» հիշեցնում է Հր. Աճառյանը (անշուշտ, այդ ընթացում ևս շատ հարցեր կճշտվեին և կշտկվեին): Սակայն այդ ամենից դատ կար ևս մեկ այլ՝ որքան կարևոր, նույնքան և վտանգավոր խնդիր, որ մտահոգություն տեղիք էր տալիս: Դա ազգային գրի հրապարակումն էր, նրա ներդրումը: Հիշենք, որ մշակութային բարեփոխման ճանապարհով երկրի եկեղեցիների ու նրա դպրոցների ազգայնացումն այդ ժամանակ ավելի քաղաքական իմաստ ու կարևորություն էր ստանում, քան՝ առաջադիմություն նշանակություն, ուստի այն չէր կարող ընդունելի լինել Իրանին և, իհարկե, նաև Մեծ Հայքում գործող օտարազգի, հատկապես ասորի քարոզիչներին: Հետևաբար, Մաշտոցի մնացյալ աշխատանքներն այլևս չէին կարող երկրի ներսում տարվել: Ահա, նաև այս հարցում էր օգտակար լինելու ազնվական ասորի եպիսկոպոսի մասին հորինված պատմությունը. եթե Դանիելի կարծեցյալ հայերեն նշանագրերով իրբև կրթելու միջոցին Մաշտոցն իր նորակազմ գրերով ուսուցումով իր գործին օգնական-աշակերտներ էր պատրաստել, ապա Դանիելի նշանագրերի խափանումով դուռ է բացվել Ասորիք, ոչ միայն գործի վերջին մասն ավարտելու, այլև՝ ասորական եկեղեցու կողմից այն վավերացնելու և նրա պաշտպանությունը հրապարակելու համար:

Ներկայացնենք վարքագրի այն միակ հիշատակությունն, ուր առաջին անգամ վկայվում է հայոց ազգային գրերի արարման մասին. «Լսան

որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկոց հրամանաւ արքայի եւ միաբանութեամբ արքոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմիանց համբուրի սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վռամշապիոյ արքային Հայոց, եւ երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուս Ասորաց. որոց առաջին Եղեսիա կոչի, եւ երկրորդին Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բարիլաս անուն եւ երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերակաւօրն եւ իշխանօքն քաղաքաց պատահեալ, եւ բալում մեծարանա ցուցեալ հասկոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտաւեր վարդապետին ցտարեալսն ընդ իւր երկուս բաժանեալ, Կոմանս յասորի դպրութիւնն՝ կարգէր [ի քաղաքին Եղեսացոց], եւ Կոմանս ի յունական դպրութիւնն՝ անտ ի Սամուսատական քաղաքն գումարէր:

Եւ նորա իւրովք հաւասարօք ցտվորականն առաջի եղեալ Կաղօթս եւ Կտքնութիւնս եւ Կպաղատանս արտասուալից, Կիստամբերութիւնս, Կիոգս Կաշխարհաւեծս, յիշելով Կասացեալսն մարգարէին, եթէ՝ «Յոր ժամ հեծեծեցես, յայնժամ կեցցես»:

Եւ այնպէս բալում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ապին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգեւէր իսկ փճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, յօրինէր սիղոբայիք կապօք:

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն արքոյ, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամուսատացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր:

Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դրպութեան Հռոմանոս անուն գտեալ, որով Կամենայն ընտրութիւնս նշանագրոցն **վերքագոյնն եւ Կայնագոյնն, վկարճն եւ Կերկայնն, Կտանձինն եւ Կերկնաւորն, միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ**, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամքք երկուք, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղնական տանէն: Եւ եղեալ սկիպն թարգմանելոյ Կգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ «ճանաչել Կիմաստութիւն եւ Կիւրատ, իմանալ Կրանս հանճարոյ»: Որ եւ գրեցաւ **ձեռամբն այնորիկ գրչի**, հանդերձ ուսուցանելով Կմանկունս գրիչս նմին դպրութեանն<sup>1</sup>:

«Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոպոստ քաղաքին եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորաց: Որ յորոց նախընկալն եղեւ, առաջի արկեալ նոցա Կնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բալում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց արքոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ եւ ի միփթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց հրաժարեալ այնուհետեւ եւ առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգեւօքն եւ ամենայն իւրայիւքն, ի շնորհացն

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 94-95:

Աստուծոյ ճանապարհորդ լինէր. Կօթեանօք անցեալ աջողութեամբ եւ հոգե- լից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն ի կողմանս Այ- րարատեան գաւառին, առ սահմանօք Նոր Քաղաքին, ի վեցերորդ ամի Վոսմ- շապիոյ արքային Հայոց Մեծաց:

...«Դրա համար երանելի Մաշթոցը՝ արքայի հրամանով և սուրբ Սահա- կի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը և, սուրբ համբոյ- բով միմյանց հրաժեշտ տալուց հետո, ճանապարհ ընկավ, գնաց Հայոց արքա Վոսմշապուհի հինգերորդ տարում. և գնաց, հասավ Արամի կողմերը, ասորաց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա է կոչուում և երկրորդի անունն է Ամիդ: Երկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բա- բիլաս էր և երկրորդինը՝ Ակակիոս: [Նրանք] կղերականների և քաղաքների իշխանների հետ միասին հանդիպեցին և շատ մեծարանքներ ցույց տալով հասնողներին՝ ընդունեցին հոգ տանելով [նրանց համար] քրիստոնյաների կարգի համաձայն:

Իսկ աշակերտասեր ուսուցիչն իր հետ տարածներին երկու [խմբի] բաժա- նելով՝ ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քա- ղաքը:

Եւ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքներն ու տրնություն- ները, աշխարհահեծ հոգւերը, հիշելով մարգարեի ասածը, թե՛ «երբ որ հեծե- ծես, այն ժամանակ կապրես»:

Եւ այսպէս նա շատ նեղություններ քաշեց իր ապգին մի քարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապէս պարգևվեց նրան [այդ] բախտը. **Նա իր Սուրբ Աջով հայրաքար ծնեց նոր սբանչելի ծնունդ- ներ հայերեն լեզվի նշանագրեր:** Եւ այնտեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիրորաներով-կապերով:

Եւ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին, իր օգնականների հետ միասին իջավ Սամուսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիս- կոպոսից և եկեղեցուց:

Եւ հենց այնտեղ, նույն քաղաքում գտավ հելլենական դպրության մի գրա- գիր Հոսիանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր պնասպանություն- ները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձին ու կրկնավորը **ամբողջապէս հորինելուց և վերջացնելուց հետո** ձեռնարկեց թարգմանութ- յուն անելու երկու մարդու, իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հոսիան էր, Եկեղյաց գավառից, և երկրորդինը՝ Հովսէսի, Պաղնական տնից: Եւ սկսեց թարգմանել [սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի Առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության ասելով, թե՛ «ճանաչել պի- մաստութիւն եւ պիտատ, իմանալ պրանս հանձարոյ», որ և **գրվեց այն գրագրի ձեռով.** միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ [պատ- րաստելով] նույն դպրության համար:

Ապա դրանից հետո թղթեր առավ քաղաքի եպիսկոպոսից և, բոլոր իրա- յիններով հրաժեշտ տալով նրանց, բերեց Ասորաց եպիսկոպոսին: Ասովա- ծատուր նշանագրերը ներկայացրեց նրանց, որոնցից սկզբում ընդունվել էր: Դրա համար սուրբ եպիսկոպոսներից և բոլոր եկեղեցիներից շատ գովաբա- նություններ բարձրացան ի փառս Աստուծո և ի մխիթարություն աշակերտած- ների: Նրանցից բաժանվեց այնուհետև և ավետագրեր առնելով շնորհատուր պարգևներով և բոլոր իրայիններով Աստու շնորհիվ ճանապարհ ընկավ, օթ- ևաններ անցավ, աջողությամբ ու հոգելից ուրախությամբ եկավ, հասավ Հա- յաստան աշխարհը, Այրարատյան գավառի կողմը, Նոր Քաղաքի սահմանների մոտ, Մեծ Հայաստանի արքա Վոսմշապուհի վեցերորդ տարում»<sup>1</sup>:

Դյուտը վկայող Կորյունի այս առաջին և ամբողջովին ավարտված պատմութունն ուղղակի, և թե կողմնակի, հետաքրքրական շատ տեղե- կութուններ է պարունակում ազգային գրերի ստեղծման մանրամաս- նութունների (այս պարագայում երևի թե ճիշտ է ասել եկեղեցական), Մաշտոցի տարած բազմակողմանի աշխատանքների, ինչպես և զրադաշ- տի կործանարար վտանգի դեմ քրիստոնյա եկեղեցիների առաջացրած միասնականության մասին:

Ամենից առաջ նկատենք, Դանիելի ալփաբետների անհաջողութու- նից հետո, մի կարճ ժամանակ անց ինչպիսի պատրաստությամբ և որքան բազմամարդ խմբով է Մաշտոցն ուղևորվել Ասորիք, և որչափ մեծապա- տիվ ընդունելութուն է գտել նրա ուղևորութունը Միջագետքի քա- ղաքներում: Մաշտոցն իր գործին Համացած, ասորերեն և հունարեն լե- ղուներով ուսած իր օգնական-ընկերներից գատ, ապագա թարգմանիչներ և գրագիրներ նախապատրաստելու նպատակով իր հետ տարել է նաև ասորական և հունական դպրութուններով կրթվելու և գեղագրության արվեստում վարժվելու համար աշակերտական ոչ փոքրաթիվ խմբեր և տեղավորել է ուսման՝ ասորական Եդեսիա և հունական Սամոսատ քա- ղաքներում, ժամանակի նշանավոր մշակութային կենտրոններում (Մաշ- տոցը Ամիդով է անցել Եդեսիա և Սամոսատ): Անշուշտ, թե՛ Հայոց Վոսմ- շապուհ թագավորը, և թե՛ Սահակ Պարթևը հիշյալ քաղաքների իշխան- ներին և եկեղեցիների առաջնորդներին ուղղված հրովարտակներով և կոնդակներով տեղյակ են պահել Մաշտոցի առաքինության մասին, որի շնորհիվ՝ Մաշտոցն ամենուր մեծարանքների է արժանացել, նրա գործին օգնելու հոգատարութուն են ցուցաբերել: Պետք է ընդունել նաև, որ Մաշտոցի այդ բազմամարդ ուղևորութունը ևս նյութապես ապահովված է եղել: Մաշտոցի ուղևորութունը Միջագետք այն աստիճան խնամքով է նախապատրաստված, այնպիսի կազմակերպվածութուն ունի և այնպիսի բարյացակամությամբ ու հոգատարությամբ է ընդունվել, որ ակամայից մտածել է տալիս, որ գյուտը հաստատապես տեղի է ունենալու, որ ազ- գային գրի ստեղծումը կասկածից դուրս է, նույնիսկ այն կատարվելու

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 94-99:

է մոտ ժամանակում: Կարծում ենք, որ այդ հանգամանքն ինքնին վկայումն է այն մասին, որ Մաշտոցն իր կրոնական կյանքի 7-8 տարիների ընթացքում գրերի գործն այն աստիճան էր առաջ տարել, որ նրա վերջնական ավարտն իսկապես կուսհեղին էր: Իսկ դա իր հերթին հավաստում է, որ գրերի գյուտը գիտաստեղծագործական տքնանք պահանջող տեղական աշխատանքի արդյունք է միայն:

Ստեղծված քաղաքական իրադրությունում ազգային-եկեղեցական նկատառումներով առաջացած փոխհարաբերությունների գնահատման առումով ուշագրավ են նաև Մաշտոցի՝ Միջագետքից վերադարձի մասին Կորյունի տված տեղեկությունները: Վարքագիրը հայտնում է, որ Մաշտոցը, երբ հունական Սամոսատ քաղաքում ավարտել է իր բոլոր գործերը, հրաժեշտ է տվել քաղաքի եպիսկոպոսին, նրանից «թղթեր» է առել և բոլոր յուրայիններով կրկին վերադարձել է ասորաց Եդեսիա քաղաքը և «աստվածատուր նշանագրերը» ներկայացրել է «նրանց, որոնցից սկսվում ընդունել էր» այն: Մաշտոցը շատ գովաբանություններ է ստացել քաղաքի «սուրբ եպիսկոպոսներից և բոլոր եկեղեցիներից», որոնցից նույնպես «թղթեր-ավետագրեր» առնելով հրաժեշտ է տվել հիշարժան Եդեսիա ասորոց քաղաքին և «չնորհատուր պարգևներով», այսինքն՝ նորաստեղծ գրերով, իր ամբողջ խմբով վերադարձել է հայրենիք՝ Մեծ Հայքի մայրաքաղաք Վաղարշապատ: Արդյոք Կորյունի այս պատմությունը բաղձալի գործի հաջողությունը ավարտված լինելու մի ուրախ նկարագրություն է միայն, որ նրա երկի ընդհանուր տրամադրությունն է: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել ասորի և հույն եպիսկոպոսների ու նրանց եկեղեցիների դարմանալի համերաշխ ու բարյացակամ վերաբերմունքը Մաշտոցի գործի նկատմամբ, նրանց երկուստեք ցուցաբերած անսպասելի օգնությունը հայերին վերաբերող խնդրի հանդեպ, երբ այն նույնքան էլ ուղղված էր Մեծ Հայքում գործող իրենց գործունեությունը դեմ: Այդ ինչպե՞ս Հայոց եկեղեցին իրենց կողմը ձգելու՝ ասորի և հույն եկեղեցիների լարվածությունը տեղի տվեց նրանց համատեղ օժանդակություն: Եւ արդյո՞ք գրաստեղծը պարտավոր էր իր նորաստեղծ գրերը ներկայացնել ասորի առաջնորդ եպիսկոպոսին, կամ եկեղեցուն, հաշվետու լինել նրանց իր կատարածի, զուտ ազգային լեզվին վերաբերող այն էլ գիտաստեղծագործական ուրույն աշխատանքի համար: Նույնքան կարևոր է նաև այն, որ հենց նրանց, երևի թե Եդեսիայի Բաբելաս եպիսկոպոսի խորհուրդով ու ցուցմունքով է Մաշտոցը ճանապարհվել հունաց Սամոսատ քաղաք և, հելլենական դպրությունից գրիչ Հռոփանոսի օգնությամբ է գեղագրել իր նորակազմ գրապատկերները, և արդյո՞ք այդ շեշտված հելլենական-հունական ասվածը մատնանշումը չէ այն բանի, որ այդ գրերի նկարվածքային հիմքի վրա է Մաշտոցը կազմել հայերեն գրերի նշանները, որի համար և սպասելի էր, որ այդ դպրության վարժված գրիչը կարող էր այն լավագույնս գեղագրել (խնդրին հանգամանորեն կանդրա-

դառնանք առանձին): Այդ ի՞նչ սիրալիր ուշադրություն էր, որ ասորի կրոնական առաջնորդը տածել է հույն գրչի նկատմամբ: Եւ, վերջապես, այդ ի՞նչ թղթեր ու ավետագրեր էին, որ Մաշտոցը ժողովել է Սամոսատի հույն և Եդեսիայի ասորի եպիսկոպոսներից և եկեղեցիներից: Կա՞ր, արդյոք դրանց կարիքը, կամ թե ո՞ւմ պետք է ներկայացվեին դրանք, ի՞նչ նպատակով, որ այդքան ընդգծված, ամենքն իր տեղում հիշատակում է սակավախոս վարքագիրը: Ահա հետաքրքիր հարցերի մի ամբողջ խումբ, պատասխանել որոնց նշանակում է՝ ժամանակի քաղաքականապես աննպաստ իրավիճակում կուսհեղ զուգույն գրի ստեղծման իրական ընթացքը:

Մենք այն կարծիքն ենք հայտնել, որ հայ գրի ստեղծման տասնամյա (394-404) աշխատանքները մտածված կերպով, հեռատեսորեն սքողվել են Արքայից արքայի վերակացուների և, հատկապես, Իրանի մոզերի վտանգավոր ուշադրությունից: Ապահով է երևացել գրերի գործի վերջին ավարտական մասն երկրից դուրս՝ ասորական կենտրոն-եկեղեցու ոլորտ տեղափոխելն ու նրա պաշտպանություն ներքո կատարել և հրապարակել այն:

Դարասկզբին Սասանյան Իրանում գրադաշտականությունն այնքան էր հզորացել և պետականորեն այնպիսի պայմաններ էին ստեղծվում նրա բուն տարածման համար, որ սպառնալիքն այլևս չէր կարող չսթափեցնել և առաջ չբերել քրիստոնյա եկեղեցիների միասնական դիմադրությունը:

Իրանի նվաճողական ձգտումները, որ ուղեկցվում էին գրադաշտական կրոնի տարածմամբ, և որի վտանգի առջև էր հայտնվել քրիստոնեությունը, առաջնային երկրներից Հայաստանը. չէր կարող հանհանգստացնել և չմտահոգել ասորի և հույն եկեղեցիներին, ինչպես և Հռոմին: Վտանգը քրիստոնեությունը դեմ էր: Ուստի ասորի և հույն եկեղեցիների ներքին միասնությունը Հայաստանում քրիստոնեությունը պաշտպանելու, երկրի եկեղեցին ամրացնելու հարցում երկուստեք անհրաժեշտություն էր: Ահա և այդ անձայն միասնություն հետևանքն ու նաև պարտադրանքն էր Եդեսիա և Սամոսատ քաղաքների իշխանների և եկեղեցիների առաջնորդ եպիսկոպոսների կողմից Մաշտոցի մեծարանքներով ընդունելությունն երկրի վերջին և նրան ցույց տրված օգնությունները և, ի վերջո, Հայոց գրերի գյուտի ողջունումը. «Վասն որոյ քալում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց եւ յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ եւ ի միութարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք», - գրում է Կորյունը:

Կորյունը հայտնում է, որ երբ Մաշտոցը Սամոսատում ավարտել է իր նորակազմ գրանշանների գեղագրությունը, Հռոփանոս գրչի ձեռքով կազմել է տվել Հայոց գեղագիր այբուբենի ցուցանմուշ պնակիտը՝ և Ուղմոնի առակներից կատարած իրենց առաջին թարգմանությունների

<sup>1</sup> Բառանկյուն փոքրիկ տախտակ, որի վրա փակցված թղթի վրա գրում էին այբուբենը, սովորելու համար - հրատ.:

գրչագրումը. այն օրինակ է ծառայել նաև գրագիրներ սովորեցնելու համար (հայոց գրերի առաջինը գեղագրելու պատիվը հույն գրիչ Հոսիոսին է, և մենք պարտավոր ենք սիրով և երախտապարտությամբ հիշել նրան և նրան ծնող արվեստասեր ժողովրդին), որից հետո կրկին վերագարձել է Եղեսիա և այդ բոլորը ներկայացրել է նրանց, որոնց կողմից այն նախապես ընդունվել էր: Դա նշանակում է, որ ասորական եկեղեցին պաշտոնապես ընդունել է և, իհարկե, նաև պաշտպանել Հայոց եկեղեցու ազգայնացումը, նրա կրոնա-ժիսական լեզուն ասորերենից հայերեն գարձնելու բարեփոխումը: Այդ են հաստատում նաև ասորի և հույն եկեղեցիների ու եպիսկոպոսների Մաշտոցին տված «թղթերն ու ավետագրերը», որոնցով նրանք իրենց քարոզիչներին զգուշացրել են և պահանջել չընդգրկմանը Հայաստանում եկեղեցու և դպրոցների ազգայնացման գործին, նախապես կասեցրել են սպասվող դժգոհությունը: Իսկ հատուկ զգուշացնելու կարիք իսկապես կար: Մեկ դար շարունակ ասորի և հույն քարոզիչներն էին ողջ Հայաստանով վարել այդ գործերը, և նրանց առջև այսուհետ փակվում էր գործելու այդ դարավոր ասպարեզը: Բարեփոխումը ծանր էր նույնիսկ հոգեպես (այլևս հարկ կա՞ մտածել, որ գրի խնդրով Վաղարշապատում գումարված կրոնական ժողովին օտարազգի քարոզիչներ են նաև հրավիրվել, և հենց նրանց ընդգրկման պատճառով է «մերժվել» գրի գործը): Ասորի և հույն եկեղեցիներն իրենց կրոնավորների գործունեությունը Մեծ Հայքում կասեցնելու գնով ամրապնդել են Հայոց եկեղեցին և ժամանակին միացյալ դիմադրություն են կազմել զրադաշտի սպասվող վտանգի՝ նույն է, թե հայ ազգի ուժացման՝ Իրանի հրեշավոր միտումի դեմ: Այն համընկնում էր նաև Հռոմի պետական շահին, հանձին հայերի ազգային միասնության պաշտպանման՝ ստեղծվում էր հուսալի դիմադրություն, որը ոչ միայն կկանգնեցներ Իրանի առաջխաղացումը, այլև կվերականգներ Հռոմի նսեմացված հեղինակությունը: Հատկանշական է որ, երբ Մաշտոցը մեծ պատրաստությամբ ձեռնարկում է նաև Հռոմին ենթակա Հայաստանի արևմտյան հատվածի լուսավորության գործը, մտածում է՝ «Հայոց կես ազգի մասին, որ Հռոմիների թագավորի իշխանության տակ էր»- գրում է Կորյունը: Կուսակալ սպարապետ Անատոլիսը, չնայած իր տված պատիվներին, անտեղյակ լինելով խնդրի հեռու տանող պետական-քաղաքական կողմերին, Հայաստանի արևմտյան հատվածի հայկական դպրոցների բացման հարցում փաստորեն մերժում է Մաշտոցին, պահանջում է այդ առթիվ Թեոդորոսի կայսերագիրը: Մաշտոցը ստիպված է լինում իր հետ տարած աշակերտների «բազմությունը» տանել Մելիտին քաղաքի Ակակիոս եպիսկոպոսի մոտ թողնել և միայն բչերի» հետ ճանապարհվել Կոնստանդնուպոլիս: Կայսերանիստ քաղաքում՝ եկեղեցու, արքունիքի և իշխանների կողմից Մաշտոցն արժանանում է մեծարանքերի և երբ զատկի տոներից հետո կայսերը բացատրում է «պիտոյքի հանգամանքները», համոզում է պալատականներին, անշուշտ

ոչ առանց Ատտիկոս պատրիարքի անհրաժեշտ միջամտության, իր նպատակադրված գործի համար ստանում է «անընդդիմանելի» կայսերագիր: Իսկ, թե որպիսի առանձնակի կարևորություն է տվել Հռոմն իրեն ենթակա Հայաստանի մասում հայագիր դպրոցների հիմնման գործին, ասել է թե՛ հայ ժողովրդի միասնությանը, նրա ազգային ինքնուրույնության պահպանմանը, այդ մասին վարքագիրն ընդարձակ և կարևոր հիշատակություն ունի. «Եւ ապա յետ Պասեթին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն պիտոյիցն փանգամանս, եւ առեալ վանընդդիմակաց հրամանն հանդերձ սակերոք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկտոյն յաշակերտութիւնն առ ի կէս ապգէն Հայոց ժողովելոյ, եւ վասն ժանտագործ ապին բարբարիանոսաց, եւ եկեղեցեաց հաստատութեան, եւ մեծամեծ պարգևօք պատուելոյ: Վասն որոյ հաւանեցուցեալ ճշմարտին վարքունիսն, անընկալ թողոյր: Եւ երկիր պագեալ ծիրանափառ օգոստականաց եւ սրբոյ կաթողիկոսին, եւ ընկալեալ ողջոյն յեկեղեցոյն եւ յերեւելի իշխանաց քաղաքին, եւ ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի դեսպակս եւ ի կառս արքունատուրս եւ մեծաւ շքով եւ բազում վայելչութեամբ ունէին Կանապարիս արքունականս: Եւ ամենայն քաղաքացն պատահելով, ի քաղաքին պայծառագոյն երեւէին:

Եւ մեծամեծ պարգևս գտեալ, գային հասնէին ի ժամադիր կողմանս: Եւ անդէն վաղվադակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերոք փութայր վաղվադակի փրամանն կատարել: Եւ հրեշտակս արձակեալ այնուիտեւ ի գաւառս կէս ապին Հայոց իշխանութեանն կասեր, բազմութիւն մանկտոյ ժողվել եւ նոցին ռոճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս, յորս եւ երանելին վարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, եւ ժողովելոցն քաղցրացուցանէր»:

...«Եւ ապա վատիկն անելոց հետո՝ կայսրին բացատրեց նա պիտոյքի հանգամանքները և անընդդիմանակի հրաման առավ՝ կայսերագիր դրոշմած սակերներով՝ հայոց կես ապից սովորեցնելու նպատակով մանուկներ ժողովելու համար, բարբարիանոսների ժանտագործ աղանդի վերաբերյալ ու եկեղեցու հաստատության, ինչպես և մեծամեծ պարգևներով [նրան] պատվելու մասին: Արդարն այս մասին համոզեց պալատականներին, ինքը բան չառնելով՝ թողեց [նրանց]: Եւ երկրպագեց ծիրանափառ օգոստականներին ու սուրբ կաթողիկոսին և [իրաժեշտի] ողջատրթ ընդունեց եկեղեցուց ու քաղաքի երևելի իշխաններից, և բոլոր իրայիններով առողջությամբ նստեցին արքունիքից տրված դեսպակների ու կառքերի մեջ, և մեծ փառքով ու պատվով բռնեցին թագավորական ճանապարհները: Եւ բոլոր քաղաքները դիմավորում էին, [և ամեն ] քաղաքում երևելի էին հանդիսանում:

Եւ մեծամեծ պարգևներ ստանալով եկան, հասան ժամադիր կողմերը: Եւ իսկույն ևեթ հանդիպեցին Հայաստանի սպարապետին, կայսեր սակարներով ներկայացան [նրան]: Եւ երբ նա ստացավ կայսերական դրոշմներով սակարները, շտապեց իսկույն հրամանը կատարելու: Եւ, այնուիտեւ, պատգամավորներ ուղարկեց կայսրի իշխանության մեջ եղած հայոց կես ապի զավառները՝



բազմաթիվ մանուկներ ժողովելու և նրանց թոշակ նշանակելու հարմարավոր տեղերում, ուր և երանելին իր ուսուցչությունը գործադրում և բաղքազնում էր ժողովվածների համար»<sup>1</sup>:

Այլևս կասկածից դուրս է, որ քրիստոնյա եկեղեցիների և Հոռոմի շահերը պարտադրում էին նրանց աջակցել հայերին՝ վերջիններիս ազգային ինքնուրույնությունը պահպանելու գործում: Այդ էր պատճառը, որ ասորիները չզլացան ամեն կերպ ընդառաջելու հայ գրի ստեղծման գործին և Մեծ Հայքի եկեղեցիների ու դպրոցների ազգայնացման շուտափուլ թարեփոխմանը, իսկ Հոռոմը չհապաղեց պետականորեն լուծելու այդ խնդիրն իրեն ենթակա Փոքր Հայքում: Զրադաշտի և քրիստոնեությունում հեռատես և զգուշավոր գործունեություն շնորհիվ, իրադրությունը զարմանալիորեն բարերար էր դասավորվել երկիրը կիսված, պետականությունը մասամբ կորցրած, ազգովի կործանման եզրին հայտնված հայ ժողովրդի ճակատագրի համար: Նա կարողացավ ոչ միայն անարգել ստեղծել իր ազգային ինքնուրույն գիրն ու գրականությունը, այլև երկրում միակրոնություն և ժողովրդական միասնականություն հաստատել: Եւ այդ անխորտակ ուժով ազգը ոչ միայն փրկվեց ընդմիշտ վերացման վտանգից, այլև կարողացավ հիմնավորապես ապահովել իր գոյությունը և հարատև առաջընթացը:

Շարունակենք ծանոթանալ ասորաց Եղեսիա և Հունաց Սամոսատ քաղաքներում հանճարեղ գրաստեղծի հորինումներին:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Վերևում մենք այն կարծիքը հայտնեցինք, որ Մաշտոցը մինչ Ասորիք ուղևորվելը կազմել էր հայերենի իր աշխատանքային հունագիր այբուբենը և երկու տարի Դանիելի նշանագրերի անվան ներքո ուսուցանել էր: Գրաստեղծին մնում էր միայն վերջին ճշտումները կատարել և օտար հունարեն գրանշաններն ազգայնացնել, ուրույն գրապատկերներ կազմել և ապահովել գրերի գյուլընթեռնելիությունը: Լուծել լեզուն գրավոր արտահայտելու երկրորդ հիմանհարցը: Ուրեմն և այս նկատի ունենալով շարունակենք ծանոթանալ Մաշտոցի Եղեսիայում կատարած հորինումներին:

Կորյունը հայտնում է, որ Հայոց գրերի գյուլը տեղի է ունեցել ասորոց Եղեսիա քաղաքում: Իսկ թե Մաշտոցն ինչ է արել Եղեսիայում, ո՛ր մասով է ստեղծել իր հայերեն գրերը, գիմենք Մանուկ Աբեղյանի խոսքին. հարցին գիտնականը հետևյալ ընդարձակ պատասխանն է տվել. «Տեսնենք, թե ինչ է գրում Կորյունը:

1. ... Կորյունը պարպապես ասում է, թե Մաշտոցն իր աջ ձեռքով «**ծնեց նորոգ ծնունդներ՝ հայերենի նշանագրեր**», այսինքն՝ նոր նշանագրեր ստեղծեց, գրեց իր աջով: ... Մաշտոցը Դանիելյան գրերը մի կողմ է թողել և ուրիշ սխառեմով նոր տառեր է հորինել, քանի որ Մեսրոպյան տառերը ձախից դեպի աջ են գրվում:

2. «**Եւ անդ վաղվադակի նշանակել, անուանեալ և կարգեալ**»: Ուրեմն Մաշտոցն ինքը կարգավորել, այսինքն դասավորել է իր ստեղծած նոր նշանագրերը: Արդ, երբ մեր այբբենարանի մեջ տառերի կարգը համեմատում ենք հունականի ալփաբետի տառերի դասավորության հետ, երկուսի մեջ ևս նույն կարգն ենք գտնում, միայն հայերենին հատուկ ավելի հնչյունների համար տեղ-տեղ առանձին գրեր կան նույն շարքի մեջ:

Բացի այդ՝ հայերենի ՈՒ հնչյունի համար մեր այբբենարանի մեջ չկա հատուկ նշանագիր: Գրության մեջ այդ պարզ ձայնավորը Մաշտոցն արտահայտել է ՈՒ երկտառով՝ հետևողությամբ հունարենի ՕՍ երկտառի:

Վերոգրվածից պարզ է, որ Մաշտոցը հետևել է հունական ալփաբետին, որին ինքը վարժ է եղել մանկությունից: Դրա հետևանքով հայերեն տառերը գրվում են ձախից աջ և հատ-հատ:

3. Մաշտոցն ինքն անվանել է տառերը այբ, բեն, գիմ, դա և այլն...

4. Մաշտոցն ինքը նշանակել է տառերը: Դա վերաբերում է տառերի արտաքին ձևին, գծագրությանը: Բիչ վերևում նույնն արտահայտված է այս խոսքով թե նա «**իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ-հայերեն լեզվի նշանագրեր**». այսինքն՝ իր աջով գրեց նշանակեց: Մեր տառերի ձևերը ևս ըստ այսմ Մաշտոցինն են: Այդ ձևերը հետագայում շատ փոփոխություն են կրել. Մեսրոպյան տառերի ձևին մոտ կլինի, անշուշտ, հին երկաթագիրը:

5. Կորյունն այդ նշանագրերը սքանչելի բառով է բնորոշում: Դա վերաբերում է ոչ թե տառերի արտաքին ձևին, այլ արիաբետի կատարելությանը: Մաշտոցի ժամանակի այբբեններից և ոչ մեկը, և ոչ նույնիսկ հունարենը, բավական չէ հայոց լեզվի բոլոր հնչյունական հարստությունն արտահայտելու համար. Դանիելյան նշանագրերը նույնպես թերի էին դուրս եկել, մինչդեռ Մաշտոցի այբբենը կատարելապես հարմարեցված է հայերենի հնչյունական սխառեմին: Դրանով անհամեմատ ավելի հեշտացած է եղել հայերեն գրել-կարդալու գործը, որովհետև «**Մեսրոպյան նշանագրերը**» (այսպես անվանել է Մովսես Խորենացին) հիմնված են կատարյալ հնչյունական սկզբունքի վրա, որ է՝ ամեն հնչյուն իր առանձին տառը պիտի ունենա, և ամեն տառ մեկ հնչյունի արտահայտիչը պիտի լինի:

Մաշտոցի ալփաբետի այս կատարելությունը հետևանք է նրա հեղինակի՝ իր ժամանակի, նույնիսկ մեր ժամանակի համար վարմանալի խորին ծանոթության հայերենի հնչյունական դրությանը, մեր լեզվի բազմաթիվ հնչյունների նուրբ տարբերություններին...

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 114-117:

Մնաց 6-րդ կետը՝ «յօրինել սիդորայիւք եւ կապօք»:

«Հորինել սիդորաներով և կապերով»: Ինչ է նշանակում այս խոսքը:

...Այդ նշանակում է, որ Մաշտոցն առանձին նշանագրերի գործը վերջացնելուց հետո՝ անմիջապես նույն նշանագրերը հորինել է կապերով, վանկերով: Ուրիշ խոսքով՝ Մաշտոցը հորինել է կարդալ սովորեցնելու դասագիրք: Նա հայոց լեզվի առաջին ուսուցիչն էր և, բնականաբար, նա էլ առաջինը պիտի հորիներ առաջին այբբենարանը՝ իր նշանագրերը «կապելով» կարդալու, կամ «գիրկապ» կարդալու համար<sup>1</sup>:

Մաշտոցն ասորոց եգեսիա քաղաքում է ամբողջապես հորինել և վերջնականապես ավարտել Հայոց անթերի գրերը, պատկերավորել հնչյունները, իր ձեռքով է գծագրել տառանշանները, դասավորել և կազմել է գրերի շարքը: Սա այսուհետ անփոփոխ է: Այդուհանդերձ, մինչ այժմ ուսումնասիրված և պարզաբանված չէ մեսրոպաստեղծ գրերում ձայն-պատկեր, կամ հնչյուն-գրանշան միասնությունը, փոխադարձ կապակցվածությունը: Այլ խոսքով այն բացառիկ կարևոր ու պարտադիր գիտա-ստեղծագործական յուրովի աշխատանքը, որով ապահովվում է լեզուն գրավոր արտահայտելու երկրորդ հիմնահարցը՝ գրերի դյուրընթերցումը: Գրաստեղծը հայոց զարգացած բանավոր լեզվի բարդ հնչյունական համակարգը հայտնաբերելուց և ճշտելուց հետո միայն կարող էր նշանակել, պատկերավորել հնչյունները, սակայն ինչպե՞ս, ի՞նչ եղանակով և կամ որպիսի՞ ստուգումներ ու հաշվումներ պիտի կատարեր գրա համար, ի՞նչ եղանակով և կամ ի՞նչ ցուցանիշներ էին հարկավոր, որպեսզի իր գրերը թե՛ հնչյունների, և թե՛ պատկերների գծով անթերի դարձներ: Ահա այդ հարցն է՝ հնչյուն-պատկեր փոխկապակցությունը, որն առանձնակի կարևորություն ունի մեսրոպաստեղծ գրերի պատկերակազմություն սկզբունքներն ուսումնասիրելու համար, առանց որի հազիվ թե հնարավոր է կատարվածի իսկությունը ճանաչել: Այսու մեր առջև, ինչպես ի սկզբանե գրաստեղծի, ծառանում է մի չափազանց գործնական նշանակություն և բացառապես կիրառական բնույթի խնդիր լուծել, որն է հնչյունների ու նրանց տրված պատկերների քննությունը:

Հնչյուն-պատկեր կապակցությունում որևէ պայմանավորվածություն կամ նախամտածված համապատասխանեցում տեսնելու համար անհրաժեշտ է մի երրորդ տվյալ ևս ունենալ՝ դա գրավոր լեզվում հնչյունի մասնակցություն, ասել է թե՛ գրանշանի կիրառության աստիճանը գրում պարզելն է: Եւ որպիսի ճշտություն կորոշվի այն, նույնպիսին կլինի և հնչյուն-պատկեր հարաբերակցությունը: Գրավոր լեզվում յուրաքանչյուր գրանշանի գործածություն ստույգ որոշելու միջոցը, որքան էլ որ այն անհետաքրքիր ու ձանձրալի լինի, հարկադրում է խնդրի յուրաքանչյուր ուսումնասիրողի (ինչպես ի սկզբանե գրաստեղծին ու նրա

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Մեարոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 17-21:

օղնական-ընկերներին) մեկ առ մեկ, հազարավոր տառանշաններ պարունակող հնագույն ձեռագիր հուշարձաններում հաշվումներ կատարելով՝ պարզել յուրաքանչյուր տառանշանի կիրառության աստիճանը (անշուշտ, այդ հաշվումները նախապես կատարել են թարգմանություններում և գրի առնված այլ նյութերում): Հասկանալի է՝ որքան ծավալուն լինի ուսումնասիրվող նյութը և որքան բազմազան՝ նրանցում նկարագրվող բնագավառները (դավանաբանական, հայրենասիրական, բանահյուսական, շինարարական, պատերազմական, կենսագրական և այլն), այնքան և իրականին մոտ ու հավասարի կլինեն ստացված տվյալները: Այդօրինակ պարզ համրումներ կատարելու միջոցով միայն հնարավոր է ի հայտ բերել և ճանաչել՝ հնչյուն-կիրառություն-պատկեր միասնությունը: Հաշվումների համար ընտրված են հետևյալ գրավոր հուշարձանները:

1. ԿՈՐԻԻՆ, Վարք Մաշտոցի, Երևան, 1981: ՊԱՏՄՈՒԹԻԲՆ ՎԱՐՈՒՅ ԵՒ ՄԱՅՈՒՄՆ ԱՌՆ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՍՐԲՈՅՆ ՄԱՇՏՈՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆԶԻ Ի ԿՈՐԻՆՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ՅԱՇՎԱԿԵՐՏ ՆՈՐԻՆ Գլուխներ Գ-ԺԳ., էջեր 84-109, հաշ. 10000 տառանշան:
2. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմություն Հայոց, Երևան, 1983: ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ՊԱՏՄՈՒԹԻԲՆ ՅԱՅՈՅ ԴԱՐՁ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՅԻՍ ՅԱՅԱՍՏԱՆ ԸՆԴ ՁԵՌՆ ԱՌՆ ՍՐԲՈՅ ՆԱՅԱՍՏԱԿԻ Գլուխներ՝ ձԳ-ձԼ., էջեր 424-438, 10000 տառանշան:
3. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց Պատմություն, Երևան, 1981: ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻԲՆ ՅԱՅՈՅ ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹԻԲՆ ՅԱՅՈՅ ՄԵԾԱՅ ԳԼ Ա, Բ, Գ, էջեր 6-14 ՈՂԲՔ ՎԱՍԵ ԲԱՌԱԼՈՅ ԹԱԳԱԲՈՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՈՅ ՅԱՉԳԵՆ ԱՐՇԱԿՈՒԼԵԱՅ, ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՉԳԵ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԳԼ ԿԸ., էջեր 446-456:

ԳՐԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՔԱՅԻՆ ԱՂՅՈՒՄԱԿ<sup>1</sup>

Նշան	Կորյուն		Ազաթանգեղոս		Մովսես Խորենացի		Ընդմիջին	
	կիրառված է	%	կիրառված է	%	կիրառված է	%	կիրառված է	%
Ա	1883	18,83	1705	17,05	1702	17,02	1763	17,63
Բ	110	1,10	93	0,93	138	1,38	114	1,14
Գ	160	1,60	134	1,34	143	1,43	146	1,46
Դ	124	1,24	139	1,39	122	1,22	128	1,28
Ե	764	7,64	785	7,85	763	7,63	770	7,70
Զ	132	1,32	188	1,88	247	2,47	189	1,89
Է	150	1,50	123	1,23	128	1,28	134	1,34
Ը	23	0,23	34	0,34	31	0,31	29	0,29
Թ	142	1,42	121	1,21	167	1,67	143	1,43
Ժ	31	0,31	30	0,30	41	0,41	34	0,34
Ի	515	5,15	594	5,94	523	5,23	544	5,44
Լ	270	2,70	249	2,49	235	2,35	251	2,51
Խ	58	0,58	66	0,66	66	0,66	63	0,63
Ճ	82	0,82	80	0,80	54	0,54	72	0,72
Կ	262	2,62	275	2,75	208	2,08	248	2,48
Յ	166	1,66	136	1,36	131	1,31	144	1,44
Զ	40	0,40	70	0,70	37	0,37	49	0,49
Ղ	57	0,57	90	0,90	84	0,84	77	0,77
Ճ	18	0,18	18	0,18	19	0,19	18	0,18
Մ	266	2,66	281	2,81	327	3,27	291	2,91
Յ	292	2,92	272	2,72	326	3,26	297	2,97
Ն	1046	10,46	1049	10,49	808	8,08	968	9,68
Շ	72	0,72	64	0,64	53	0,53	63	0,63
Ո	689	6,89	633	6,33	760	7,60	694	6,94
Չ	40	0,40	61	0,61	65	0,65	55	0,55
Պ	103	1,03	87	0,87	111	1,11	100	1,00
Ջ	24	0,24	23	0,23	29	0,29	25	0,25
Ռ	94	0,94	85	0,85	94	0,94	91	0,91
Ս	382	3,82	411	4,11	432	4,32	408	4,08
Վ	94	0,94	80	0,80	112	1,12	95	0,95

<sup>1</sup> Հաշվառուները կատարված են յուրաքանչյուր պատմիչից գրանշանների 10000 կիրառություն պարունակող կյութերից:

Տ	229	2,29	258	2,58	236	2,36	241	2,41
Ր	616	6,16	655	6,55	526	5,26	599	5,99
Ց	252	2,52	221	2,21	345	3,45	273	2,73
ՈՒ	650	6,50	664	6,64	696	6,96	669	6,69
Փ	19	0,19	48	0,48	41	0,41	36	0,36
Ք	114	1,14	182	1,82	200	2,00	165	1,65
		10000		10000		10000		

Առանձին սյունյակներով ներկայացված են Կորյունի, Ազաթանգեղոսի և Մովսես Խորենացու պատմությունների էջերից կատարված հաշվառքային տվյալները, իսկ վերջին սյունյակում այդ բոլորի միջին ցուցանիշներն են տրված: Հասկանալի է, որ վերջինի տվյալներն առավել մոտ են իրականին, նախ՝ կիրառված գրանշանների քանակի, ապա և մատենագրական տարբեր բնագավառներ ընդգրկված լինելու պատճառով, թեև առանձին շեշտված տարբերություններ չեն նկատվում: Թե՛ առանձին, և թե՛ ընդհանուր հաշվառքներում դժվար չէ տեսնել, որ գրանշանների կիրառվածություն աստիճանները, նույնն է թե՛ լեզվում հնչյունների մասնակցությունը, խիստ տարբեր են, երբեմն նույնիսկ անհամեմատելի, անհամաչափ: Այդ անհամամասնությունն ակնառու դարձնելու համար զուգահեռաբար ներկայացնենք մի քանի բնորոշ, հաճախ և սակավ կիրառված, գրանշաններ իրենց ցուցանիշներով.

Ա-1763	Ն-968	Ե-770	Ո-694	Լ-669	Ր-599	Ի-544	Ս-408	Կ-248
Ե-18	Զ-25	Չ-49	Չ-55	Շ-63	Ճ-72	Փ-36	Խ-63	Պ-100=1% <sup>1</sup>


Այլևս բացահայտ է ոչ միայն գրանշանների անհամեմատելի անհավասար կիրառված լինելու հանգամանքը (տարբերությունն առաջին զույգի միջև 100 անգամ է կազմում), այլև ակնառու է գրանշանների նկարվածքային-գծագրական խիստ տարբերությունը: Այդ անհամամասնությունը, որ գյուրընթեռնելիության գլխավոր խոչընդոտն է, չէր կարող գործնականում աննկատ մնալ և կամ վրիպել գրաստեղծի ոչ աչքից, ոչ մտքից, մանավանդ, եթե նկատի ունենանք մեծատառերով գրելու սկզբնական ոճը: Անշուշտ, անհամաչափ կիրառություն էրևույթն իր ողջ

<sup>1</sup> Գրանշանների հիմնական է գծագրված (գրոտեսկ, առանց հույն գեղագրի միջամտության), համոզված ենք այն առավել մոտ է Մաշտոցի սկզբնապես հորինած գրածուկին: Գրանշանների պատկերներն ու համաչափությունները վերցրված են Եղվարդի սագաթեղեն-բազիլիկ (եռասագ-եռանավ) եկեղեցու հարավային պատին փորագրված 7-րդ դարի միատող արձանագրությունից (մանրամասը կանդրադառանք իր տեղում):

խորությամբ և հարուցող դժվարություններով պետք է, որ ի հայտ գար, երբ գրաստեղծը գրանշանների ազգայնացում էր կատարում, իր ուրույն գրապատկերներն էր կազմում: Մաշտոցը պետք է լուծեր այդ դժվարին խնդիրը, ինչ-որ միջոցով, եթե իսպառ չվերացներ, գոնե մեղմացներ այդ անհավասարությունը, այլապես չէին կարող սակավ կիրառվող գրանշանները հավասարաստիճան ընկալվեն հաճախ կիրառվող գրանշանների շարքում: Այլ խոսքով՝ յուրաքանչյուր հնչյունի կիրառության համապատասխան, Մաշտոցը պետք է լուծեր պատկերի դժվարին, բայց և գործնական կարևորության խնդիրը:

Համեմատելով բերված, հաճախ և սակավ կիրառված գրանշանների երկու շարքերում տեղ գտած գրանշանների պատկերներն ու ձևերը, դժվար չէ նկատել, որ հանճարեղ գրաստեղծն այդ արտակարգ կարևոր խնդիրը լուծել է մեծ իմացությամբ և յուրահատուկ մոտեցմամբ, գրապատկերներում համապատասխանաբար կիրառելով և՛ ակտիվ ու պասիվ, և՛ նկարվածքների հակադրության հնարամիտ միջոցները: Երևի թե մեկ այլ ճանապարհ չկար այդ անհամաչափությունը հարթելու և գրանշանները հավասարապես արտահայտելու, քան՝ պատկերների տարբերակման այդ նրբին միջոցն էր: Երբ այս նպատակով գննում ենք գրանշանների կիրառվածությունը ներկայացված հաշվարկային ցուցանիշները և այն համեմատում հնչյուններին տված Մաշտոցի պատկերների հետ, դժվար չէ նկատել և համոզվել, թե որքան սակավ է կիրառված հնչյունը, նույնքան և ակնառու է նրա պատկերը-գրանշանը, այն կա՛մ չափերով է մեծ, կա՛մ նկարվածքն է հակադիր ընդհանուրին, օրինակ  $\mathcal{Q}_{49}$   $\mathcal{Q}_{55}$   $\mathcal{T}_{63}$   $\mathcal{U}_{72}$  սակավ կիրառված գրանշանները չափերով գերլայն են, նկարվածքի հիմքը բոլորակն է, որի հետևանքով գրանշանները շեշտված կերպով առանձնանում են գրերի շարքում (այդ նույն հիմնանկարն ունեն  $\mathcal{Q}_{159}$   $\mathcal{S}_{273}$  գրանշանները, որոնց կիրառությունը միջինից ցածր է): Իսկ ամենասակավ կիրառված  $\mathcal{D}_{18}$   $\mathcal{R}_{25}$  գրանշաններն առանձնանում են նկարվածքի կտրուկ հակադրության շնորհիվ, ի տարբերություն ընդհանուրի՝ այդ գրանշանները կազմված են գծերի սուրանկյուն հատումներով. նույնպիսի կազմություն ունեն նաև  $\mathcal{L}_{134}$   $\mathcal{L}_{251}$  գրանշանները, միայն այստեղ գծերն ուղղանկյուն հատումներ ունեն: Հաջորդ, սակավ կիրառված  $\mathcal{F}_{36}$   $\mathcal{H}_{63}$   $\mathcal{M}_{100} = 1\%$  գրանշաններն, առանձնանում են եռաբաժանում նկարվածքով. Այդ նույն խմբին են պատկանում նաև, դարձյալ միջին կիրառությունից ցածր,  $\mathcal{P}_{143}$   $\mathcal{U}_{241}$  գրանշանները: Նկատենք, թե ինչպիսի հնչյուններ, որպիսի պատկերներ ունեն: Այլևս ակնհայտ է, որ հնչյունի պատկերի չափերն ու ձևերը հակադարձ համեմատական են կիրառության աստիճանին, գործածության չափին, որքան սակավ է կիրառվում հնչյունը լեզվում, նույնքան նրա պատկեր-գրանշանը առանձնացված է գրերի շարքում, այն ակնառու է և՛ չափերով, և՛ նկարվածքով: ՀՆԶՅՈՒՆԻ ՀԱԾԱ-


ԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԴԱՐՁ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ Է ՊԱՏԿԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆԸ: Այդ է վկայում նաև սակավ կիրառվող գրանշանների մշտապես նույն, համաժամանակյա համաչափություններով նկարվել-գծագրվելու իրողությունը, անկախ գրերի շարքին տրված համաչափությունների՝ գրանշանների լայնության և բարձրության հարաբերություններից, բոլոր պարագաներում այդ գրանշանները գծագրվում-նկարվում են միայն մեկ անփոփոխ համաչափությամբ: Այլ կերպ լինել չէր կարող, որովհետև հակառակ պարագայում, երբ այդ գրանշաններն ընդունեին նկարվածքային տարբեր համաչափություններ՝ կիմաստազրկվեր հնչյունների կիրառվածությունը պայմանավորված պատկերների տարբերակման համաժամանակյա կենսական լինելը: Մեր այս դիտարկումը ցայտուն կերպով արտահայտված է Հայ վիմագրության հազարամյա բազմաթիվ հուշարձաններում, ուր անկախ արձանագրության տեղի, ծավալի և այլ խոչընդոտող պայմանների՝ գրերին տրված ամենատարբեր համաչափությունների պայմաններում բերված սակավ կիրառվող գրանշանները միշտ նկարված-գծագրված են միևնույն հաստատուն համաչափությունում և ողջ արձանագրության գորգում (չնայած այդ գրանշանների չափազանց սակավ կիրառված լինելուն). նրանք ակնբախ են իրենց կա՛մ մեծ չափերով, կա՛մ հակադիր նկարվածքով: Այս տեսակետից ուշադրավ է մեկ այլ երևույթ ևս. Սակավ կիրառվող հնչյուններին համահնչյուն հնչեղական նմանություն ունեցող որոշ գրերի պատկերներ զարմանալիորեն նման են միմյանց, նույնպիսի գերլայն չափեր ունեն, և նկարվում, գծագրվում են դարձյալ հաստատուն համաչափություններով և, որ առավել հատկանշական է ու գրավիչ, նույնանկար են՝ միայն թե դիրքափոխված, օրինակ՝  $\mathcal{D}\mathcal{D}\mathcal{X}\mathcal{D}\mathcal{X}\mathcal{D}\mathcal{S}(\mathcal{S})$  գրանշանների զույգերը (վերջին զույգում մասնակի շեղումն աջնից գրության հետևանք է. սկզբնակետն է աջից տեղափոխվել ձախ): Մենք ևս ձեռնարկեցինք գրապատկերների դիրքափոխումներ կատարել և պարզվեց (գծ 1), որ առաջին երկու պատկերազույգերը դիրքափոխված են ուղղահայաց ուղղությունով, պատկերները  $180^\circ$  շրջված են վեր կամ վար, իսկ երրորդ զույգը դիրքափոխված է կրկնակի անգամ և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական ուղղություններով, որի հետևանքով առաջացել են 4 դիրքափոխ պատկերներ (այդ է առավելագույն թիվը, երբ չի փոխվում գրանշանի ասել է թե տողի բարձրությունը):



գծագիր 1

Մյուս բոլոր դեպքերում դիրքափոխումները կլինեն կամայական և անիմաստ, որոնցից՝ անկունագծային ուղղությամբ (1

և 4 քառորդներ, գծագրությունը թավ է) երկու պատկերները մեզ հետաքրքրող հայերեն գրանշաններն են, իսկ 2 և 3 քառորդների դարձյալ անկյունագծային երկու պատկերները իսկ և իսկ վրացերեն լեզվի գրեր են: Գրապատկերների դիրքափոխ գույգեր լինելու այս երևույթը հարկադրեց մեզ նույնպես գննել գրերի շարքը, պարզելու համար, թե կա՞ն արդյոք նրանում այլ դիրքափոխված պատկերազույգեր կազմող գրանշաններ: Պարզվեց, որ շարքի 8 գրապատկերներ նույնպես դիրքափոխ են և 4 դիրքափոխ գույգեր են կազմվում, դրանք են ԲԵ X ԳԺ X ՈՍ X ՂՆ գրանշանները:



գծագիր 2

Այստեղ ևս (գծագիր 2) առաջին երեք պատկերազույգերը դիրքափոխված են վերուվար և կամ հակառակ ուղղությամբ (նկատեք, որ այդ և V-գույգպատկերների 3 և 4 քառորդներ դարձված ԳԺ X ԲԵ X ԲԵ X ՂՆ դիրքափոխ պատկերները չեն համապատասխանում գրություն աջընթաց ուղղությամբ, ինչպես չորրորդ գույգի 3 քառորդի պատկերն է, որի համար և այն ծածկված է գծերով): Երևույթը դիտարկելով որպես գրաստեղծի պատկերաստեղծման սկզբունք, որպես միամտածողություն անժխտելի արտահայտություն մանրամասն կներկայացնենք մեսրոպաստեղծ հայոց, վրաց և աղվանից գրերի պատկերների համատեղ քննության ընթացքում:

Ամփոփենք կատարվածը. Եղեսիայում Մաշտոցը վերջնականապես ստուգել, փորձարկել է նախ իր գրերի հնչյունական համակարգի անթերիությունը, ապա՝ պատկերավորել է հնչյունները, կազմել՝ գրանշանները: Գրի այդ երկու հիմնական կողմերի ստուգման համար պահանջվում էր ծավալուն գրառումներ և թարգմանություններ կատարել և այդ միջոցով գործնականում փորձարկելով՝ կատարյալ դարձնել գրերը: Ահա այդ վերջին պատասխանատու, ստուգողական թարգմանությունները և նրանցում գրանշանների կիրառվածության մեկ առ մեկ հաշվումները Մաշտոցը կատարել է իր «իւրովք հաւասարօք» ընկերների օգնությամբ, որոնք, ինչպես գիտենք, Դանիելի նշանագրերի գործադրության անվան ներքո աշակերտել էին Մաշտոցին և սովորել գործադրել, գիտեին նրա և՛ առաջին հունագիր աշխատանքային այբուբենը, և՛ Եղեսիայում ստեղծած հայերենի այբուբենները: Մաշտոցի օգնական-ընկերները կատարել են այն, ինչը մենք ներկայացրինք աղյուսակներով: Անշուշտ դա անհրա-

պույր, տքնալից մի աշխատանք էր: Սակայն դա էր պահանջում գործի ընույթը, հրատապությունը և այն շրջանցվող չէր: Մաշտոցն ասորաց Եղեսիա քաղաքում է հորինել Հայոց ազգային ինքնուրույն գրերը, փորձարկել և անթերի դարձրել հետևյալ մասերով.

1. Վերջնականապես որոշել, ճշտել ու նշանակել է Հայոց զարգացած բանավոր լեզվի հնչյունական համակարգը, դարերի ընթացքում մշակված լեզվական օրենքներն ու կանոնները, գրերի վերջնական թիվը:

2. Ազգայնացրել է իր աշխատանքային՝ հունարեն լեզվի գրերի հիման վրա կազմած այբուբենը, մեկ հնչյուն-մեկ պատկեր սկզբունքով կազմել է գրանշանները, անվանել, կարգել, դասավորել է գրերի շարքը:

3. Գրանշանները կազմել է՝ հնչյուն-հաճախականություն-պատկեր միասնությունում, պատկերների նկարվածքային զանազանություններով ապահովել է հաճախ և սակավ կիրառվող գրանշանների հավասարաստիճան արտահայտումը, գրի դյուրընթեռնումը:

4. Գրանշանների կիրառվածության հաշվումները կատարել է իր ավագ աշակերտ-ընկերների օգնությամբ, որոնք գիտեին հունարեն և կամ ասորերեն լեզուները, և այդ հաշվարկային տվյալների համապատասխան կազմել է գրանշանների չափերն ու ձևերը:

5. Գրանշաններ գոյացնելու սկզբունք է ընդունել պատկերների դիրքափոխումները՝ դարձում-շրջումները, որով և պայմանավորվել է գրերի միաճությունը, այբուբենի ուրույն կերպարը:

6. Գրանշանների պատկերային խմբերի հիմնական կար է ընդունել հունական այբուբենի մի քանի գրեր, և հենց այդ պատճառով Մաշտոցն իր նորակազմ հայերեն գրերը տարել է հունաց Սամոսատ քաղաք՝ հելլենական դպրության գրիչ Հոսոփանոսի օգնությամբ գեղագրելու, հարգական դպրության գրիչ Հոսոփանոսի օգնությամբ գեղագրելու, հարգաբերելու: Եւ հենց այդ հարցին է վերաբերելու մեր հետագա քննությունը:

ՅԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳԵՂԱԳՐՈՒՄԸ

Այժմ անդրադառնանք կորյունից բերված վկայության երկրորդ մասին և փորձենք պարզել, թե Մեսրոպ Մաշտոցը հունաց Սամոսատ քաղաքում «հելլենական դպրութեան» գրիչ Հոսոփանոսի օգնությամբ իր նորաստեղծ հայոց գրերի որպիսի գեղագրական մշակումներ է կատարել: Վարքագիրը հայտնում է, որ Սամոսատում ամբողջապես հորինվել և միանգամայն ավարտվել են գրանշանների բոլոր զանազանությունները. «վնրբագոյնն եւ վրայնագոյնն, վկարճն եւ վերկայնն, վառանձինն եւ վրկանաւորն» («բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը»):

Դա նշանակում է, որ Մաշտոցը հունյն գրագրի օգնությամբ իր գրերի գեղագրության, նկարել-գծագրելու երեք կարգ աշխատանք է կա-

տարել: Կորյուների այդ վկայությունն ուսումնասիրողները տարբեր մեկնաբանություններ են տվել: Մերժելով վկայության ձայնաբանական մատնանշումն ընդունող գիտնականներին, բերենք այդ մասին Մանուկ Աբեղյանի ընդարձակ բացատրությունը.

1. «Մաշտոցն այն հույն գրագրի օգնությամբ վերջապես հորինել է «կրթագույնն ու լայնագույնը», նշանագրերի նուրբ ու լայն, բարակ ու հաստ մասերը, կողմերը, այսինքն՝ թե տառերի ո՞ր կողմերը, ո՞ր մասերը հաստ կամ բարակ պիտի լինեին, որպեսզի և՛ գեղեցիկ, և՛ հարմար լինեին գրելու:

2. Մեսրոպյան նշանագրերի մեջ, դատելով մեր հին երկաթագրից, չկան «կարճ ու երկայն նշանագրեր». բոլորն էլ միահավասար են: Բայց առանձին նշանագրերի մեջ կան ինչպես հաստ ու բարակ, նույնպես և կարճ ու երկայն մասեր: Ուստի Կորյուների գրածը, թե Մաշտոցը հույն գրագրի ձեռքով հորինել է կարճն ու երկայնը, չի կարելի հասկանալ «կարճ ու երկայն նշանագրեր»: Բոլորովին անհիմն և անընդունելի է այն կարծիքը, թե «կարճ ու երկայն նշանագրերով պետք է իմանանք անշուշտ ձայնավոր նշանագրերը» (Մարկվարտ), այն էլ «անշուշտ» բառով ասված: Ի՞նչ հիման վրա: Ոչ մի առանձին գործ չէր կարող ունենալ մի հույն գրագիր հայերենի «կարճ ու երկայն ձայնավորների» նկատմամբ ... Հույն գրագիրը այն խորհուրդը միայն կարող էր տալ, թե առանձին նշանագրերի կարճ ու երկայն մասերը գեղագրական տեսակետով ինչպե՞ս պիտի դասավորվեն տառերի բուն մասի վերաբերմամբ, կարճ մասը երկայն մասի աջ, թե՞ ձախ կողմում, վերևում, թե՞ ներքևում:

3. Մաշտոցը հույն գրագրի օգնությամբ հորինել վերջացրել է «պառանձինն և վերկնաւորն» (վար. «վերկնայարն»): ...

Ի՞նչ է արտահայտված այդ «առանձին» և «կրկնաւոր» կամ «կրկնայար» բառերով. շատ պարզ բան: Մեսրոպյան նշանագրության բոլոր 36 տառերն էլ առանձին են, այսինքն՝ ջոկ, մենակ, դատ-դատ են, իրենց հատուկ մեկ առանձին հնչյունով, մեկ տառ մեկ հնչյունի արտահայտություն, կամ մեկ առանձին հնչյուն՝ մեկ առանձին տառով արտահայտված: Բայց կա նաև ՈՒ հնչյունը, որ չունի իր առանձին նշանագիրը. դա արտահայտված է երկու տառի միացումով: Դա, այդ կրկնատառը, «կրկնաւոր» է, կամ «կրկնայար» (ինչպես կա իբրև վարիանտ), այսինքն՝ երկու տառի «յարում», կցում, միացում»<sup>1</sup>:

Մեծանուն հայագետ Հր. Աճառյանն ընդունելով Մանուկ Աբեղյանի առաջին երկու կարգ. «պարագոյնն և վրայնագոյնն» ու «վկարան և վերկայնն» գեղամշակման աշխատանքներում ինչ կատարված լինելու բացատրությունները, առարկում է երրորդի՝ «պառանձինն և վերկնաւորն» ասվածի ներքո կատարվածի բացատրության դեմ, գրելով, որ. «Աբեղ-

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության «սկիզբը», Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 33-35:

յանը, որ իր հողվածում ցույց է տալիս Մարկվարտի սխալները և շատ ճիշտ բացատրում է նախորդ չորս բառերի իմաստը, այստեղ Կորյունի առանձին բառով հասկանում է հայերենի ջոկ, մենակ մի տառով գրված հնչյունները, իսկ կրկնաւոր բառով հասկանում է երկու տառով կապված ՈՒ հնչյունը, որի հորինումը վերագրում է Հռոփանոսին:

Ես չեմ ընդունում գեղագիր Հռոփանոսի մասնակցությունը ՈՒ ձայնավորի հորինման մեջ: ...

Կա նաև այն կետը, որ դժվար թե Կորյունը մի միակ ՈՒ-ի համար առանձին բաժանմունք ստեղծեր (կրկնաւոր) և մնացյալ բոլոր տառերը անվաներ առանձին:

Պետք է ասել նաև, որ եթե մյուս չորս բառերը տառերի գծագրական ձևերն են մատնանշում, ինչն այս երկուսն էլ՝ առանձին-և ու կրկնաւոր-ը նույն չափի լինեն և ձայնաբանական երևույթներ պիտի նշանակեն: Ես կարծում եմ, որ կրկնաւոր բառի սովորական ու տարածված իմաստը կատեցրել է մեր միտքը և առաջնորդել է մեզ սխալ մտածողության: Բայց եթե աչքի առաջ բերենք կրկնել բառի հնագույն հայերեն նշանակությունը, որ է «ծալել, ոլորել» (տես «Նոր Հայկապետան բառգիրք», Ա, էջ 1136, սյունակ բ), որից և ծուկը կրկնել «ծունկ ծալել», այն ժամանակ իհարկե կմտածեիք, որ նաև այստեղ կրկնաւոր նշանակում է «ծալած, ոլորած»: Կրկնաւոր (կամ կրկնայար) բառով Կորյունը հասկանում է կլոր փայտյալներ ունեցող տառերը, ինչպես Ժ Թ Ծ Զ Զ և այլն, իսկ առանձին բառով ուլում է հասկացնել Ո, Ս, Լ, Բ. և այլն ձևի տառերը, որոնք ուղիղ, շիտակ, անջատ ու մենակ կանգնած են:

Հռոփանոսի մասնակցությունը հայերեն տառերի հորինման մեջ, առհասարակ, պետք է դուրս գցել ծրագրից: ... Ուրեմն և Հռոփանոսը մի գործիք է, մի միջոց, որով Մեսրոպը «յորինել» և «յանկուցել» է իր տառերը, այսինքն՝ այն տառերը, որ արդեն Եղեհիայում, նախքան Սամոսատ գալը և Հռոփանոսին գտնելը, «ծնել էր» և «նշանակել, անվանել և կարգել ու հորինել սիրորաներով և կապերով»:

Սրանից ավելի պարզ և մեկին բացատրություն կամ վկայություն, որ իսպառ ջնջում է ամեն մի կասկած ու տարակույս, չի կարող լինել»<sup>1</sup>:

Ճշմարիտ է, որ «պարագոյնն և վրայնագոյնն» հիշվածը վերաբերում է տառակազմ գծերի լայնությունից հափերի ընտրությունը՝ նուրբ և լայն, այսինքն՝ բարակ և հաստ գծերի որոշմանը, թե տառապատկերի ո՞ր գծերը պիտի բարակ (լուսավոր) լինեն և որ գծերը՝ հաստ (թավ), իսկ «վկարան և վերկայնն» ասվածը նույնությամբ վերաբերում է գծերի երկայնությունը, թե որ գիծը կարճ և որն երկար պիտի լինի: Անառարկելի է, որ Սամոսատում հույն գեղագիր Հռոփանոսի օգնությամբ Մաշտոցն իր նորակազմ գրերի երեք կարգ գեղագրական մշակումներ է կատարել. Առաջին երկուսն իսկապես որ պատկերակազմ գծերի հաստություն և երկարություն

<sup>1</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 121-123:

չափերի կայունացումն է եղել, իսկ թե ինչ է կատարել երրորդ կարգ գեղագրությունը. «ստանանինն եւ վրկնատրն» և կամ «վրկնայարն» ասվածի ներքո, որ կա իբրև տարբերություն, կարծում ենք, որ առանձին քննություն կարիք ունի, գեուես հավաստի կերպով պարզված է: Ի հարգանս ճշմարտության համարձակվում ենք այդ հարցում առարկել մեր երկու նշանավոր հայագետներին, որ «վրկնատրն» և տարբերակ «վրկնայարն» հիշվածի ներքո կատարվածի նրանց վերը բերված բացատրությունները համոզիչ չեն, և չեն պարզաբանում իրականում իսկապես կատարվածը: Հարկ ենք համարում հիշեցնել, որ Սամոսատում Մաշտոցի համատեղ ձեռնարկած գեղագրական մշակումների հիմնական խնդիրը, որքան էլ որ վարքագիրն առաջին է հիշատակում, ոչ թե տառակազմ գծերի չափերի որոշումն էր, այլ՝ տառապատկերների և ամբողջ այբուբենի գեղամշակումն էր, նրա միասնական, համաչափված ներդաշնակ նկարվածքի ստեղծումը, որի կատարումով միայն կարող էր ավարտված համարվել նորակազմ գրապատկերների գեղագրումն ընդհանրապես: Սա էր այդ գեղագրման հիմնական ու գլխավոր նպատակը և այս մոտեցմամբ պետք է քննության առնել այդ վերջին խնդիրը: Իսկ դա պարզել՝ նշանակում է վեր հանել գրաստեղծի տառապատկերներ կազմելու սկզբունքները: Հետևաբար, գեղագրման այդ երրորդ փուլում կատարված նկարվածքային մշակումները հնարավոր է պարզել միայն գրապատկերների համատեղ քննության մեջ: Սա է կատարվածը ճանաչելու և անսխալ գնահատելու անսայթաք ճանապարհը:

Մ. Արեղյանը մեսրոպաստեղծ բոլոր 36 տառանշանները համարում է «առանանին», Ու պարզ ձայնավորի երկտառով արտահայտված լինելը «կրկնատր» կամ «կրկնայար» այն դեռում է 36 տառանշաններից դուրս, ուստի և գեղագրման պահանջ է առաջացնում: Նախ ասենք, որ Ու երկտառը չէր կարող նոր գեղագրման խնդիր հարուցել, չէր կարող Ո և Ի տառանշաններն «առանանին» 36-ի մեջ արդեն գեղագրված լինելու պարզ պատճառով, ապա «կրկնատր» և կամ «կրկնայար» ասվածն ինչպես վկայվում է՝ նշանակում է երկու տառանշանի «յարում, կցում, միացում», իսկ Ու երկտառն այդպիսին չէ, այդ գրանշանները կցված և կամ միացված չեն, այլ առանձին են, ջոկ-ջոկ, ինչպես մյուս բոլոր գրանշանները: Առիթն ստիպում է հիշեցնել, որ 5-րդ դարի գրելաձևում տառերը շարվում էին կողք-կողքի առանց բառանջատումների և հարևանության բազմաթիվ տարբերակներով և այդ դրությունը բնավ գրանշանների «յարում, կցում, միացում» չէր: Մաշտոցի բոլոր տառանշաններն «առանանին» են: Իսկ թե այդ տառանշանները ինչ դասավորություն ունեն, և այդ ինչ հնչյուն էր արտահայտել, ու (թեև այդ երկտառ արտահայտություն միջոցը Մաշտոցն ընդօրինակել էր գեղագրողի մայրենի լեզվի գրելաձևից), այդուհանդերձ այն գրաստեղծի մտքի գործն էր և ոչ գեղագրողի

ձեռքի: Ուրեմն, վարքագրի «կրկնատր», «կրկնայար» հիշվածը չի վերաբերում հնչյունը երկտառով արտահայտելու միջոցին և կազմությունը: Այն որևէ առնչություն չունի տառանշանների գեղագրման հետ, և այդ բացատրությամբ չի պարզվում վարքագրի «կրկնատր» և կամ «կրկնայար» բառերի ներքո կատարված գեղագրական աշխատանքը:

Հր. Աճառյանն իրավացի է, երբ պահանջում է «կրկնատր» և «կրկնայար» ասվածի ներքո «գեղագրական և ոչ ձայնաբանական մատնանշում» հասկանալ: Անշուշտ, աչքի առաջ ունենալով նախորդ «նրբագույնն ու լայնագույնն», ինչպես նաև «կարճն և երկայնը» բառերի ներքո կատարված իսկապես տառագծերին վերաբերող գեղամշակումները, երևի թե հենց գրանով կաշկանդված, գիտնականը, ցավոք, շեղում է իր քննությունն ու, ի վերջո, հանգեցնում այն դարձյալ գծի գեղագրման և ոչ պատկերի (այս անգամ ոչ թե գծերի չափերի այլ ձևի արտահայտության, որը կարող է գծի մշակման մի երրորդ «կլոր փաթույթներով» անուն կրել, որը կարող է գծի մշակման մի երրորդ «կլոր փաթույթներով» անուն կրել, որը կարող է երբեք տառապատկերի): Համոզված ենք, որ եթե մեծանուն հայագետը «ծալել ոլորել», ինչպես նաև «բարդել», «եղբորդել» և «եկտակել» բառերի ստուգաբանությունը տաներ պատկերի իմաստով, այլ ոչ թե գիծը նկատի ունենալով, անկասկած, պիտի բացահայտեր «կրկնատր», «կրկնայար» ասվածի ներքո իր իսկ պահանջած «գեղագրական մշակումը»՝ գեղագրման աշխատանքներ կատարված լինելը: Պարզենք մեր միտքը. եթե մի «առանանին» պարզ պատկեր, և ոչ թե գիծ «ծալել», դարձնել, շրջել իր որևէ կողի վրա (պահպանելով պատկերի-տողի բարձրությունը), ապա այն «կլորվի» 180° և տեղի կունենա երկու նույնանկար պատկերների «կրկնատրում», երկու դիրքափոխ պատկերների և ոչ գծերի «յարում», «կցում, միացում» և առաջ կգա մի նոր ավելի լայնանկար ու համաչափ պատկեր, որն, ինչ խոսք, հատուկ գեղագրելու կարիք կունենա, քան «առանանին» պարզ պատկերը: Ահա այս եղանակով ստացված պատկերների մասին է վարքագրի խոսքը, այդ ծանրացած նկարվածքով պատկերներն է անվանել «վրկնատրն», «վրկնայարն»: Եւ, իրոք որ, այդ պատկերներն այդպիսի կրկնումների և կամ միացումների արդյունք են: Այդօրինակ պատկերների գոյացումը, ինչպես պիտի տեսնենք ստորև, գրանշաններ կազմելու երկրորդ սկզբունքն է եղել (առաջինը պատկերների դիրքափոխումն էր), որով և ապահովվել է գրապատկերների միտոճ նկարվածքը: Հարցին հանգամանորեն կանդրադառնանք նույնպես մեսրոպաստեղծ գրերի պատկերների քննությամբ:

Կատարվածն ակնառու դարձնելու և, իհարկե, ասվածը հավաստելու համար առայժմ բավարարվենք միայն մեկ օրինակ բերելով. ահա մի «առանանին» պարզ պատկեր Ռ, այն հունարեն լեզվի ո ս գրանշանի բաց պատկերն է ԲԲԲԲ, այն 180° դիրքափոխենք, շրջենք, դարձնենք, ծալենք, «ոլորենք» ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով, գծագրական

եզրով ասած պրոյեկտենք չորս վանդակներում (զծ. 3, համարակալումը պայմանական է): Բոլոր այլ դեպքերում պատկերազարժուումները կամայական կլինեն և անընդունելի: Դիրքափոխման այս եղանակը պարզությամբ և հստակ Մաշտոցի գործի հաջողության գրավականն էր: Ինչպես արդեն ասել ենք սա գրաստեղծի պատկերներ գոյացնելու առաջին և հնարամիտ սկզբունքն է, որի ժամանակ պատկերները նկարվածքի և չափերի փոփոխություն չեն կրում, հետևապես և լրացուցիչ գեղամշակումների խնդիր չի առաջանում: Մայր պատկերի դիրքափոխումներից առաջացան ևս երեք պատկեր, և դա առավելագույն թիվն է  $R_1, S_2, T_3, U_4$ : Ստացված պատկերները հարմար են աջընթաց գրություն համար: Այստեղ անհրաժեշտ էնք համարում հատկապես նշել, որ հունարեն լեզվի մայր պատկերն իր նկարվածքով, հնչումով և կարգով Մաշտոցը մուծել է իր ստեղծած առաջին հայոց գրերի այբուբենի շարքը:


Գրաստեղծի տառանշաններ կազմելու երկրորդ կարևոր սկզբունքն է եղել դիրքափոխված «առանձին»-պարզ պատկերների կրկնափոխումը՝ «յարում», «ոլորում» «կցում, միացում» կատարելը: Մաշտոցը այդ միջոցով, հենց այս նույն դիրքափոխ պատկերներով նոր, ավելի ծանրացած նկարվածքով տառանշաններ է կազմել: Այսպես օրինակ  $J_4$  պատկերին կցել, միացրել է  $R_1$  պատկերը և առաջացել է  $J+R=JR=\int$  կրկնապատկերը, որը հայերենի տառանշան է: Եւ կամ նույն  $J_4$  պատկերին հարել է  $S_2$  պատկերը և առաջ է բերել  $J+S=JS=\int$  համաչափ նկարվածքով կրկնապատկերը, այս էլ աղվաներենի տառանշան է: Այս վերջին կրկնապատկերը կարող էր գոյանալ, եթե այդ պատկերներից որևէ մեկը տողի բարձրությունը զբաղեցնող իր հիմնական ստեղծի շուրջ  $180^\circ$  դարձվեր. «ոլորել», շրջել ծալել  $J_1=\int$ : Ավելին, այդ նույնը կատարելով հունարենի նույն տառանշանի փակ նկարվածքով պատկերի հետ, ևս առաջ կգա համաչափ նկարվածքով մի կրկնապատկեր  $\text{P}-\text{P}$ , որը Հռոփանոս գեղագրի ձեռքով կղառնար հայերենի  $\Phi$  տառանշանը: Ահա հենց այս օրինակներն էլ «առանձին» պատկերների, և ոչ թե գծերի «ոլորել ծալել» կնշանակի, որի հետևանքով և գոյացան «կրկնալոր» և «կրկնայար» հիշված տառանշանները: Նկատենք, որ բերված օրինակներում պատկերներն երկստեղծն բաժանում ունենին և նույնանկար էին, միայն դիրքափոխված և կցում-ոլորումների ժամանակ պատկերների հիմնական ստեղծների համատեղում, միացում կատարվեց և առաջացան եռաբաժանումներով լայնանկար կրկնապատկերներ: Իսկ, եթե կրկնափոխվեն տարբեր նկարվածքներով պատկերներ, և մանավանդ, եթե «կրկնալոր» ասվածի ներքո ոչ միայն կցում, միացում, ծալում հասկանանք այլև՝ բարդում, ապա այդ դեպքում կրկնապատկերներն ավելի ծանրացած նկարվածք կունենան, հետևապես և գեղագրման կարիք: Օրինակ լայնանկար Ո պատկերին բարդելով նեղնկար  $\text{P}$  պատկերն առաջ կգա  $\text{P}+\text{P}=\text{P}$  կրկնապատ-

կերը, որը հայերենի տառանշան է և, իսկապես որ հատուկ գեղագրման կարիք ունի, քան «առանձին» որևէ տառապատկեր: Ահա այս հնարամիտ եղանակով, երբ պահպանվում է գրապատկերների նկարվածքային միատնությունը, գրաստեղծի կազմած լայնանկար տառապատկերներն է վարքագրին անվանել «կրկնալոր» և «կրկնայար», իսկ այդպիսիք հայոց գրերի շարքում՝ Մ, Փ, Թ, Խ, Պ տառանշաններն են: Վերոբերյալից հետևում է, որ «կրկնալոր» և «կրկնայար» հիշված տառապատկերները պետք է փնտրել մեսրոպաստեղծ հայերենի 36 տառանշանների մեջ և ոչ թե նրանից դուրս, այն բնավ երկտառ արտահայտություն չի նշանակում և ոչ էլ ձայնաբանական մատնանշում է, ինչպես պնդում է ակադ. Գ. Սևակը:

Այդ 36 գրերի մեջ այն տառանշաններն են, որոնց պատկերները գոյացել են երկու նույնանկար և կամ տարբեր նկարվածքներով պարզ-«առանձին» պատկերների միացումով և առաջ բերել եռաբաժանում նկարվածք, լայնանկար պատկեր: Ուրեմն Հայոց գրերի շարքի 31 տառանշաններ են «առանձին» պատկերների նկարվածքի պարզության և ոչ թե մեկ հնչյուն, մեկ պատկեր արտահայտության շնորհիվ: Այդ գրանշաններն են.

$$\text{ԱՐԳԴԵԶԷԸ} \times \text{ԺԻԼ} \times \text{ԾԿԶԶԴՆԱՄՅԵՇՈՁ} \times \text{ՋՌՄՎ} \times \text{ԲՅԻ} \times \text{Ք},$$

իսկ վերը բերված 5 տառանշանները «կրկնալոր» և «կրկնայար» են պատկերների, և ոչ թե գծերի «ոլորված, ծալված» լինելու շնորհիվ: Արդ՝ ակներև է պատկերների դիրքափոխման և այդ նույն դիրքափոխված պատկերների միացման խորիմաստ երևույթը, որ հանճարեղ գրաստեղծի տառանշաններ հորինելու ուրույն սկզբունքն է եղել: Արդարև ինչպես ցույց տվեց միայն մեկ ՐՔ հիմնանկարի օրինակը, պատկերների դիրքափոխման, ապա և նրանց կրկնափոխման իր առանձնակի եղանակով Մաշտոցը տառանշաններ է գոյացրել: Մենք դեռ առիթ կունենանք անդրադառնալու այդ պարզ հիմնապատկերի հետ գրաստեղծի կատարած այլ ոչ մեծ, բայց և յուրահատուկ ձևափոխումներին, երբ հիմնանկարին միայն մի գիծ կամ գծիկ ավելացնելով, և նորեն դիրքափոխելով կազմել է հայերենի, վրացերենի և աղվաներենի երկու տասնյակից ավելի պարզ պատկերներով տառանշաններ: Ասվածը հավաստենք թեկուզ և արդեն բերված օրինակներով:



$$\text{ՐՐ}-\text{ԲԷ}^* \text{Դ}-\text{Յ}-\text{Գ}-\text{Ժ}-\text{Խ}^* \text{Լ}^* \text{Վ}^* \text{Ծ}^* \text{Ջ}^* \text{Ռ}^* \text{Մ}^* \text{Ֆ}^* \text{Ք}^* \text{Ի}^* \text{Ք}$$

զծ. 3

Դժվար չէ նկատել, որ միայն մի գիծ է ավելացված հիմնապատկերին մեկ՝ միջնամասում, ներսից ու դրսից, ապա՝ եղբերում, դարձյալ պատկերի ներսից ու դրսից և դիրքափոխում է կատարվել, որի հետևանքով առաջացած 14 պատկերներից 9-ը հայերենի և 8-ը վրացերենի տառանշաններ են: Կատարվածն այնպիսի մի երևույթ է, որն ինք-



նին հավաստում է այդ երեք լեզուների գրանշանների միևնույն մտածված սկզբունքով կազմված լինելու իսկությունը: Եւ միանգամայն հասկանալի է դառնում այդ երեք լեզուների գրերն իրար հետ շփոթելու աստիճան նման լինելու հանգամանքը, երբ շրջվում են այդ գրերից որևէ մեկի որոշ տառանշաններ, այլ խոսքով, երբ վերացվում են գրաստեղծի սկզբնապես կատարած դիրքափոխումները, երևում է մյուսի տառապատկերը, մեկի տառանշանը հայելու կամ հայելիների մեջ ներկայանում է մյուսինը:

Ասեմք նաև, որ այլևս կարևորություն չունի այն հարցը, թե «վերկնաւորն» և «վերկնայարն» հիշված երկու բառերն էլ Կորյունին են թե ոչ: Մի դեպքում ձեռագրից «վերկնայարն» ընկել է՝ կրկնություն նկատված լինելու հետևանքով, մյուս դեպքում այն մուծվել է մի բանիմաց գրչի կողմից՝ ավելի արտահայտիչ նկատված լինելու պատճառով: Բանն այն է, որ տառապատկերներ կազմելու համար գրաստեղծը կիրառել է թե՛ մեկը, և թե՛ մյուսը, կատարել է պատկերների և՛ կրկնավորումներ, և՛ կրկնահարումներ:

Ամփոփենք կատարվածը. Մեսրոպ Մաշտոցը Սամոսատ քաղաքում «հելլենական դպրություն» գեղագիր Հոսիանոս գրչի օգնությամբ գեղամշակել կազմել և վերջնականապես ավարտել է իր նորաստեղծ հայերեն «նշանագրերի բոլոր զանազանությունները», տառապատկերները գեղեցկագրել, զծագրությունը հարդարել և գրությունը դարձրել հարմար հետևյալ մասերով .

1. Գեղագրական երկու կարգ մշակումներով տարբերակել և կայունացրել է տառակազմ գծերը.
    - ա. Որոշել է պատկերակազմ գծերի լայնությունը. «վերագոյնն և վայնագոյնն» - բարակի և հաստի ընտրությամբ առանձնացրել է տառակազմ հիմնական և օժաղակ գծերը:
    - բ. Որոշել է պատկերակազմ գծերի երկարության չափերը. «վկարճն և վերկայնն»՝ կարճի և երկարի ընտրությամբ զանազանել է տառակազմ գլխավոր և երկրորդական գծերը:
  2. Գեղագրել է այբուբենի պարզ պատկերներով. «զառանձինն»՝ միանկար 31 և բարդ պատկերներով . «վերկնաւորն», «վերկնայարն»՝ կրկնանկար 15 տառանշանները, գրերի շարքի ընդհանուր միանկարվածությունը և կազմել միասնական ներդաշնակ համաչափությունները.
  3. Իր գրերի գեղամշակումները ավարտելուց հետո, երբ նրա գրությունը դարձել է պարզ, կիրառումը՝ դյուրին, կազմությունը՝ համաչափ, նկարվածքը՝ տպավորիչ և գիրը՝ ինքնատիպ, Մաշտոցը հանձնարարել է Հոսիանոս գեղագրչին՝ կազմել նորաստեղծ հայոց ազգային ինքնուրույն գրերի գեղագիր պնակիտը, ցուցադրական գեղանկար նմուշը:
- Մաշտոցն այնուհետև իր երկու ավագ աշակերտների հետ, որոնք էին՝ Հովհանը՝ Եկեղյաց գավառից, և Հովսեփը՝ Պաղնական տնից, ձեռնար-

կում է Աստվածաշնչի գրքերից թարգմանություններ կատարել: Առաջինը թարգմանում է Սողոմոնի առակներից, որն սկսվում է.

«Ճանաչել փնատություն և փրատ, իմանալ քրանս հանճարոյ» («Ճանաչել իմատություն և իրատ, իմանալ հանճարի խոսքերը») խորախորհուրդ խրատականով: Այս թարգմանությունները ևս գրչագրվում են հույն գեղագրի ձեռքով: Կորյունի վկայությամբ այն օրինակ է ծառայել նաև դպրության գրչագիրներ սովորեցնելու համար. «որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի հանդերձ ուսուցանելով Կմանկունս գրիչս նմին դպրութեան» ...«որ և գրվեց այն գրագրի ձեռքով. միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ լսատրաստելով նույն դպրության համար»:

Հունաց և ասորաց քաղաքների իշխաններից և եկեղեցիների եպիսկոպոսներից շատ գովեստներ ստանալով, Մաշտոցը «շնորհատուր պարգևներով» և իր ամբողջ խմբով «հոգելից ուրախութեամբ» վերադառնում է հայրենիք 404-405 թթ.: Մեծ Հայքի մայրաքաղաք Վաղարշապատի սահմանների մոտ, ինչպես հարյուր տարի առաջ Գրիգոր Լուսավորչին դիմավորելու ելած հայոց Տրդատ Գ. արքան, այնպես էլ Մեծ Հայքի Վուսմշապուհ Արշակունի արքան, ավագանու, կրոնական դասի և հոծ բազմություն հետ միասին աննկարագրելի ցնծությամբ դիմավորում են հանճարեղ գրաստեղծին և ուրախ երգերով ուղեկցում Վաղարշապատ: Ողջ հայ ժողովուրդն երկար օրեր տոնել է ազգային գրերի դյուստը, այն վերածվել է համազգային խանդավառության, ընդգրկելով ժողովրդի բոլոր խավերին առանց բացառության: Հայ ժողովուրդն այլևս կարող էր իր ազգային ինքնուրույնությունը պաշտպանել և՛ սրով, և՛ գրով: Համատարած գրաճանաչությունն ու ուսումնառությունը երկրում գնահատվել և խրախուսվել է հավասարապես թե՛ իշխանությունների, և թե՛ ժողովրդի կողմից: Այն համազգային ըմբռնում է ունեցել. «Ամենայն անձըն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի իսաարէն, յասորի տանջանացն, պերծեալք ի լոյս՝ փութային» («Ամեն մարդ արտագին փափագում էր հայերեն գիտության ուսումը և ուրախ էր, որ փրկվում էր ասորերենի պատճառած տանջանքներից, որպես իսապարհից դեպի լույս ելնէր»<sup>1</sup>), վկայում է Ղազար Փարպեցի պատմիչը:

Պատմաբան Լեոյի խոսքով ասած՝ հայալեզու դպրոցներում հավասարապես սովորել են և՛ իշխանական տոհմի, և՛ շինականի զավակները. «Լսիսան Ամատունին և Վանանդի գեղջուկ Ղևոնդ երեցը», ավելին՝ սովորողներին թոշակ է տրվել, կացարաններով են ապահովել, այն էլ ոչ միայն Մեծ Հայքում: Երախտապարտ հայ ժողովուրդը մեծարանքի և հպարտության զգացումով իր հայրենասեր որդուն՝ Լուսամիտ Մեսրոպ Մաշտոցին բարձրացրել է համազգային պաշտամունքի բարձրագույն աստիճանին՝ դասելով ազգային եկեղեցու սրբերի շարքը: Եւ ահա ավելի

<sup>1</sup> Ղազար Փարպեցի, Աշխ. աշխ., էջ 36-37:

քան 1500 տարի է հայ ժողովուրդն անմարելի սիրով և օրհնանքով մեծարում և երկրպագում է իր հանճարեղ որդուն:

Ազգային գրի ստեղծումով հայ ժողովուրդն ստանում էր հայայեզու և հայամիտք դպրությունն ստեղծելու և իր անկախ գործունեությունը շարունակելու մի նոր հնարավորություն, ազգը մշտապես պահպանելու անխորտակելի ուժ, ամենագորեղն իր երբեխցե ունեցած կարողություններին: Հպարտություն հիշենք, որ այդ ծայրաստիճան կենսական գործում աննախագեպ միաբան եղան և չթուլացող եռանդով, հնարամտորեն գործակցեցին երկրի աշխարհիկ և հոգևոր մեծերը, ողջ հայ ժողովուրդը: Երկիրն իր բոլոր հնարավորություններն ի սպաս դրեց միայն ու միայն անհետաձգելին ստեղծելու և նրա կիրառումն իրականացնելու նպատակով: Անելանելի քաղաքական իրադրության մեջ այդ համազգային համառ նպատակամղվածությունն անսպասելի արագ և լիակատար կերպով տվեց իր բաղձալի ազգապահպան արդյունքը: Կախարդական և անչափելի է այն գորությունը, որ ժողովրդին պարգևեց մեսրոպաստեղծ դպրությունը, որի սկզբնավորողն հենց ինքը Մեսրոպ Մաշտոցը եղավ: Ո՛չ աշխարհացունց կործանումները, ո՛չ նվաճողների բռնի տեղահանությունները, ո՛չ դաժան բռնապետների կոտորածները, ո՛չ հարատև տարագրությունները և ո՛չ էլ ուժացման նենգավոր հրեշք չկարողացան սասանել հայ ցեղի հոգևոր միասնությունը, կասեցնել ազգի ստեղծագործ միտքը: Նրա ոգևորող մտքի և անդադրում աշխատանքի արարումներն եղան գիտության և արվեստի հայ հանճարի գանձերը, համամարդկային արժեքների ստեղծումը: Ամենագորեղ ժամանակն անգամ նահանջեց մեսրոպաստեղծ Հայոց ազգային գրերի կենսունակությունը առջև և նրա 36 գրանշանները, ահա 16 դար շարունակ, որպես մի անմարելի ջահ պայծառ լուսավորում են հայ կյանքի առաջընթացի ճանապարհը:

ԱՄՓՈՓՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

Հայոց ազգային գրի ստեղծման պատմության առթիվ մեր գիտություններն են.

1. Հայաստանը Իրանի և Հռոմի միջև 387 թ. բաժանումից հետո, Սասանյան արքաները պետականորեն ծրագրել և վարել են իրենց ենթակա Մեծ Հայքում զրադաշտական կրոն տարածելու, հայերին դավանափոխելու նենգամիտ քաղաքականություն: Միաժամանակ պետականության թուլացման հետևանքով ժողովրդի մեջ նախկին հավատալիքների վերականգման և տարրեր աղանդներ երկիր թափանցելու իրական հնարավորություն է առաջացել: Վտանգված էր հայրենի պետականությունը, վտանգվում էր նաև երկրի քրիստոնյա եկեղեցին, ժողովրդի հավատը: Ազգակործան վտանգն անտես չի մնացել երկրի հոգևոր և աշխարհիկ

մեծերին: Սկզբնապես նախատեսվել և հետևողականորեն տարվել է ժողովրդի մեջ քրիստոնեական հավատը զորացնելու, ազգը եկեղեցու շուրջ միավորելու և նրա ինքնուրույնությունը պահպանելու ճանապարհով եկող, հայաջինջ վտանգի դեմն առնելու հեռատես գործունեություն: Անհետաձգելի խնդիր է համարվել՝ նախ երկրի եկեղեցու և եկեղեցական դպրոցների ազգայնացումը, նրա օտար, ժողովրդին անհասկանալի լեզուն հայերեն դարձնելը: Ահա, հենց այդ նպատակով է Տարոնցի երիասարգ զորական Մեսրոպ Մաշտոցը դիվանագրպի ծառայության անցել Արշակունիների արքունիքում, իր գինվորականի զբաղմունքին ավելացրել պալատական քարտուղարի աշխատանքը:

Մաշտոցն արքունի ծառայության տարիներին (389-394), շրջակա երեք՝ պարսկերեն, ասորերեն և հունարեն լեզուներով պատասխանատու կերպով զրազրություն է կատարել և խորապես ուսումնասիրել է գրավոր լեզվի օրենքները, պարզել բանավոր լեզուն գրավոր արտահայտելու առաջավոր պահանջները, յուրացրել է Արարատյան աշխարհի բանավոր լեզուն, հայտնաբերել է զարգացած հայերենի ներքին կանոնները, մշտապես ինքնազարգացմամբ է պարապել և լայն գիտելիքներ ձեռք բերել: ԱՐՔՈՒՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 5 ՏԱՐԻՆ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐԱՍՏԵՂԾԻ ՄԵԾ ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՆ Է:

Մաշտոցն ականատես էր պետական-քաղաքական տեղաշարժերին, տեղյակ էր ազգային-կրոնական թե՛ ներքին, և թե՛ արտաքին հակասություններին: Նա իր գործի նվիրյալների՝ աշակերտ-օգնականների հետ, ոչ առանց Սահակ Պարթև կաթողիկոսի ցուցմունքի և հայոց խոսքով Գ. թագավորի խրախուսանքի, անցել է կրոնական-մենակյաց կյանքի: Եւ Գողթան գավառի Երնջակի լեռներում քաղաքներից, շեներից, նույնիսկ վանքերից մեկուսի, անվտանգ զբաղվել է ազգային գրի ստեղծման և դարձի քարոզչության նախապատրաստվելու զուգակցված անհետաձգելի աշխատանքով:

Մաշտոցի ողջ գործունեությունը քաղաքագիտորեն իմաստուն ծրագրված ընթացք ունի:

2. Մեսրոպ Մաշտոցը կրոնական կյանքի մենակյաց 4 տարիներին (394-398), իր աշակերտ-օգնականներին ավետարանական ուսմունք է սովորեցրել, առաքելական արվեստին է վարժեցրել, և Հայոց գրերի ստեղծման ճգնական աշխատանքով է պարապել: Այդ նպատակով նա Սբ. Գրքերից թարգմանություններ է կատարել: Իսկ Սբ. Գրքերը լինելին հունարեն, թե ասորերեն գրական այնպիսի կատարյալ գործեր էին, որոնց թարգմանություններն անեղը հնարավորություն էին ընձեռում հայոց զարգացած բանավոր լեզվի ողջ կարողությունը կանոնակարգված ձևով արտահայտելու, և հնչյունական բարդ կազմությունն ամբողջապես զրսևորելու համար: Սբ. Գրքերից կատարվող թարգմանությունները,

ինչպես նաև ժողովրդական իմաստուն շատ գրույցներ, Մաշտոցը գրի է առել ժամանակի ամենազարգացած հունարեն այբուբենի հիման վրա կազմված հայերեն գրերով: Գրաստեղծը հայերենի իր առաջին այբուբենը կազմել է՝ պահպանելով հունարեն գրերի հնչյունը, պատկերը և կարգը, նրա շարքը համապատասխան հնչումի մուծել հայերենի այն հնչյունների՝ իր կողմից ընտրած նոր նշանները, որոնք՝ չկային հունարենի այբուբենում, և նրա շարքից հեռացրել է այն գրանշանները, որոնց հնչյունները հուներ հայերեն լեզուն: Աշխատանքի այդ փուլում գրապատկերների ազգայնացման անհրաժեշտություն դեռևս չկար, այն ոչ միայն գործնական չէր կիրառման իմաստով, այլև վտանգավոր էր գրի ստեղծման գործը բացահայտելու տեսակետից: Մաշտոցն իր նորակազմ հայերենի-օտարագիր այբուբենը հաջորդ 2 տարում (398-400) Գողթան գավառի քարոզչության ընթացքում կիրառել, հիմնավորապես փորձարկել, ստուգել և ճշտել է: Այն ներկայացրել է Սահակ Պարթև կաթողիկոսին՝ համատեղ քննելու և անհետաձգելի գործի շարունակումն անվտանգ ծրագրելու համար:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ 400 ԹՎԱԿԱՆԻՆ:

Կորյունն այդ մասին լուր է: Սակայն ակնարկելով, որ Գողթանի քարոզչության ընթացքում հենց այդ նույն նպատակով է Մաշտոցի մտքում ծագել գրի անհրաժեշտության գաղափարը, և այդ խնդրով միառժամանակ պարապելուց հետո միայն, նա իր այդ միտքը Վաղարշապատում հայտնել է Սահակ կաթողիկոսին, և այն արժանացել է նրա պատրաստակամ հավանությանը: Բաղաբազիտորեն լուծել է այդ ժամանակ այդքան կարևոր երկու խնդիր՝ մեկ, որ գրի ստեղծման գործն ամբողջովին ուղղել է եկեղեցու ոլորտ, դարձրել է նրա ներքին մի սովորական խնդիր, և շեղել ուշադրությունից, մեկ էլ՝ որ այդ պիտույքի կարիքը հոգալու համար մտահոգվելու ընական անհրաժեշտություն է առաջ բերել:

3. Նորաստեղծ հայերենի այբուբենի (հունագիր) կազմությունը համակողմանի քննության առնելու, ուսուցման երաշխավորելու և հետագա աշխատանքներն անվտանգ շարունակելու նպատակով Սահակ Պարթև կաթողիկոսը 400 թվականին, եկեղեցու համագումար ժողովի անվան ներքո, Վաղարշապատ է հրավիրել լեզվի և գրի խնդիրներին գիտակ, հունարենով կրթված, հայազգի բարձրաստիճան վստահելի կրոնականների: Այդ քննարկումներին չեն հրավիրվել, և դրա կարիքն էլ չկար, Մեծ Հայքում գործող ո՛չ ասորի, և ո՛չ էլ հույն կրոնավորներ: Երկրի եկեղեցու և նրա դպրոցների ազգայնացումը հակասում էր օտարազգի կրոնավորների շահերին (իհարկե ոչ նրանց եկեղեցիների. գրադաշտի վտանգն ընդհանուր քրիստոնեությունն էր): Բարեփոխումն ընդմիշտ վերջ էր գնելու նրանց հարյուրամյա գործունեությունն ընդարձակ Հայաստանում:

Եկեղեցու ուսյալ հայերը Սահակ Պարթևի ցուցումներով և Մեսրոպ Մաշտոցի օգնությամբ, նախ յուրացրել են նորակազմ այբուբենը (իսկ այդ դժվար չէր նրանց համար հունագիր լինելու հանգամանքով), ապա շատ օրեր պարապել են, գործնականում կիրառումներ կատարելով, թարգմանությունների և գրառումների, համեմատությունների և ստուգումների ճանապարհով պարզել և հավաստել են կատարվածի իսկությունը, և երաշխավորել ուսման:

Լեզվագիտական այդ փակ քննարկումը վարքագիրը միտումնավոր համագումար ժողովի բարձր անունով է ներկայացրել, նախ՝ տեղի ունեցածի իսկությունը ծածկելու, ապա նրա անհուսալի անարդյունք ավարտով դրսից օգնության ակնկալություն առաջացնելու նպատակով: Հենց այդ մոտեցմամբ է Վաղարշապատ թագավորը գրի ստեղծման գործից հեռու պահվել. իր երկրի եկեղեցու նկատմամբ անտարբեր, նույնիսկ անդադրասեր ներկայացվել: Այդ էին պարտադրում առկա ազգային-կրոնական, պետական-քաղաքական հակամարտությունները:

4. Մաշտոցի ստուգված, և ուսուցման համար պատրաստ գրերով երկրում անվտանգ կրթություն ծավալելու նպատակով Կորյունը (գուցե և նրանից առաջ) քաղաքագիտորեն անսխալ շարահյուսված պատմություն է հորինել: Մինչ այդ գրի գործից հեռու կանգնած Վաղարշապատ թագավորը, ստեղծված անելանելի վիճակում, առանց շեղվածություն, ավելի ճիշտ՝ ի միջիայլոց պատմում է, թե լսել է, որ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ»՝ ասել է թե պատահաբար, հայերեն լեզվի նշանագրեր է «գտել»: Որքան էլ, որ թեև անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ»՝ ասել է թե պատահաբար, հայերեն լեզվի նշանագրեր է «գտել»: Որքան էլ, որ թեև անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ»՝ ասել է թե պատահաբար, հայերեն լեզվի նշանագրեր է «գտել»: Որքան էլ, որ թեև անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ»՝ ասել է թե պատահաբար, հայերեն լեզվի նշանագրեր է «գտել»: Որքան էլ, որ թեև անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս «հանկարծ»՝ ասել է թե պատահաբար, հայերեն լեզվի նշանագրեր է «գտել»:

Երբ թագավորից խնդրել են այդ «պիտույքի» մասին հոգ տանել, նա ոչ անձամբ Դանիելից, այլ մի երրորդ անձի միջոցով, այն բերել է ավել: Եւ մեր «հոգեբարձուները» Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, առնելով նշանագրերը, այն «գործադրելու» համար թագավորից նաև «մատաղահաս մանուկներ» են խնդրել: Սա դիվանագիտական մի այնպիսի մոտեցում էր, որով Դանիելյան նշանագրերի առայժմ փորձարկելու, և ճանաչելու անվան ներքո մեսրոպյան գրերն անվտանգ սովորեցնելու, և հետագայում նրանով ծավալուն կրթություն տանելու համար ուսուցանողներ-ուսուցիչներ նախապատրաստելու հնարավորություն են ստացել: Այդ էր պարտադրում երկրի եկեղեցու և դպրոցների ազգայնացման դանդաղ ընթացք չհանդուրժող գործընթացը: Իսկ, երբ հայտնել են, որ նրանցից շատերը սովորել են, թագավորն այն ժամանակ հրամայել է ամեն տեղ այդ նույն նշանագրերով կրթել: Այս էլ նշանակում է, որ Մաշտոցը իր օգնական ուսուցիչներին առած մոտ երկու տարի Դանիելի նշա-

նազրերով կրթելու անունով իր գրերով ուսում է տարել, և բարեփոխման համար այնքան անհրաժեշտ քարոզիչներ, թարգմանիչներ և գրագիրներ է նախապատրաստել, որի համար և Մաշտոցը իսկապես «վարդապետական»-վարժապետի գեղեցիկ աստիճանի է բարձրացել: Այս ամենից հետո, երբ Մաշտոցին մնում էր իր հայերենի հունագիր այբուբենի գրապատկերները, մի բառով ասած, ազգայնացնել, իսկ Սահակ Պարթևին և Վ. Բամազյանին հոգալու ամենավտանգավորի՝ գյուտը հրապարակելու, բարեփոխումն անդանդաղ իրականացնելու մասին, Կորյունն անսպասելի հայտնում է, թե «հասկացան», այսինքն՝ երկու տարի գործադրելուց և կրթելուց հետո միայն ճանաչեցին, որ Դանիելյան նշանագրերն ուրիշ դպրությունից «թաղված»՝ գործածությունից վաղուց գուրս ընկած են, որ բավական չեն հայ լեզուն ամբողջութեամբ արտահայտելու համար: Հասկանալի է, որ այդ հայտնությունով գրի ստեղծման գործը երկրում այլևս անհուսալի է ներկայացվել և դրսի օգնություն կարիք է առաջացրել: Գործի ամենավտանգավոր՝ վերջին ավարտական մասը երկրից դուրս տանելու, այն ասորական եկեղեցու պաշտպանությունը հանձնելու բնական պահանջ է հարուցել, իսկ այդպիսի մերձեցում այդ ժամանակ իրենք պարսիկներն էին խրախուսում:

5. Հայագետները հիմնովին մերժել են Դանիելյան նշանագրերի հայերեն լեզվի գրեր լինելը (գեռես միջնագրում այն մերժել էր նաև քննախույզ պատմահայրը), համարել են, որ Դանիելյան կոչվող այդ գրերը հայկական են համարվել թյուրիմացաբար, շփոթելով արամեական (հին ասորական) և արամյան (հայ) հարահնչյուն անվանակոչումները: Ավելին, երբ վարքագիրը ոչ մի տեղեկություն չի տալիս Դանիելի անձի մասին, թե որտեղ է նա գործել, որտեղ է գտնվել, և բավարարվել է միայն շեշտելով, որ ասորի եպիսկոպոս էր, իսկ մյուս կողմից, երբ Մաշտոցը երկու անգամ եղել է Ասորիքում, բայց Դանիելին չի հանդիպել, կամ երկու տարի շարունակ Մեծ Հայքում Դանիելի նշանագրերն են արժարձել, գործադրել, նրանով կրթել, իսկ նա անտարբեր և անմասնակից է մնացել դրան, և այդ դեպքում, երբ իրենից թագավորն էր գրերն անձամբ խնդրել, գիտնականների մոտ իրավացի երկմտանք է հարուցել նաև Դանիելի անձի իսկությունն նկատմամբ: Մեր աշխատանքն ևս բերել է այդ մտքին, և համոզված ենք՝ դրանում, որ ասորի ազնվական Դանիել եպիսկոպոսի պատմությունը ազգային-կրոնական նկատառումներով հորինվել է ի պաշտպանություն հայ գրի ստեղծման գործի: Այս անվամբ Մաշտոցի գործունեությունը պատասպարելու, ապա և ասորական եկեղեցու հովանու ներքո, նրա բարձր անվամբ գյուտը հրապարակելու, բարեփոխումն անվտանգ իրականացնելու նպատակով:

Ազնվական ասորի եպիսկոպոս Դանիելը հայոց գրերի գյուտի անուրանալի ՊԱՀԱՊԱՆՆ է:

6. Դանիելի նշանագրերի խափանումով դուռ է բացվել Մաշտոցի մնացյալ աշխատանքները (որոնք այլևս չէին կարող երկրի ներսում տարվել) Ասորիքում շարունակելու և ավարտելու, ասորական եկեղեցու կողմից այն վավերացնելու և նրա պաշտպանությունը հրապարակելու համար: Մաշտոցն իր օգնական-ընկերներով, աշակերտների ոչ փոքրաթիվ խմբով, քաղաքների իշխանավորներին և եկեղեցիների առաջնորդ եպիսկոպոսներին ուղղված թագավորի հրովարտակներով և կաթողիկոսի կոնդակներով օժտված, նյութապես ապահովված և ժամանակով չսահմանափակված 402-403 թթ. ուղևորվել է Միջագետք՝ Ասորաց Եդեսիա քաղաքը: Մաշտոցի այդ ուղևորությունն այն աստիճան կազմակերպված և գործնական այնպիսի կազմություն ունի, որ գրերի գյուտն այլևս կասկած չի հարուցում, այն պաշտոնապես է հռչակվելու:

Ապագա թարգմանիչներ, գրագիրներ և գեղագրողներ նախապատրաստելու նպատակով Մաշտոցն իր հետ տարած աշակերտներին երկու խմբի է բաժանել և տվել է ժամանակի մշակութային նշանավոր կենտրոններ՝ Ասորաց Եդեսիա և Հունաց Սամոսատ քաղաքներում ասորերեն և հունարեն կրթություն, իսկ ինքն իր գործին հմտացած ընկերներով ձեռնամուխ է եղել, նախ մի վերջին անգամ կատարվածը ստուգելու, ապա իր աշխատանքային օտարագիր հայերեն այբուբենի գրապատկերներն ազգայնացնելու խնդրով:

7. Լեզուն գրավոր արտահայտելու երկրորդ հիմնահարցը գրերի գյուտը թեոսումն է, գրանշանների հավասարաստիճան արտահայտումն է անկախ նրանց կիրառվելու աստիճանից: Մաշտոցն իր աշխատանքային այբուբենի օտար հունարենի գրանշաններն ազգայնացնելու, որոշյալ գրապատկերներ կազմելու համար նախ պարզել է լեզվում հնչյունի-գրում նշանի կիրառվելու հաճախականությունը, համապատասխան որի և պատկերավորել է հնչյունները, կազմել գրապատկերները: Այդ կիրառական նշանակություն տվյալները գրաստեղծը ձեռք է բերել իր աշակերտ-ընկերների օգնությամբ, իր իսկ կատարած թարգմանություններում և այլ գրառումներում՝ պարզ համրումներ կատարելով: Չեռագրերում կատարած մեր այդօրինակ հաշվումները հաստատում են գրանշանների միանգամայն տարբեր, նույնիսկ անհամեմատելի անհավասար կիրառվելու բացասական երևույթը, հանգամանք, որը գրերի գյուտը թեոսման գլխավոր խոչընդոտն է: Գրաստեղծն այդ անհավասարությունը հարթել է գրանշանների կազմությունում կիրառելով պատկերիների բազմալայնություն և տարբեր նկարվածքների սկզբունքը:

Հաճախ կիրառվող գրանշանները երկստեղն են, որոնց մեծ մասի միայն մեկ ստեղն է զբաղեցնում տողի բարձրությունը, գծագրությունը պարզ է, նկարվածքը՝ միաոճ, գրապատկերները նեղ և միջին լայնություն չափերի են:

Ա- 1763.	Ն- 968.	Ե- 770.	Ո- 694.	Ի- 669.	Ր- 599.	Ի- 544.	Ս- 408.
-------------	------------	------------	------------	------------	------------	------------	------------

Սակավ կիրառվող գրանշանների գծագրությունը ծանրացած է, նկարվածքները տարբեր, գրապատկերները՝ լայն և գերլայն չափերի են.

Ե- 18.	Չ- 25.	Չ- 49.	Չ- 55.	Շ- 63.	Շ- 72.	Փ- 36.	Խ- 63. <sup>1</sup>
-----------	-----------	-----------	-----------	-----------	-----------	-----------	------------------------

Որքան սակավ է հնչյունի կիրառությունը լեզվում-գրանշանի-նը՝ գրում, նույնքան և ակնառու է նրա պատկերը գրերի շարքում, այն և՛ չափերով, և՛ նկարվածքով առանձնանում է: Գրանշանների նկարվածքը կազմվել է՝ ՀՆՁՅՈՒՆԻ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱԴԱՐՁ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ Է ՊԱՏԿԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆԸ ՍԿԶՐՈՒՆՔՈՎ:

Սակավ կիրառվող գրանշաններն, անկախ գրերի շարքին տված համաչափությունից, մշտապես նկարվում-գծագրվում են մեկ հաստատուն համաչափությամբ:

8. Մեսրոպ Մաշտոցն Ասորաց Եղեսիա քաղաքում է ազգայնացրել, իր ձեռքով նշանակել հայոց այբուբենի գրանշանները:

Աշխատանքի հաջորդ մասերում վերականգնվում են մեսրոպաստեղծ գրերի սկզբնապատկերները և քննություն են առնվում յուրաքանչյուր գրանշանի կազմությունը, նշվում նկարվածքային խումբը և հիմնական կարը, ուստի այստեղ նշենք միայն, որ Մաշտոցի գրանշաններ կազմելու հիմնական և ուրույն սկզբունքը պատկերների ԴԻՐՔԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԵՆ: Այդ է Մաշտոցի ստեղծած գրանշանների միանկար լինելու գրավականը, այդ սկզբունքով են կազմվել հայոց, վրաց և ազվանաց այբուբենների գրապատկերները: Մաշտոցը հետևել է շրջակա ժամանակակից ամենազարգացած հունարենի առաջավոր հատկանիշներին (ձայնավորների նշանակում, գրանշանների անջատական, ջոկ-ջոկ արտահայտում և գրություն առընթաց ոճ), գրապատկերների կազմությունում ևս հետևել և հիմնական կար է ընդունել, որքան էլ սակավաթիվ հունարենի մի քանի առանձին-պարզ գծապատկերներ (պահպանել է հնչումը, պատկերը և կարգը գրերի շարքում): Այդ է նաև պատճառը, որ նորաստեղծ գրերը, Ասորաց եպիսկոպոսի խորհուրդով, Մաշտոցը տարել է հունաց Մամո-

սատ քաղաք հեյլենական դպրությունից գրագիր Հուսիանոսի օգնությամբ գեղագրելու, համատեղ գրանշանների զանազանությունները որոշելու և ավարտելու:

9. Հունաց Մամոսատ քաղաքում Մեսրոպ Մաշտոցը հեյլենական դպրությունից գրագիր Հուսիանոսի օգնությամբ կատարել է իր նորակազմ հայերեն գրանշանների երեք կարգ գեղագրական մշակումներ, որոշել և կայունացրել է տառակազմ գծերի՝

- ա) լայնություն - հաստ ու բարակ
- բ) երկարություն - երկար ու կարճ չափերը
- գ) գեղագրել է առանձին-միապատկեր և կրկնավոր-զուգապատկեր գրանշանները:

Գրերի նկարը դարձրել է ամփոփ, կազմությունը՝ համաչափ, շարքը՝ միատն և գծագրությունը՝ դյուրին: Մաշտոցի պատվերով Հուսիանոսը գեղագրել և կազմել է նորաստեղծ հայոց ազգային այբուբենի ցուցանմուշ պնակիտը: Հույն գրագիրը նաև առաջինն է գրչագրել մազադաթին Սողոմոնի առակներից՝ Մաշտոցի կատարած առաջին թարգմանությունը, որն օրինակ է ծառայել գրչություն արվեստում սովորողներ վարժեցնելու համար: Մամոսատում կատարվածը գեղագրական աշխատանք է: 404-405 թվականներին է ամբողջապես ավարտվել հայոց գրերի հորինումը:

10. Մամոսատում ավարտելով գործը, իր նորաստեղծ գրերը Մեսրոպ Մաշտոցը տարել է Եղեսիա և ներկայացրել Ասորաց եկեղեցու մեծերին, նրանց, որոնց կողմից այն նախապես ընդունվել էր, այլ խոսքով՝ կատարվածը դարձրել է ասորական եկեղեցու վավերացման հարց, հետևաբար և նրա պաշտպանությունից խնդիր: Հենց այդ նույն նպատակով է Մաշտոցն ասորի և հույն եկեղեցիների առաջնորդ եպիսկոպոսներից և Մաշտոցն ասորի և հույն եկեղեցիների առաջնորդ եպիսկոպոսներից ավետագրեր հավաքել, որոնցով զուգաշարվել են Մեծ Հայքում գործող թե՛ ասորի և թե՛ հույն քարոզիչները, չընդդիմանալու հայոց եկեղեցու և եկեղեցական դպրոցների ազգայնացմանը: Ասորի և հույն եկեղեցիները գործնականում միաբան եղան և ամեն կողմով սատար կանգնեցին հայ գրի ստեղծման գործին: Զրադաշտի վտանգը քրիստոնեությունն էր, և այն բնականոն միավորել է եկեղեցիների ջանքերը Հայաստանում քրիստոնյա հավատը գորացնելու, նույնն է թե հայ ժողովուրդը ուժացման վտանգից պաշտպանելու: Եւ, շնորհիվ այդ հոգևոր միասնությունից, պատմական մի կարճ ժամանակահատվածում, անսպասելի արագ և անարգել է ընթացել, բնույթով մշակութային-լուսավորչական, սակայն ավելի քան քաղաքական այդ բարեփոխումը: Երկրում մայրենի լեզվով համատարած կրթություն ծավալվեց, հայալեզու գրականություն և հայամիտք դպրություն ստեղծվեց, և ազգը միավորվելով կարողացավ իր ինքնուրույնությունը պահպանել, ոչ միայն զրադաշտի կործանանար վտանգից:

<sup>1</sup> Ներկայացված սակավ կիրառվող, թվով 8 գրանշանները միասին վերցրած գրերի 10000 պարունակությունում գործածվել են ընդամենը 382 անգամ, որն ավելի պակաս է, քան հաճախ կիրառվող գրանշանների շարքի միայն վերջին մեկ, այն էլ ոչ նեղ, այլ՝ միջին լայնությամբ պատկերով գրանշանի 408 անգամ գործածված լինելուց: Գրանշանների խիստ տարբեր չափերով կիրառվելու բացասական երևույթը չի վրիպել գրաստեղծի ոչ աչքից, ոչ էլ մտքից, հակառակ դեպքում մեսրոպաստեղծ գրերը չէին կարող այդ կողմով ևս անթերի-ոյուրընթեռնելի համարվել:

Ազգային հավատին ավելացավ նաև ազգային գիրը, իր երբեմնի ունեցած կարողություններից ամենագորեղը, որն ավելի քան մեկ և կես հազարամյակ է լուսավորում է հայ ազգի առաջընթացի հավերժական ուղին:

\*\*\*

Դառնանք փառաբանենք հանճարեղ գրաստեղծ Սր. Մեսրոպ Մաշտոցին, տոհմիկ հայրենասեր, լուսամիտ Սր. Սահակ Պարթև կաթողիկոսին, Արշակունյաց դպրասեր առատաձեռն Վռամշապուհ արքային և բոլոր բոլոր նրանց, որ բազում տքնանքներ կրելով զորավիգ եղան ազգային անթերի գրերի արարման և տարածման սուրբ գործին:

Դառնանք մեծարենք հայալեզու և հայամիտք դպրություն կերտողներին՝ հավատաբան Եղնիկ Կողբացուն, պատմահայր Մովսես Խորենացուն, ավարայրի բլբուլ Եղիշեին, համրողապետ Անանիա Շիրակացուն, աստվածամերձ Գրիգոր Նարեկացուն, արդարամիտ Մխիթար Գոշին, բժշկապետ Մխիթար Հերացուն, մտքաբան Հովհան Որոտնեցուն և բոլոր-բոլոր մեր պատմիչներին ու մեսրոպյան գրերի ծաղկողներին, մինչև աստվածաշունչ հայերենով ազգը կրթող մեր նորօրյա վարդապետներին:

Վերջ առաջին մասի



### ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

#### ՄԵՍՐՈՊՅԱՆ ՍԿԶԲԼԱՍՏԵՂԾ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

**Մ**եսրոպաստեղծ գրերի պատկերների և կամ այբուբենների ընդհանուր նկարվածքի կազմությունն առանձնահատկությունների մասին խոսք բանալուց առաջ անհրաժեշտ է և պարտադիր գրապատկերները ներկայացնել իրենց սկզբնաստեղծ նկարվածքով, այլ խոսքով՝ վերականգնել մեսրոպական գրապատկերները: Իսկ այդ անել նշանակում է գրանշանների նկարվածքը մաքրել գրերի կիրառության հազարամյա ժամանակաընթացքում բնականոն ճանապարհով, անխուսափելիորեն կրած ամենատարբեր նորամուծություններից, ինչպիսին էլ որ այն եղած լինի՝ պատկերների գեղանկարման, թե՛ գրելատճի հղկման նպատակով: Այդ բնավ ոչ գյուլին, և ոչ քիչ ժամանակ պահանջող վերականգնողական աշխատանքը պարտադրում է հնագույն գրավոր հուշարձաններից հավաքչական ընդարձակ գործունեություն ձեռնարկել՝ պատճենահանել ոչ սակավ վիճագիր արձանագրություններում կիրառություն գտած հնագույն գրատեսակներ, չափազրել և կրկնօրինակել յուրաքանչյուր հնից պահպանված գրանմուշ, և այդ գրեթե սկզբնաղբյուրային, առարկայական անժխտելի նյութի մանրակրկիտ համեմատությունների, ճշտումների ու լրացումների ճանապարհով կազմել, եթե ոչ մեսրոպյան սկզբնաստեղծ, ապա որքան հնարավոր է, գրերի հորինման ժամանակին գեթ մոտիկ հավանական գրապատկերներն իրենց համաչափված նկարվածքներով: Հենց այդ աշխատանքի իսկությունով է պայմանավորվում մեսրոպյան գրապատկերների կազմության և այբուբենների ընդհանուր նկարվածքի առթիվ ասվող խոսքի հավաստիությունը: Որքան պատասխանատու, նույնքան և հանգուցալուծող այդ խնդրի իրականացումով միայն կարող է երաշխավորվել մեսրոպական գրանշանների հարցով զբաղվելը, այդ տեսանելի և շոշափելի համոզիչ նյութի գեղագիտական քննությունով միայն կարող է ճանաչելի դառնալ հանճարեղ գրաստեղծի մեկից ավելի լեզուների այբուբենների գրապատկերների կազմության սկզբունքները: Այդ է հարկադրում կատարվածի անսխալ ճանաչումը, այդ է խնդիրն ուսումնասիրելու անսայթաք ճանապարհը:

Մեսրոպաստեղծ գրերի պատկերները վերականգնելու հավաստի, և գրեթե անաղարտ նյութ են պարունակում մեր V-VII դարերի վիճագիր հուշարձանները: Նրանցում կիրառված գրերի ձևերը ոչ միայն հնագույն



ԳԼՈՒԽ Ա.

ՔԱՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՒ  
ԳՐԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԸ

են, այլև արտահայտում են փորագրության ժամանակի, հիշատակութ-  
յան բովանդակության, արձանագրության տեղադրության, ում կողմից փո-  
րագրության տրված լինելու և այլ կարևոր հանգամանքներից ելնող  
մի շարք առանձնահատկություններ, որոնք բացառիկ նշանակություն  
ունեն գրերի սկզբնաստեղծ պատկերները ճշգրտելու կարևոր գործում:  
Վիմագիր արձանագրությունները երկրի աշխարհիկ և հոգևոր մեծերի,  
ազգեցիկ իշխանավորների և նշանավոր կրոնականների կատարած մե-  
ծածավալ կառուցումների և վերաշինությունների պաշտամունքային  
ծիսա-կանոնների և հիշարժան այլ գործերի ու դեպքերի գրավոր հիշա-  
տակություններ են, որոնք կազմվել և փորագրության են տրվել ժամա-  
նակի բարձրաստիճան կրթված հայրերի և այրերի կողմից: Նրանք ոչ  
միայն կազմել են արձանագրությունը, հետևել փորագրությանը, այլև  
ընտրել են գրաձևերը: Այդ նրանք են հաճախ իրենց նախասիրության և  
կարողությունների սահմաններում ընտրել արձանագրության տեղը, որո-  
շել փորագրության եղանակը՝ համապատասխան որոնց և կազմել գրերի  
շարքի համաչափությունը: Ահա այս բացառիկ նպաստավոր պայման-  
ներն են (որոնց մասին ընդարձակ խոսք կբանանք առանձին), որ մեծաց-  
նում են վիմագիր հիշատակություններում կիրառված գրապատկերների  
ուսումնասիրման կարևորությունը: Այս կապակցությամբ ստիպված ենք  
դարձյալ հիշեցնել, որ համամարդկային ուշագրության արժանացած, և  
ազգային պաշտամունքի աստիճանին բարձրացած հայ գրչությունը հա-  
զարամյա անխզելի գործածության ընթացքում, ոչ միայն մեսրոպաստեղծ  
հայոց գրերի կիրառողն է եղել, այլ՝ գեղագրողը և նաև նորամուծումներ  
կատարողը, զարգացնողը: Ըստ արժանվույն գնահատելով միջնադար-  
յան ձեռագիր հարստության վիթխարի նշանակությունը մեսրոպյան  
գրերի գրելաձևի զարգացման, տառապատկերների նկարվածքային մշա-  
կումների գրիչ-ծաղկողների անզուգական արվեստի բերած անուրանալի  
ավանդը, ասենք, սակայն, որ նրանում բնական ճանապարհով ամբար-  
ված են ձեռագրի էությունից բխող ամենատարբեր նորամուծություն-  
ներ, որոնք որքան կարևոր են և գնահատելի գրի գեղագրության ըն-  
թացքին հետևելու համար, ցավոք, նույնքան և ծածկում են մեսրոպյան  
գրերի սկզբնաստեղծ պատկերները: Ուրեմն, թվարկենք վիմագրության  
էությունից ելնող այն բացառիկ կարևոր առանձնահատկությունները,  
որոնք իրականում միտում են գրանշաններն արտահայտել պարզ, նկար-  
վածքի անհրաժեշտ նվազագույնը պարտադրելով միայն, և ոչ ավելին:  
Իսկ դա հենց այն է, որ կարող է օգնել կազմելու գրանշանների նախաս-  
տեղծ պատկերները: Մեր համոզմամբ դրանք են՝ կարծր նյութի փորագ-  
րության և գրանշանների արտահայտման եղանակի հնարավորությունը,  
վիմագիր արձանագրության տեղադրությունից և բովանդակությունից  
բխող պահանջները: Այժմ առանձին-առանձին քննենք նշված առանձ-  
նահատկությունների արտացոլումը վիմագրերի արտահայտությունում:

**Կ**արծր նյութի փորագրությունը կատարվում է մետաղե հատող  
ու փորող գործիքների միջոցով, և յուրաքանչյուր վիմագրի փո-  
րագրում, արտահայտումը վարպետություն, ժամանակ և ֆիզի-  
կական աշխատանք է պահանջում, դա անհամեմատ ավելի եր-  
կար է տևում, քան ճկուն գրչի միջոցով մագաղաթի վրա արտա-  
հայտել, գրելը: Վիմագրերի փորագրումը կատարվում է հատիչին  
թեթևակի հարվածներ տեղալու ճանապարհով, ուստի փորվածքների  
նուրբ եզրերը, անկյունավոր մասերը՝ լինեն դուրս, թե ներս ընկած և  
եյուստները, մանավանդ, երբ փորագրությունն ուղղանկյուն և ոչ սե-  
պաձև է կատարվում, միշտ էլ ենթակա են կոտրվելու, իսկ վրիպումները  
փորագրություններում գրեթե անուղղելի են: Հետևաբար, վիմագրերի  
փորագրությունը վարպետությունից զատ նաև զգուշավոր, համբերա-  
տար և վտանգավոր աշխատանք է: Որքան կարծր է փորագրվող քարը,  
այնքան և աշխատատար է վիմագրերի փորագրությունը, իսկ որքան  
թույլ է՝ փխրուն, նույնքան և վտանգավոր են նրանում եղած կարծր  
գոյացումների դյուրին անջատումները և կոտրվածքներ առաջացնելու  
հավանականությունը: Կոտրվածքների առաջացման վտանգն առանձ-  
նապես մեծ է, երբ արձանագրությունը փորագրվում է ոչ թե միակտուր  
քարի վրա, այլ՝ պատի երեսին և տարածվում մի քանի շարքերի վրա, իսկ  
երեսպատող քարերն իրենց եզրամասերում, շարվածքի հորիզոնական և  
ուղղահայաց կարերի սահմաններում խիստ նվազ թանձրություն ունեն  
և ամեն մի ոչ ճիշտ ուղղությունով կատարվող փորագրություն կամ  
անզգուշ հարված հատիչին՝ հղի է անուղղելի կոտրվածքներ առաջաց-  
նելու վտանգով, մանավանդ, երբ քիչ թե շատ խորը փորագրություն է  
պահանջվում:

Ահա սրանք են կարծր նյութի, շինարարական տարբեր տեսակի քա-  
րերի բնական հատկություններից բխող փորագրության այն առանձնա-  
հատկությունները, որոնք բնականում սահմանափակում են վիմագրու-

յունում գրապատկերների նկարվածքում անհարկի ծանրացումների կատարումը: Այլ խոսքով՝ վիճազրույթյան գրապատկերները գրեթե միշտ պահպանում են իրենց հիմնական նկարվածքը, միայն գերծ են նորամուծություններից: Հնագույն վիճազիր արձանագրություններում արտահայտվում է գրանշանների պարտադիր նկարվածքը միայն, և ոչ ավելին, որի հետևանքով վիճազրույթյունը պարզ է ու խիստ, միտոճ ու համաչափված: Ահա հենց սա է դնահատելին մեսրոպաստեղծ գրապատկերները վերականգնելու համար: Հետևաբար, հնագույն վիճազրույթյունը պատճենահանելու, համեմատելու և լրացնելու ճանապարհով կարող են առավել հավաստի նախաստեղծ գրապատկերներ վերականգնել: Ուստի մեր աշխատանքը գնալու է, առաջինը, հնագույն վիճազիր արձանագրություններում կիրառված գրապատկերների և գրածների հավաքման, վերականգման և ուսումնասիրության ճանապարհով, իսկ այդպիսի կարևոր նշանակություն հնագույն վիճազիր արձանագրություններ, ոչ քիչ թվով, պահպանվել են V-VII դդ. հայ և վրաց պատմական ճարտարապետական հուշարձաններում: Թե որքանով կհաջողվի մեզ վերականգնել և վերծանել գրապատկերներ կազմելու մեսրոպյան սկզբունքները, այդ ցույց կտա աշխատանքը, սակայն որ մեսրոպաստեղծ հայոց գրերի հնագույն նմուշները տարածելու և այն կիրառության մեջ դնելու լավագույն առիթ կլինի, որի կարիքն այնքան զգացվում է, դրանում չենք կասկածում:

ՓՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԸ

Գրապատկերների արտահայտությունը մեծապես պայմանավորված է փորագրության եղանակի հնարավորությունից: Փորագրության յուրաքանչյուր եղանակ որոշակի հնարավորություն է ընձեռում, ավելի ճիշտ սահմանափակումներ է մտցնում գրապատկերների արտահայտման գործում: Որքան սահմանափակ ու աշխատատար է փորագրության հնարավորությունը, այնքան և պարզ ու հստակ է կազմվում գրապատկերների գծագրությունը, անհարկի է գրանշանների նկարվածքում ծանրացումների կատարումը: Հանգամանք, որն առավել գնահատելի է գրանշանների սկզբնապատկերները վերականգնելու համար: Իսկ որքան մեծ է փորագրության եղանակի ընձեռած հնարավորությունը, նույնքան և մեծ է սկզբնականից հեռանալու, այն ճոխացնելու և կոծկելու միտումը, և դա գնահատելի է ավելի գեղագրության զարգացման ընթացքին հետևելու համար, քան՝ սկզբնապատկերները վերականգնելու: Հետևաբար, փորագրության ոճերի, նրանց հնարավորությունների և ներգործությունների պարզաբանումները կարևոր են գրապատկերներն արտահայտելու և փոխանցելու կարգն ու աստիճանն ըմբռնելու համար:

Փորագրության ոճերի ուսումնասիրությունը հարմար է տանել հայ և վրաց լեզուներով փորագրված հնագույն վիճազիր արձանագրությունների համատեղ քննությունը, որոնց դասական կատարումներով հարուստ են երկու քրիստոնյա ժողովուրդների հատկապես պաշտամունքային շինությունները, պատմա-ճարտարապետական հուշարձանները: Այդպիսի մոտեցումը հնարավոր կդարձնի վերականգնել նաև մեսրոպաստեղծ վրաց գրերի սկզբնապատկերները, այնքան անհրաժեշտ համատեղ քննություն և համեմատություններ կատարելու համար: Միաժամանակ, այն կարող է օգնել աղվանական ստեղծագործությունների վիճազիր արձանագրություններում կիրառված գրանշանների, թեկուզ և ոչ բոլոր գրապատկերներն էլ ճշտել, լրացնել և մասնակի համեմատություններ ևս կատարել: Վիճազիր արձանագրությունների փորագրությունները բոլոր ժամանակներում կատարվել են երեք հիմնական եղանակներով, գրանք են՝ գրամիջյան տարածությունների և գրերի՝ ուղղանկյուն ու սեպաձև փորագրությունները: Փորագրելու յուրաքանչյուր ոճ ունի իր գծածությունների ժամանակաշրջանը, կիրառության պայմանները, արտահայտելու հնարավորությունները և փորագրության առանձնահատկությունները: Փորագրության ոճով է պայմանավորված գրապատկերների արտահայտությունը:

ԳՐԱՄԻՋՅԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վիճազիր արձանագրությունների փորագրության այդ ոճում փորվում, խորացվում են ոչ թե գրերը, այլ՝ գրերի և գրաստեղների միջև եղած տարածությունները: Այստեղ վիճազրույթը ծավալ են կազմում, ուսուցիկ են, դուրս են ելնում և պահպանում են փորագրվող հարթության մակարդակը և ոչ փորվելով ներս են ընկնում, խորանում նրանում, ինչպես այդ կատարվում է հաջորդ երկու՝ ուղղանկյուն և սեպաձև փորագրություններում:

Փորագրելու վարպետություն պահանջող, զգուշավոր և աշխատատար գործը նվազեցնելու նպատակով, երբ կրճատվում են գրերի և գրաստեղների միջև տարածությունները թե՛ գրանշանները, թե՛ գրաստեղներն ընդհուպ մոտենում են, երբեմն նույնիսկ շոշափում են իրար, իսկ փոխարենը՝ լայնանում են գրաստեղները, պատկերակազմ գծերը: Այդ հանգամանքն իրականում սահմանափակում է գրանշաններ կազմելու ազատ հնարավորությունը, այն գծագրելու կոշտ և ոչ ճկուն միջոց է պարտադրում միայն, այլ խոսքով՝ առաջ է բերում գրապատկերներ գծագրելու մի նոր եղանակ: Գրամիջյան տարածությունների կրճատումից ոչ միայն լայնանում, երբեմն և գերլայն են դառնում պատկերակազմ գծերը, այլև այն բոլոր կողմերով լինի ուղղահայաց, թե՛ հորիզոնական,



կորագիծ, թե՛ շեղակի նաև միալայնք են դառնում, իսկ միաթավ (գրոտեսք) գծերով հնարավոր է արտահայտել գրապատկերների հիմնականաբար միայն, կմախքը, և ոչ ավելին: Հետևաբար, այդ փորագրությունում վիմագրերը գրեթե գերծ են նորամուծումներից, նկարվածքի ծանրացումներից: Այստեղ գրանշանների գծագրությունը պարզ ու հստակ է, ուրեմն՝ առավել գնահատելի մեսրոպաստեղծ գրերի սկզբնապատկերները վերականգնելու համար, քան՝ գեղագրության դարգացման ընթացքին հետևելու:

Վիմագրերի ամեն կողմով խտանալով արձանագրությունը ոչ այնքան ակնառու, որքան հավաք տեսք է ստանում, մասնավանդ, երբ վիմագրերն էլ իրենց լայնապատկեր գծագրությունով ու ծավալով պահպանում են փորագրվող հարթությունը, կազմում նրա օրգանական շարունակությունը, այն ավելի ձուլվածք, իսկ խորը փորագրված չլինելու պարագայում ճնշումով կատարված դաջվածք է հիշեցնում: Ուռուցիկ և մգաթավ լայն պատկերակազմ գծերում մասնակի կտտրվածքները, անգամ վրիպումները սուր արտահայտություն չեն ստանում և չեն խաթարում գրապատկերները:

Վիմագրերի պարզ նկարվածքը, անվտանգ ու դյուրին աշխատանքը փորագրության այդ ոճին նախակիրառման առավելությունն են տվել, և պատահական չէ, որ թե՛ հայերեն, թե՛ վրացերեն հնագույն վիմագիր հիշատակություններն այդ եղանակով են փորագրվել: Եւ, չնայած այդ բոլորի, գրամիջյան տարածությունների փորագրությունում արձանագրության ընդհանուր տեսքը միապաղաղ է ստացվում և զուրկ է աչքի զարնող արտահայտությունից, հատկապես հեռավորության պայմաններում: Այն անզոր է նաև մեծածավալ արձանագրություններ փորագրելու համար, երբ փոքր չափերի գրեր են պահանջվում և դժվարահատու է այն դեպքում, երբ արձանագրությունը տարածվում է պատի երեսին և ոչ թե միակտուր քարի վրա է փորագրվում:

Այդ սահմանափակումները չէին կարող բավարարում տալ հետզհետե լայն տարածում ստացող վիմագրության պահանջներին, գեղագրության և, հատկապես, ճարտարապետությունում նրան տրվող կարևոր իմաստում, երբ յուրաքանչյուր դեպքում վիմագիր արձանագրությունը պետք է համապատասխաներ հիշատակության բովանդակությանը, զբաղեցրած տեղին, լիներ ակնբախ և գեղագրված, ծառայեր գեղարվեստական արտահայտչամիջոց, դարդարանք: Վիմագրությունը ներկայացվող այդ նոր պահանջներին, և ժամանակի առաջացող ճաշակին բավարարում տալու համար գրամիջյան տարածությունների փորագրությանը զուգընթաց հավասարապես կիրառվում է նաև գրերի փորագրության ուղղանկյուն ոճը, այն համատարած գործածություն է ստանում հաջորդ դարերում:

Միաթավ գծերով գրամիջյան տարածությունների փորագրություններով վիմագիր արձանագրություններ են կատարվել՝ Ավանի (Աշտարակի շրջ.) 5-րդ դարի միասագ (միանավ բաղիլիկա) շինվածքով եկեղեցու հարավային կողմի դռներից մեկի (եկեղեցին արևմուտքից մուտք չունի) բարավորի խոնարհված քարի երկու բեկորների վրա (տողերն ուղղահայաց են, վերից վար), Բոլնիս իմազենի (Վրաստան, Բոլնիսի շրջ.) 5-րդ դարի դարձյալ սաղաչեն (հնգանավ բաղիլիկա) նշանավոր եկեղեցու մուտքերի բարավորների միակտուր քարերին և այլ հուշարձաններում: Փորագրության այդ եղանակի քանդակային բնույթը հավաստելու համար հիշենք նաև Զվարթնոց տաճարի, իր տեսակի մեջ նմանը չունեցող զամբյուղաքանդակ խոյակների կենտրոնադիր ճակատներում կատարված հունական գրերի փորագրությունները:

ԳՐԵՐԻ ՈՒՂԱՆՎՅՈՒՆ  
ՓՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ վիմագրության հնագույն փորագրության ոճն է: Փորագրության այդ եղանակում գրերն են փորագրվում և ներս ընկնում, և ոչ գրամիջյան տարածությունները, ինչպես նախորդ փորագրությունում: Այստեղ փորագրությունը կատարվում է բացառապես ուղղանկյուն հատումներով, և փորված մասերի հատակները ղուգահեռ են մնում փորագրվող հարթությանը: Եւ նույնիսկ անկախ փորվածքի խորությունից լույսի և ստվերի կտրուկ զանազանություն է առաջանում, և արձանագրությունն ընթեռնելի է դառնում թե՛ հեռավորությունից, և թե՛ աղոտ լուսավորության պայմաններում:

Ուղղանկյուն փորագրությունը գրավիչ է, պատկերակազմ, հաստ ու բարակ, ինչպես նաև տարբեր լայնություն միաթավ գծերով ազատ ընարություն հնարավորությունով, և հատկապես ուղիղ ու կոր գծերի, դուրս ելնող ու ներս ընկնող անկյունների ճշգրիտ ու խնամքով կատարված ուղղանկյուն հատումներով: Իսկ այդ անելու համար, որքան վարպետություն, նույնքան և զգուշավոր, անշտապ ու համբերատար աշխատանք է պահանջվում: Եւ որքան գրանշաններն են հստակ ու պարզ գծագրվում, այնքան էլ, դեռ ավելին՝ վրիպումները, անգամ մասնակի կտտրվածքներն են ակնառու դառնում, սուր արտահայտություն ստանում: Ուստի ուղղանկյուն փորագրությունում գրապատկերների ծանրացումները, նկարվածքի ճոխացումները, ոչ միայն անհարկի են, այլև՝ անընդունելի, այն լրացուցիչ վտանգավոր աշխատանք է և մերժելի թե՛ գեղագրության, թե՛ ճարտարապետության կողմից:

Վիմագրերի պարզ ու խիստ նկարվածքը, միասնական համաչափված գծագրությունը, ավելի կոթողային բնույթը և ակներխ արտահայտություն


յունն ուղղանկյուն փորագրությանն առաջնային և համատարած կիրառություն են տվել: Եւ, չնայած որ այդ փորագրության եղանակը քմահաճ է և ավելի վարպետություն պահանջող, դժվարին աշխատանք է, այդ եղանակով են փորագրվել և՛ բովանդակությամբ կարևոր, և՛ գեղագիտորեն փորագրվող, տեղին համապատասխանող շատ հիշատակություններ, այլ խոսքով, երբ արձանագրությունը գրավոր հիշատակություն լինելուց դատ ծառայել է նաև գեղարվեստական արտահայտչամիջոց, նրանով շքեղացրել, կարևորել են շինության որևէ մասը, հանդիսացել է որպես զարդարանք:

Ուղղանկյուն փորագրությունով բարձրարվեստ գրավոր հուշարձաններ են ստեղծվել հատկապես 7-րդ դարում: Առանց այդ վիմագիր արձանագրություններում կիրառված գրաձևերի ուսումնասիրության, մեր պատկերացումները մեսրոպաստեղծ գրերի պատկերների կազմության սկզբունքների մասին, կարող են միայն թերի լինել: Ուստի մեր խնդիրն է հավաքել (պատճենահանել վիմագրերը, նշել հիշատակության ժամանակը, բովանդակությունը, փորագրելու տեղը, եղանակը և այլն), համեմատել, ուսումնասիրել և ամբողջովին վերականգնել յուրաքանչյուր արձանագրության գրաձևերի շարքը: Միայն այդ անժխտելի սկզբնանյութի հիման վրա քննել և փորձել պարզել կատարվածի իսկությունը:

Այդօրինակ վիմագիր արձանագրություններ են փորագրվել՝ Եղվարդի 6-րդ դարում կառուցված եռասագ (եռանավ բաղիլիկ) շինվածքով եկեղեցու հարավային ճակատին (միատող), Վաղարշապատի 618-625 թ. Հայոց Կոմիտաս կաթողիկոսի կողմից կառուցած Սբ. Հռիփսիմե քառախորան կենտրոնազմբեթ տաճարում, Աթենի (Վրաստանի Գորիի շրջ.) 630-640 թթ. Թողոսակ ճարտարապետի կառուցած Սբ. Սիոն Հռիփսիմեատիպ եկեղեցում, Զվարթնոցի 642-652 թթ. Հայոց Ներսես Շինող կաթողիկոսի կառուցած կաթողիկեի արևի ժամացույցի քարին և այլ հուշարձաններում (տե՛ս ստորև): Բերված յուրաքանչյուր արձանագրության վիմագրերի ձևերին մանրամասն կանգրադառնանք առանձին:



Մեսրոպաստեղծ գրերը ըստ Աթենի 7-րդ դ. կենտրոնազմբեթ եկեղեցու Թողոսակ ճարտարապետի արձանագրության: Կազմեց՝ Լ. Սաղոյանը:



Մեսրոպաստեղծ գրերը ըստ Սբ. Հռիփսիմե եկեղեցու (618 թ.) Կոմիտաս կաթողիկոսի շինարարական արձանագրությունների: Կազմեց՝ Լ. Սաղոյանը:

Ա	Ժ	Ճ	Թ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Բ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Հ	Չ	Ի
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք

Մեսրոպաստեղծ գրերը ըստ Սր. Չվարթնոց տաճարի (642-652 թթ.) արևի ժամացույցի տառաձևերի: Կազմեց՝ Լ. Սաղոյանը:

Ա	Ժ	Ճ	Թ
Բ	Ի	Մ	Ս
Գ	Լ	Յ	Վ
Դ	Բ	Ն	Տ
Ե	Ծ	Շ	Ր
Զ	Կ	Ո	Յ
Է	Հ	Չ	Ի
Ը	Ձ	Պ	Փ
Թ	Ղ	Ջ	Ք

Մեսրոպաստեղծ գրերը ըստ Եղվարդի եկեղեցու (660 թ.) հարավային պատի արձանագրության: Կազմեց՝ Լ. Սաղոյանը:



### ԳԼՈՒԽ Բ.

#### ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Վ**իմագիր հիշատակություններ են կատարվել զանազան առիթներով ու ձևերով, բոլոր ժամանակներում և ամենատարբեր կառույցների առարկաների վրա: Մեսրոպակազմ գրապատկերները վերականգնելու համար ուշագրավ և հավաստի նյութ կարող են հաղորդել հատկապես վաղ միջնադարում կառուցված մեր պաշտամունքային շինությունների պատերը զարդարող մեկից ավելի հիասքանչ փորագրությունով և ամենատարբեր բովանդակություններով կատարված վիմագիր արձանագրությունները: Անկախ այն բանից, թե ուր են փորագրվել՝ տապանաքարին, թե աշխարհիկ շինությունների պատերին, վիմագիր արձանագրությունները նշանավոր կառուցումների և վերաշինումների, ինչպես նաև հիշարժան դեպքերի ու դեմքերի առթիվ կատարված գրավոր հիշատակություններ, հավերժացումներ լինելուց դատ, նաև յուրովի ճարտարապետական մանրամասնի դեր են կատարել: Վիմագիր արձանագրություններով զարդարել և կարևորել են շինության տարբեր մասերը (մուտքեր, կամարներ, բարավորներ և այլն), զրանք ծառայել են որպես գեղարվեստական արտահայտչամիջոց:

Վիմագիր արձանագրությունների ընդհանուր տեսքը, վիմագրերի չափերը, ձևերն ու նկարվածքն ամբողջովին պայմանավորված է, նույնիսկ պարտադրված, այն բանից, թե շինության ո՞ր մասում, և ինչպիսի՞ պայմաններում է այն փորագրվելու, այդ նպատակով հատուկ առանձնացված և ճարտարապետական ձևավորմամբ սահմանադատված տեղում, թե՞ բոլորովին ազատ տարածությունում, անկախ պայմաններում, որպիսի բովանդակություն ունի (շինարարական, նվիրատվական, ծիսա-կանոնիկ և այլն) և ինչպիսի մասնակցություն է ունենալու այն շինության արտաքին, կամ ներքին տեսքի ձևավորման գործում: Այդ բոլորից հետո միայն կազմվել են վիմագրերի չափերը, սողի բարձրությունը, հաշվի են առնվել լուսավորությունը, քարի գույնը, որոնց համապատասխան և ընտրվել է փորագրության եղանակը (ուղղանկյուն, սեպաձև և այլն): Ահա սրանք են այն հիմնական հարցերը, որոնցով իրականում կանխորոշվել են գրերի ձևերը, նկարվածքը, համաչափությունները, այն է՝ վիմագրերի լայնություն և բարձրություն: Հարաբերությունը: Այլ խոսքով՝ արձանագրությանը հատկացված տեղով, և նրանում փորագրվող

գրերի քանակով են որոշվել և կազմվել գրապատկերների և՛ նկարը, և՛ կազմութունը: Ուստի մի դեպքում գրանշանները ստացվել են նեղ ու ձգված, մեկ այլ դեպքում՝ լայն ու ճապաղած, իսկ երրորդ դեպքում՝ բոլորովին ազատ ու անկաշկանդ կազմված համաչափություններով: Ահա այս վերջին, անկախ պայմաններում է, որ վիմագրերն առավել հավաստի նյութ կարող են հաղորդել սկզբնական գրապատկերների մասին, մանավանդ, երբ արձանագրութունը կազմել և նրա փորագրությանը հետևել են ժամանակի նշանավոր անհատները: Հետևաբար, ազատ ու անկաշկանդ պայմաններում փորագրված վիմագիր արձանագրություններում կիրառված գրանշանների կազմության ուսումնասիրությունը, հատկապես երբ այն նաև ճարտարապետական խնդիրների լուծման միջոց է ծառայել, բացառիկ կարևորություն է ստանում իսկատիպ գրապատկերները վերականգնելու գործում:

ՄԻԱՏՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ հետաքրքրող V-VII դդ կատարված վիմագիր հիշատակությունները միանգամայն տարբեր տեղադրություններ ունեն: Այդ դարերին բնորոշ և գեղագիտորեն կանխամտածված տեղադրություններից առաջինը և գնահատելին արձանագրության միատող դասավորությունն է, երբ այն մեկ տող կազմած, դյուրընթեռնելի բարձրությամբ ժապավենաձև տարածվում է շինության որևէ ճակատի վրա, և կամ իր անխզելի ընթացքի մեջ առնելով պատուհանների պսակներն ու որմնասյուների խոյակները, արտաքնապես բոլորելով գոտեորում է շինության ճակատները: Արձանագրության այդօրինակ տեղադրությունն այն աստիճան հանդիսավոր և տպավորիչ տեսք է ստանում, որ հիշատակությունը լավագույնս ներկայացնելուց և կարևորելուց զատ, նաև գեղարվեստական կարևոր նշանակութուն է ստանում: Վերջին հանգամանքն այն աստիճան ակնառու է, որ իրավամբ գրավել է ճարտարապետության հարցերով զբաղվողների ուշադրությունը և այդ ուղղությամբ հատուկ ուսումնասիրություններ են կատարվել: Ահա այդ նպաստավոր և պատասխանատու պայմաններում է, որ վիմագրերի միաչափված և միանկարված պատկերներ են առաջացել: Եթե ասվածին ավելացնենք նաև կարծր նյութի հատկությունից և փորագրության եղանակից բխող սահմանափակումները ևս, ապա կարող ենք անվերապահորեն ընդունել, որ միատող արձանագրություններում պահանջվել է ներկայացնել միայն կարևոր և գեղագիտորեն ներդաշնակել ամբողջը: Այստեղ բացառվում է գրապատկերների ծանրացումը, այն ավելորդ ու անհարկի աշխատանք է, գրանշանների գծագրությունը պարզ է ու խիստ, քան որևէ այլ պայմանում կարող է լինել: Խնդիրն առավել գրավիչ կարող է լինել, եթե հաջողվի պարզել, որ արձանագ-

րության փորագրությունը հսկել և կամ գրանշանները կազմելուն մասնակցել են ժամանակի բարձրաստիճան անձիք, քանի որ այդ հարցում նրանց և՛ իմացությունն էր ավելի, և՛ հարգալից են եղել:

Այդ շրջանից մեզ հայտնի և հետաքրքրող հնագույն միատող վիմագիր արձանագրություններից ամենանշանավորը և ուշագրավը Եղվարդի եռասագ հորինվածքով եկեղեցու հարավային ճակատով մեկ տարածված խոշորագիր, ուղղանկյուն փորագրությունով, բարեկազմ համաչափություններով անանց գեղեցկության արձանագրությունն է<sup>1</sup>: Մեսրոպաստեղծ հայոց գրերի բարձրարվեստ նկարվածքով ու կազմությունով այդ եզակի գրավոր հուշարձանն իրավամբ իր ուրույն տեղն ունի համամարդկային գրի արվեստի պատմությունում, արժանի և՛ հատուկ խնամքով պահպանելու, և՛ նաև հպարտությամբ ներկայացնելու:

Այս, ինչպես նաև հաջորդ ուսումնասիրվող արձանագրությունների տեղից հանված վիմագրերի պատճենները, և ամբողջապես կազմված այբուբենները կներկայացնենք նրանցից յուրաքանչյուրի գրապատկերների կազմության առանձին քննություններով<sup>2</sup>:

Միատող արձանագրություններ են փորագրվել Օծունի (Այսվերդու շրջան) գմբեթավոր սագաշեն սրահ եկեղեցու արևելյան ճակատին, Աշտարակի Կարմրավոր (VII դ.) քառաթև գմբեթավոր եկեղեցու, Գեղարքունիքի մեծ աիկին Մարիամի՝ IX դ. վերջին կառուցած Շողագա կոչվող եռախորան գմբեթավոր վանքի (Մարտունու շրջ. Չորագյուղ) ճակատներին և այլ հուշարձաններում:

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիմագիր արձանագրությունների հաջորդ տարածված տեղադրությունը՝ կենտրոնադիր տեսքով, հատուկ ձևավորված և առանձնացված տարածություններում կատարված փորագրություններն են: Այդօրինակ

<sup>1</sup> Ըստ այդ արձանագրության կազմված այբուբենը տե՛ս այստեղ: Արձանագրության պատկերն ու վերծանությունը տրված են Պ. Մուրադյանի Եղվարդի ծածկագիր արձանագրությունը («Երևանի համալսարան», 1974, N1, էջ 36-40) և «Պալեոգրաֆիկ ուսումնասիրության արդյունքները» («Երևանի համալսարան», 1976, N1, էջ 47-52) հրապարակումներում:

<sup>2</sup> Եղվարդի եռասագ հորինվածքով եկեղեցու՝ միատող, Վաղարշապատի Յոնիսիմե եկեղեցու (618-625), Կոմիտաս կաթողիկոսի՝ շինարարական, Աթենի Սիոն եկեղեցու (630-640, Վրաստան, Գորիի շրջան, ըստ ամենայնի Յոնիսիմետատիպ), Թողոսակ ճարտարապետի՝ շինարարական և Չվարթնոց կաթողիկե տաճարի (642-652) արևի ժամացույցի բարին փորագրված արձանագրություններում կիրառված վիմագրերի հիման վրա մեր կազմած մեսրոպյան գրերի այբուբենները տեսանելի դարձնելու, ինչպես նաև լայն կիրառության մեջ դնելու և անհարկի կատարվող աղճատումների դեմն առնելու նպատակով տպագրել ենք. Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1981, էջ 53, 54, 148, 222: Էդ. Աղայան, Մեսրոպ Մաշտոց, Эд. Агаян, Месроп Маштоц, Ed. Aghaian, Mesrop Mashtots, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1986:

տեղադրություններից հատկանշական է Ներսեսաշեն Զվարթնոց կաթողիկէ տաճարի (642-652) արտակարգ շքեղ, իր տեսակի մեջ եզակի արևի ժամացույցի միակտուր քարին փորագրված երկու կարգ վիմագրերը: Առաջին հայացքից դժվար է նկատել, որ բոլորակի վերին կեսում փորագրված ծիսա-կանոնական բնույթի արձանագրության վիմագրերը հատկացված տեղի և նրանում փորագրվող գրանշանների քանակի հետևանքով լայնապատկեր են ստացվել, իսկ բոլորակի ստորին կեսում, ուր փորագրված են ժամերն արտահայտող գրանշանները, կազմվել են միմյանցից անկախ պայմաններում, ուստի գրապատկերները և՛ բարեկազմ են, և՛ գեղանկար: Վիմագրերի պատճենները և այդ գրատեսակի ամբողջովին լրացված այբուբենը կներկայացնենք առանձին:

Այսօրինակ տեղադրություններ ունեն Վաղարշապատի Սբ. Հռիփսիմե տաճարի (618-625) կառուցման հովանավորի և շինող-ճարտարապետի հայոց Կոմիտաս կաթողիկոսի թողած երկու շինարարական բնույթի արձանագրությունները, որոնցից առաջինը տեղադրված է տաճարի արևմտյան ճակատին, իսկ երկրորդը՝ ավագ խորանի ներսում, կենտրոնական լուսամուտների վերին մասում, այդ նպատակով հատուկ տեղադրված և պատի հարթությունից դուրս բերված քարերի վրա: Այս վիմագրերից կազմված այբուբենը ևս կներկայացնենք առանձին\*: Մաստարայի (Թալինի շրջ.) Սբ. Հովհաննես քառախորան խաչածե կենտրոնագմբեթ եկեղեցու (VI դ. վերջ) արևմտյան խաչաթև, գլխավոր շքամուտքի վերևում, հատուկ ձևավորված ընդարձակ տարածությունում փորագրված VII դ. թվագրվող արձանագրությունը: Առուծի (Աշտարակի շրջ.) 666-667 թթ. կառուցված Սբ. Գրիգոր գմբեթավոր սրահ տաճարի կառուցող, Հայաստանի մարզպան Մամիկոնյան Գրիգոր իշխանի շինարարական բնույթի արձանագրությունը, տեղադրված է արևելյան ճակատի կենտրոնական լուսամուտի ներքևի մասում, այդ նպատակով հատուկ ձևավորված միակտուր քարի վրա փորագրված և այլ հուշարձաններում:

**ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՎԵՂՈՒՄ ՄԱՍԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վիմագիր արձանագրությունների երրորդ, նույնպես տարածված տեղադրություններից են շքամուտքերի ճակատակալ քարերին, բարավորների, կամարների, որմնասյուների և ճարտարապետական այլ կարևոր մասերի վրա կատարված փորագրությունները: Անշուշտ այդպիսի մոտեցումը հիշատակության հանդիսավոր ներկայացում է նշանակում, սակայն փորագրության ակնառու տեղին համապատասխանելու հանգամանքն իր հերթին նաև առաջ է բերել վիմագրերի համապատասխան

\* Խոսքը վերաբերում է հեղինակի սույն աշխատության ծրագրված, բայց չգրված երրորդ մասին («Գրապատկերներ կազմելու մեսրոպյան սկզբունքները») - (Ա. քնն. Գ.):

կազմություն, նկարվածք և փորագրության ոճ, որի հետևանքով և կազմվել են, մանավանդ, երբ հիշատակությունը կարճառոտ է եղել, արտակարգ պարզ ու խիստ գրապատկերներ, որը գնահատելի է սկզբնաստեղծ գրապատկերները վերակազմելու համար: Այդօրինակ հիշատակություններ են կատարվել Օձունի վերը նշված եկեղեցու շքամուտքի ճակատին, Սիսիանի Սբ. Հովհաննես քառախորան կենտրոնագմբեթ, ըստ ամենայնի, Հռիփսիմեատիկ եկեղեցու (VII դ.) արևելյան խորանի աջ և ձախ որմնասյուների երեսին: Չնայած ուշ շրջանի, սակայն գեղագրության արվեստի մի կատարյալ ցուցանմուշ է Սյունյաց մեսրոպոլիտ պատմագիր Ստեփանոս Օրբելյանի կողմից 1295 թ. Տաթևի վանքին հարավից կից կառուցված Սբ. Գրիգոր Լուսավորիչ սագաշեն եկեղեցու արևմտյան մուտքի ճակատակալ միակտուր քարին փորագրված շինարարական բնույթի արձանագրությունը: Հատկանշական է, որ արձանագրությունը կազմել և, չենք կասկածում, որ նաև նրա փորագրությունը կատարվել է պատմագրի անմիջական ցուցումներով և հսկողության ներքո:

**ԽԱՌՆ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վիմագիր արձանագրությունների վերջին խումբը պայմանականորեն անվանենք խառը դասավորություններով կատարված փորագրություններ: Այդ մեծավ մասամբ նախապես չծրագրված, շինության որևէ մասի զարդարման կամ ձևավորման հետ կապ չունեցող, երբեմն միանգամայն պատահական և ոչ ակնառու, նույնիսկ թաքնված կամ աչքից հեռու տեղերում, տարբեր ծավալի և չափերի փորագրություններն են: Ազատ տեղադրված և անկաշկանդ փորագրված, հաճախ խտագիր, փակագիր կամ ծածկագիր, նույնիսկ միայն մեկ անուն պարունակող այդ հիշատակություններն արժեքավոր են, ինչպես գրապատկերների պարզ գծված լինելու, այնպես և գեղագրության առումով: Հիշատակության հակիրճ լինելու, երբ նրա փորագրումը մեծ աշխատանք էի պահանջել, և անկաշկանդ փորագրված լինելը երբեմն որոշ գրանշանների արտակարգ գեղագիր պատկերն է առաջացրել, իսկ կցագրումների և խտագրումների միջոցում ուշագրավ պատկերամիացումներ են կատարվել (տեղի տնտեսման նպատակով գրանշանների ուշագրավ խտագրումներ են կատարվել նաև նախորդ տեղադրություններում): Եթե առաջինը կարևոր է գրապատկերների գծագրության ընթացքին հետևելու համար, ապա փակագրումներն և կցագրումները գնահատելի են գծի կրկնակի եռակի անգամ օգտագործվելու երևույթով: Այդ միջոցը սահմանափակ է, ձևով՝ դուսպ, գծի գործածությամբ՝ ժլատ, հանգամանքներ, որ բերում են անհրաժեշտ պատկերում միայն և ոչ ավելին, ուստի և գրապատկերների գծագրության պարզեցում է առաջանում:

Այդ հակիրճ փորագրություններում, թեև ոչ բոլոր գրանշաններն են կիրառվել, սակայն եթե կիրառվել են գրերի յուրաքանչյուր նկարվածքային խմբից գեթ մեկական գրանշան, որոնց թիվն ընդամենը յոթն է, ուրեմն հնարավոր է վերականգնել այդ գրերի շարքը: Խնդիրը կարող է ավելի դյուրին լինել, երբ այդօրինակ փորագրությունները նույն հուշարձանից լինեն, նույնիակ տարբեր, եթե նրանք կառուցման ժամանակով և վայրով իրարից հեռու չեն: Որքան էլ կարճառոտ այդ փորագրություններում կիրառված վիմագրերի համեմատությունների և լրացումների միջոցով հնարավոր է, թեկուզ և ընդհանուր գծերով գաղափար կազմել հնագույն գրաձևերի մասին: Այդ տեսակետից հատկանշական օրինակ է VI դ վերջին տասնամյակով թվագրվող<sup>1</sup> և հարեանությամբ կառուցված, նույնատիպ հորինվածքով Ավանի Կաթողիկե և Արամուսի Ծիրանավոր (Աբովյանի շրջ.) գմբեթավոր եկեղեցիների պատերին կատարված, թեև միայն մեկ անուն պարունակող, սակայն խիստ միտոճ գծագրությունով, նույնիակ մի ձևով գործ հիշեցնող փորագրությունները<sup>2</sup>: Նկատենք նաև, որ հիշատակված են այնպիսի աստիճանավոր կրոնականների անուններ, որոնք չէին կարող անմասն մնալ դրան, թեկուզ այն նրանց նախապես հայտնելու իմաստով, իսկ եթե փորագրվել է նրանցից հետո, ապա պետք է ենթադրել, որ այն կատարվել է նույնպես համապատասխան աստիճանավորների կողմից, կամ էլ նրանց իմացությամբ: Այդ հանգամանքը ինչպես կտեսնենք մեր հետագա քննություններում\*, իր գնահատելի ազդեցությունն է թողել մեսրոպաստեղծ գրապատկերների և՛ պահպանման, և՛ անաղարտ ներկայացնելու գործում:

Համեմատաբար ավելի ընդարձակ են եզր կաթողիկոսի (630 թ.) անունը հիշատակող, երկլեզու (հայերեն և հունարեն), ծածկագիր և թողոսակ ճարտարապետի շինարարական արձանագրությունները: Առաջինը հայտնաբերվել է Ավանի կաթողիկեի արևելյան կողմում փլատակների մաքրման ժամանակ (ցուցադրվում է Հայաստանի պատմության թանգարանի միջնադարի արվեստի բաժնում), իսկ երկրորդը փորագրված է Աթենի (Վրաստանի Գորիի շրջան) տեղի հայ համայնքի եպիսկո-

<sup>1</sup> Հուշարձանների թվագրումները տես Ա. Բ. Еремян, *Храм Рупсимэ*, АрмГИЗ, Ереван, 1955, с. 100; А. Բ. Еремян, *К вопросу о датировке кафедральной церкви в Аване*. - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, N. 3 (310), էջ 60:

<sup>2</sup> Փորագրություններից առաջինը կատարվել է Ավանի կաթողիկեի արևելյան ճակատին, մարդաստակ բարձրության վրա, իսկ երկրորդը Արամուսի Ծիրանավոր եկեղեցուց 100մ արևմուտք, ուշ շրջանում հուշարձանապատկան քարերով շինված անշուք եկեղեցու արևելյան ճակատի ստորին շարքում տեղադրված քարի վրա: Իդեալ ասենք, որ ԳԱ պրեզիդենտ և հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահ ակադ. Յ. Ա. Օրբելու հանձնարարությամբ 1943 թ. պեղել, չափազրել և մասնակի ամրացրել ու վերականգնել ենք Արամուսի Ծիրանավոր եկեղեցու հյուսիսարևելյան կիսավեր մասը: Հուշարձանի չափագրությունն առաջին անգամ տպագրվել է Ա. Բ. Երեմյանի վերը հիշված, «Յոթիսիմեի տաճարը» աշխատությունում:

\* Խոսքը վերաբերում է հեղինակի սույն աշխատության ծրագրված, բայց չգրված Երրորդ մասին («Գրապատկերներ կազմելու մեսրոպյան սկզբունքները») - (Ա. քին. Դ.):

պոսական, նույնատիպ հորինվածքով Սիոն եկեղեցու (630-640) հարավային ճակատի աջակողմյան խորշի պատին: Նկատենք, որ առաջինի ուր փորագրված լինելը ստույգ հայտնի չէ, հայտնի է միայն, որ այն դավանաբանական բնույթ ունի, սակայն այն, դեռևս անժամանակ նկատված լինելով, ծածկագրվել է, իսկ դա նշանակում է, որ արձանագրությունը սկզբնապես ազատ ընթեռնելի չէր, կամ ոչ բոլորին էր այն հասկանալի, ուստի ակնառու տեղում էլ չի փորագրվել: Հակառակ առաջինի՝ կանոնիկ կազմությունով երկրորդ արձանագրությունը փորագրվել է՝ ներկայացնելու և ընթերցելու համար ավանդաբար ընդունված և՛ մարգաշատ, և՛ լուսավոր կողմում՝ հարավային գլխավոր մուտքի մոտ, մարդահասակ բարձրության վրա: Ակներև է այս երկու արձանագրությունների ինչպես տեղադրման վայրի, այնպես և բովանդակությունների տարբերությունը, իսկ հուշարձաններն էլ իրարից անկախ և հեռու վայրերում են կառուցվել: Սակայն որքան էլ որ այդ արձանագրությունները միաժամանակ և միտոճ են փորագրվել (631-640 թթ., ուղղանկյուն), այդուհանդերձ, նրանցում գրաձևերը խիստ տարբեր են և ինքնատիպ: Հիշենք միայն, որ ճարտարապետ Թողոսակը չէր կարող անմասն մնալ իր իսկ անունով թողած շինարարական արձանագրության վիմագրերի կազմման և փորագրման գործին: Արձանագրության տեղից հանված պատճենի հիման վրա ամբողջովին վերականգնված այբուբենը ևս կներկայացնենք հարցի առանձին քննությունում<sup>2</sup>:

Սկզբնաստեղծ գրապատկերների վերականգնման հարցում օգտակար նյութ կարող են հաղորդել նաև V-VII դդ. կառուցված հուշարձանների քարերին փորագրված քարգործ վարպետների և խմբերի մեսրոպագիր նշանները: Վարպետանշան գրերը փորագրվել են կառուցման ընթացքում, արագ կերպով, երբեմն նույնիսկ անփույթ, նրանցում գրապատկերների գծագրությունը պարզ է ու հստակ: Վարպետանշաններում ևս անունների փակագրումներ և անվանատառերի կցագրումներ են կատարվել: Երբ նրանց չի թույլատրվել պաշտամունքային շինության պատերին իրենց ձևով գործը վկայող անուններ փորագրել, ապա քարգործները դիմել են անունները փակագրելու միջոցին, ավելին, հաճախ ոչ մեծ չափի գրերով և աննշան փորվածքով, երբեմն միայն գծային եղանակով կարճառոտ հիշատակություններ են կատարել շինության աննկատ, գրեթե թաքնված տեղերում: Այդ փորագրությունները կարևոր են նաև գրաձևերը ոճային-գծագրական առանձնահատկություններով տեսակավորելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան, *Երևան. միջնադարյան հուշարձանները*, Երևան, 1975, էջ 190-192:  
<sup>2</sup> Արձանագրության գրչանկար պատճենը տես՝ Ս. Մ. Мурадян, *Армянская надпись храма Джвари*. - «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, N3 (310), 1969, ներդիր 79 և 77 էջերի միջև:  
<sup>3</sup> Գրատեսակների անունների և փակագրերի մասին մանրամասն տես՝ Կարո Ղաֆաղարյան, *Հայկական գրերի սկզբնական տեսակները*, ԱրմՖան., Երևան, 1939:

Երբ քարգործ վարպետների անվանատառերը համընկել են, ասենք Գրիգոր և Գևորգ է եղել, իսկ այդ հաճախ է նկատվում VII դ. կառուցված հուշարձանների վարպետանշաններում, այդ դեպքում նրանք ստիպված դիմել են նշան-գրերը դժագրական հատկանիշներով զանազանելու միջոցին, մեկ գրանշանը փորագրվել է բոլորաձև երկաթագրով (Գ), մեկ էլ՝ ուղղագիծ երկաթագրերով (Գ): Այդ երևույթը վկայում է VII դ. երկու գրաոճերի հավասարապես կիրառվելու փաստը: Իսկ թե որ գրաոճը, երբ է ստեղծվել և ինչպիսի գործածություն համար՝ խնդրին կանգրադառնանք առանձին:

Երբ քարգործն անուն վաստակած արհեստավորի հետևորդն է, նրա գործի արժանավոր շարունակողը, գուցե և հարազատը (հնում արհեստները ժառանգաբար փոխանցվում էին), երբեմն պահպանել են իրենց նշանավոր նախորդի ճանաչում գտած նշան-գրերը և նրանց են ավելացրել իրենցը ևս, տեղի է ունեցել երկու անվանատառերի պարզ միացում: Այդ մոտեցումը կարող էր նշանավոր քարգործի աշխատանքի մեկ վատահելի շարունակման հավաստում նշանակել, իհարկե նաև հովանավորվել նախորդի բարի համբավով. մեկ էլ երախտիքի պարզ դրսևորում լինել: Բոլոր դեպքերում գրանշանների այդօրինակ միացումները փակագրություններ չեն և որպես այդպիսին անվերծանելի են:

Երկրի հողերը կենտրոններում կատարվող սրբատների կառուցման պատվին կձգտեին հավատացյալ (իհարկե նաև գործնական նկատառումներով) ոչ միայն նշանավոր քարգործները, այլև նրանց արհեստավորական խմբերը: Եւ այդ հողերը ու կենսական խթանումները քարգործներին պիտի մղեին իրենց նշաններից զատ փորագրել նաև մի անուն կամ արևշատության կարճառոտ աղբրսանք՝ ուղղված առ Աստված: Բնավ պատահական չէ, երբ փոքր չափերի և գծագրական տարբեր ոճերով այդպիսի փորագրություններով հարուստ են հատկապես Վաղարշապատում կառուցված հուշարձանները: Ահա այդ նշան-գրերի, անունների, փակագրությունների ու զանազան հիշատակությունների կանոնակարգված ձևով հավաքելու և հետազոտելու ոչ դյուրին, ժամանակ խոզ, բայց և բացառիկ կարևորություն ունեցող աշխատանքը անհրաժեշտ է ոչ միայն մեսրոպյան գրատեսակները զանազանել, այլև պաշտամունքային շինությունների, և ոչ միայն նրանց կառուցման ժամանակը ճշտելու, քարգործներին ու նրանց խմբերին ճանաչելու և նրանց գործունեությունը հետամուտ լինելու, ինչպես նաև աշխատանքների կազմակերպման ու վարձատրության ձևերին ծանոթանալու համար: Այստեղ նյութն անաղարտ է, ճիշտ է դժվարախոս, բայց և չափազանց խոստումնալից:



[ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ]

ա. սկզբնաղբյուրներ

1. Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի աշխարհաբար թարգմանությունը՝ Ա. Տեր Ղեւոնդյանի, ԵՊՀ, Երևան, 1983:
2. Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիր ձեռագրային ընթերցումներով, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով ակադ. Մանուկ Աբեղյանի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1981:
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, ԵՊՀ, Երևան, 1989:
4. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Մալխասյանի, աշխարհաբար թարգմանությունը՝ Բ. Ուլուբաբյանի, ԵՊՀ, Երևան, 1982:
5. Մովսիս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգ՝ Ս. Մալխասյանի, ԵՊՀ, Երևան, 1981:

բ. ուսումնասիրություններ

1. Աղայան Է., Մեսրոպ Մաշտոց, Эд. Агаян, Месроп Маштоц, Ed. Aghaian, Mesrop Mashtots, ԵՊՀ, 1986:
2. Աբեղյան Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, Երևան, 1981:
3. Աղոնց Նիկաղայոս, Մաշտոց և նորա աշակերտներն ըստ օտար աղբյուրների, Մեսրոպ Մաշտոց, հողվածների ժողովածու, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962:
4. Աղայան Է., Նախամաշտոցյան հայ գրերի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, խմբագրությամբ Էմ. Պիվազյանի, ԵՊՀ, Երևան, 1977:
5. Աճառյան Յր., Հայոց գրերը, խմբագրությամբ՝ ակադ. Էդ. Աղայանի, ԵՊՀ, Երևան, 1984:
6. Խաչիկյան Լ., Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, «Բանբեր Մատենադարանի», N 7, Երևան, 1964:
7. Ղաֆաղարյան Կ. Գ., Երևան. միջնադարյան հուշարձանները, Երևան, 1975:
8. Մարկվարտ Յ., Հայոց այբուբենի ծագումը և Մ. Մաշտոցի կենսագրությունը, Մեսրոպ Մաշտոց, հողվածների ժողովածու, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962:
9. Մարտիրոսյան Ա., Մաշտոց պատմա-բաղաբական տեսություն, խմբագրությամբ՝ ակադ. Լ. Խաչիկյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982:
10. Սևակ Գ., Մեսրոպ Մաշտոց, Հայկական գրերի ու մատենագրության սզբնավորումը, Հայպետհրատ, Երևան 1962:

ԼԻՊԱՐԻՏ ՍԱԴՂՈՅԱՆ

**ՄԵՍՐՈՊԱՍՏԵՂԾ ՀԱՅՈՑ  
ԳՐԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ  
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

*Հրատարակության պատրաստեցին՝  
Տ. Արարատ քին. Պողոսյան, Հայկ Մաղոյան*

*Խմբագիր՝ Ա. Մաղոյան*


**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՎՇԻՆ  
Ս. ԷԶՄԻՎՇԻՆ - 2018**

- |                                 |  |
|---------------------------------|--|
| Հրատարակչական բաժնի տնօրեն՝     | Տ. Արարատ քահանա Պողոսյան  |
| Հրատարակչական հտրհրդի անդամներ՝ | Տ. Գևորգ եպս. Մարոյան,<br>Տ. Չաքարիա Ծ. վրդ. Բաղումյան,<br>Տ. Գարեգին վրդ. Համբարձումյան,<br>Արշակ Մաղոյան,<br>Գևորգ Տեր-Վարդանյան |
| Լեզվաոճական խմբագիր՝            | Սոֆյա Առուշանյան   |
| Շարվածքը՝                       | Թամարա Առուստամյանի  |
| Էջադրումը՝                      | Տ. Ղևոնդ ավ. քահանա Մայիլյանի  |

ISBN 978-9939-59-218-3



9 789939 592183





4(47.925)

Ս-12

հ<sub>2</sub>



ԼԻՊԱՐԻՏ ՍԱՂՈՅԱՆԸ (1917–1992) հայտնի ճարտարապետ և շինարարական արվեստի հմուտ պատմաբան էր, անզուգական գրաստեղծ ու գրքի ձևավորման ճանաչված վարպետ: 1942 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտն՝ ստացել ճարտարագետ-շինարարի որակավորում, 1944 թ.-ից ճարտարապետների միության անդամ է: 1988 թ. Հուշարձանների պահպանության վարչության անդամ: 1986–1992 թթ. կազմել է Ձվարթնոց տաճարի մասնակի վերականգնման, պահպանման և բարեկարգման մախագծերը:

1958–1987 թթ. Երևանմախագիծ ինստիտուտի ճարտարապետական արվեստանոցի ղեկավար: Հեղինակ-ճարտարապետ է մի շարք հասարակական, քաղաքային, գի-

տական նշանակության շենքերի և կառույցների: Կյանքի վերջին տարիներին երկու ձեռնարկ էր փափագում՝ Ձվարթնոց տաճարի գիտականորեն հիմնավորված մասնակի վերականգնումն ու մեսրոպաստեղծ գրի ու գրչության ստեղծագործական աշխատանոցի ճանաչումը: Ցավալիորեն երկուսն էլ անավարտ մնացին. մի դեպքում՝ ժամանակ չունեցավ պատճենելու իր նախընտրած կարևորագույն վիճագրերը, մյուսում՝ մախախնամության կամոք Ձվարթնոցի սյուների տակ ավանդեց հոգին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: